

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Հակոբյան Արման Եղիշի

«ԲԱԲԵԼՈՆ» ՀԱՅԱԼԵԶՈՒ ԱՍՈՐԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ  
ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԵԶԱԿԻ ՆՄՈՒՇ

## Ատենախոսություն

Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝  
բ.գ.թ., դոցենտ Ս. Բ. Կարաբեկյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատկերների ցանկ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ 1. «ԲԱԲԵԼՈՆԻ» ԱԶԳԱՅԻՆ-ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱՎԱՅՐԸ 13

- 1.1. Ասորական պատմության և հարանվանական բաժանման հակիրճ ակնարկ 13
- 1.2. Հայկական *գարշունի*-ն և ուշ միջնադարի ասորական հայախոս համայնքները 21
- 1.3. Ասորիները XIX-XX դդ. Օսմանյան կայսրությունում և Իրանում 32
- 1.4. Խարբերդի հայախոս ասորիները 39
- 1.5. Խարբերդի ասորիներն ԱՄՆ-ում 57

ԳԼՈՒԽ 2. «ԲԱԲԵԼՈՆԻ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 67

- 2.1. Ընդհանուր բնութագիր 67
- 2.2. Մշտական բաժիններ 68
  - 2.2.1. Տիտղոսագլուխներ և տիտղոսաթերթեր 69
  - 2.2.2. Խմբագրականներ 72
  - 2.2.3. Պաշտոնական հաղորդագրություններ 74
  - 2.2.4. *Մավրոնութո Տասուրոյո* 75
  - 2.2.5. Այլ հաղորդագրություններ և նամակներ 76
  - 2.2.6. *Մէն Ըլլէլ Մէն Ըլքո / Պուրապան-Շուրապան* 78
  - 2.2.7. Հայտարարություններ և գովազդ 81

ԳԼՈՒԽ 3. «ԲԱԲԵԼՈՆԻ» ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 84

- 3.1. «Բաբելոնի» հայերենը 84
- 3.2. Ասորական լեզվական նյութը «Բաբելոնում»: Ասորական բառացանկեր 88
- 3.3. Ասորական լեզվական նյութն ըստ խոսքի մասերի. 98
  - 3.3.1. Գոյականներ 98
  - 3.3.2. Ածականներ 98
  - 3.3.3. Թվականներ 99
  - 3.3.4. Բայեր 103
  - 3.3.5. Դերանուններ 106
- 3.4. Ասորական լեզվական նյութի հիմնական թեմատիկ խմբերը 107
  - 3.4.1. Ասորական տառերի անվանումները 107
  - 3.4.2. Ամիսների ասորական անվանումները 108
  - 3.4.3. Շաբաթվա օրերի ասորական անվանումները 110
  - 3.4.4. Հոգևորականների տիտղոսներ 111

- 3.4.5. Կրոնին վերաբերող այլ հասկացություններ 112
  - 3.5. Ասորական արտահայտություններ և ամբողջական նախադասություններ 113
  - 3.6. Ասորական բառերի հայերեն տառադարձության հիմնական սկզբունքները 115
    - 3.6.1. Bagad-Kapat խմբի միջատամնային շփականներ 115
    - 3.6.2. Կոկորդային բաղաձայններ և շվա 117
    - 3.6.3. Էմֆատիկ բաղաձայններ 120
    - 3.6.4. Այլ բաղաձայններ 120
    - 3.6.5. Շվա-ի մետաթեզ (դրափոխություն) 121
    - 3.6.6. Ավանդական արտասանության պահպանումը 124
  - 3.7. Ասորական բառերի ինտեգրումը հայկական տեքստի մեջ 125
  - 3.8. Ասորական գիրը «Բաբելոնում» 128
    - 3.8.1. Ասորական պատմաաշխարհագրական տեղանուններ 128
    - 3.8.2. Ասորական վանքերի, եկեղեցիների և գյուղերի անվանումներ 130
    - 3.8.3. Կազմակերպությունների և հաստատությունների անուններ 130
    - 3.8.4. Անձնական անուններ 131
    - 3.8.5. Կրոնական արտահայտություններ 132
    - 3.8.6. Ասորական տառերի գործածումը պարբերություններ նշելու համար 133
  - 3.9. Ասորական տարրերն ասորատառ թուրքերեն հոդվածներում 134
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 136
- ՀԱՎԵԼՎԱԾ 1. «Բաբելոնում» արձանագրված ասորերեն բառերի ցանկ-կոնկորդանս 140
- ՀԱՎԵԼՎԱԾ 2. «Բաբելոնի» կառուցվածքն ու ասորական լեզվանյութն ըստ առանձին համարների 151
- Օգտագործված գրականության ցանկ 182

## Պատկերների ցանկ

Պատկեր 1. Mingana syr. 44 ձեռագիրը .....	24
Պատկեր 2. Ms. Harvard Syriac 54 ձեռագրի նախաբանի վերարտադրությունը .....	25
Պատկեր 3. Ms. Harvard Syriac 54 ձեռագրի նախաբանի հայերեն տառադարձությունը ...	26
Պատկեր 4. Մեկ էջ Յեյլի համալսարանի ձեռագրից .....	27
Պատկեր 5. Մեկ էջ Մալկե բար Նիկողիմոսի ձեռագրից .....	28
Պատկեր 6. Մալքե բար Նիկողիմոսի ձեռագրի ասորատառ արաբերենով հիշատակարանը .....	29
Պատկեր 7. Vat. Syr. 544 ձեռագրի «Հավատամքի» վերարտադրությունը .....	30
Պատկեր 8. «Բեթնահրին» պարբերականի բառացանկերից մեկը .....	32
Պատկեր 9. Խարբերդի «Ասորվոց թաղը» .....	42
Պատկեր 10. Խարբերդի Վերի թաղն ու «Եփրատ» քոլեջի համալիրը .....	53
Պատկեր 11. Աշուր Յուսուֆի դիմանկարը Assyrian Progress պարբերականում .....	55
Պատկեր 12. Խարբերդի ասորական եկեղեցին այսօր .....	57
Պատկեր 13. «Խարբերդի ասորոց նպաստամատույց ընկերության» կանոնագիրքը .....	58
Պատկեր 14. «Ասորվոց Հնգյակ Ընկերության» կնիքը .....	60
Պատկեր 15. Assyrian Progress-ի համրներից մեկի պատկերազարդ շապիկը .....	62
Պատկեր 16. Հայերեն ներկայացման ազդ. Assyrian Progress պարբերականում .....	64
Պատկեր 17. «Բաբելոնի» առաջին համարի տիտղոսագլուխը .....	70
Պատկեր 18. Նաում Բեշարով (լուսանկար «Բաբելոնից») .....	86
Պատկեր 19. Ասորերեն բառացանկ 1 .....	92
Պատկեր 20. Ասորերեն բառացանկ 2 .....	93
Պատկեր 21. Ասորերեն բառացանկ 3 .....	94
Պատկեր 22. Ասորերեն բառացանկ 4 .....	94
Պատկեր 23. Ասորերեն բառացանկ 5 .....	95

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### Ընդհանուր դրույթներ

«Բաբելոնը» հայալեզու ասորական պարբերական է, որը 1919-21 թթ. Բոստոնում հրատարակել է 1917 թ. ամերիկաբնակ խարբերոցի հայախոս ասորիների հիմնադրած «Ասորվոց Հնգյակ Ընկերությունը»: Հրատարակման առաջին տարին (1919-20 թթ.) լույս է տեսել 27 համար և նույնքան՝ հրատարակման երկրորդ տարին (1920-21 թթ.): Պարբերականությունը՝ երկու շաբաթը մեկ անգամ, պահպանվել է գոյության ողջ ժամանակի ընթացքում: Բացառությամբ տպարանում պատրաստված տիտղոսագլուխների, որոնք առկա են բոլոր համարներում, և տիտղոսաթերթերի, որոնք առկա են հրատարակման առաջին տարվա թիվ 14-ից սկսած բոլոր համարներում, եղել է ձեռագիր և բազմացվել է միմեոգրաֆիայի եղանակով: Էջերի քանակը տատանվել է 6-ից 30-ը: Տպաքանակի մասին տեղեկություններ չկան: Տարածվել է ԱՄՆ արևելյան (Մասաչուսեթս, Նյու Յորք, Ռոդ Այլենդ, Նյու Ջերսի) և արևմտյան (Կալիֆոռնիա) նահանգներում, ինչպես նաև նախկին Օսմանյան կայսրության տարածքներում: Գլխավոր խմբագիրն առաջին տարին ենթադրաբար եղել է Յուհաննա Չաթալբաշը, իսկ երկրորդ տարին՝ Նաում Բեշարովը: Հրատարակել է ասորիների ազգային կյանքին վերաբերող քաղաքական և հասարակական հոդվածներ, ԱՄՆ-ում և Մերձավոր Արևելքում ասորական համայնքներին վերաբերող լուրեր, նամակներ, խրատական-դաստիարակչական բնույթի նյութեր, ասացվածքներ, աֆորիզմներ, հայտարարություններ, ազդ և այլն: Ունեցել է մշտական և ոչ մշտական հեղինակների և թղթակիցների մեծ թիվ: Բացի հայերենից (գերազանցապես՝ արևմտահայերեն, որոշ հոդվածները՝ արևելահայերեն)՝ ժամանակ առ ժամանակ զետեղել է նյութեր ասորատառ և հայատառ թուրքերենով, ինչպես նաև անգլերենով: Հայերեն տեքստի մեջ (հատկապես հրատարակման առաջին տարվա համարներում) հաճախ հանդիպում են հայկական, ավելի հազվադեպ՝ ասորական տառերով գրված ասորական բառեր և արտահայտություններ: Սույն աշխատությունը նվիրված է «Բաբելոնի» հայերենի մեջ ներհյուսված ասորական լեզվանյութի վերլուծությանը:

## **Աշխատանքում ուսումնասիրվող խնդիրների արդիականությունն ու կիրառական նշանակությունը**

Ատենախոսության արդիականությունը հիմնականում պայմանավորված է Հայաստանում ասորագիտության զարգացման անհրաժեշտությամբ: Ասորագիտությունն արևելագիտության «էլիտար» ճյուղ է. այն գոյություն ունի աշխարհի ընդամենը մի քանի երկրներում, և շատ քիչ են համալսարանները, որոնք առաջարկում են դասական ասորերենի ուսումնական ծրագրեր: Հայ-ասորական մշակութային, լեզվական, կրոնական առնչությունները հազարամյակների պատմություն ունեն և հոգևոր հարուստ ժառանգություն են ծնել: Թեև հայ գիտնականները (Երվանդ Տեր-Մինասյանց, Լևոն Տեր-Պետրոսյան, Հայկ Մելքոնյան, որոշ մխիթարյաններ) անդրադարձել են հայ-ասորական բազմաբնույթ կապերին և արժեքավոր հետազոտություններ գրել, այդուհանդերձ Հայաստանը երբեք չի ունեցել ասորագիտության սեփական դպրոցը: Առավել ևս՝ երբեք չեն ուսումնասիրվել հայախոս ասորիներին վերաբերող հարցերը, այդ թվում՝ հայախոս ասորիների «աշխարհի» կործանումը, որը Հայոց ցեղասպանության չուսումնասիրված դրսևորումներից և հետևանքներից մեկն է: Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի լույսի ներքո այդ «աշխարհին»՝ Արևմտյան Հայաստանի յուրահատուկ և իր էությամբ եզակի բաղկացուցիչ մասին նվիրված գիտական աշխատության երևան գալը պետք է ավելի քան արդիական դիտել: Հարկ է նաև ավելացնել, որ ասորիների ներկայությունը Հայաստանում մինչ օրս հիմնականում դիտարկվել է ներկայումս գոյություն ունեցող ասորական համայնքի պարագայով, որը սկիզբ է առել XIX դ. սկզբի ռուս-պարսկական պատերազմի արդյունքում: Արևմտյան Հայաստանի՝ անհամեմատ երկար պատմություն ունեցող ասորական համայնքները գրեթե ամբողջությամբ անտեսված են եղել: Այս առումով խիստ կարևոր է ուսումնասիրել «Բաբելոնը», որը մի կողմից հայախոս ասորիների հոգևոր կյանքի ծնունդն է և նրանց մտավոր ժառանգության կարևորագույն նմուշը, մյուս կողմից՝ տեղեկությունների անգնահատելի աղբյուր է Արևմտյան Հայաստանի ասորիների մասին:

## **Աշխատանքի նպատակն ու նրանում ներկայացվող ընդհանուր հարցադրումները**

Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել «Բաբելոնի» լեզվական ոճի եզակի և ծայր աստիճան հետաքրքրական դրսևորումը՝ գրական հայերենի մեջ ասորական լեզվանյութի ընդգրկումը: Նպատակ է դրված ուսումնասիրել այդ լեզվանյութը որպես այդպիսին և հայերենի մեջ նրա ներհյուսման առանձնահատկությունները, նախ և առաջ՝ հայերենում սեմական լեզվանյութի տառադարձության և շարահյուսական «կլանման» առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Հիմնական հարցադրումներն են՝ ինչո՞ւ ենք անթերի գրական հայերենի մեջ հանդիպում մեծ թվով ասորաբանություններ, արդյո՞ք դրանք ներմուծվել են միտումնավոր, թե՞ արտահայտել են Խարբերդի ասորիների կենդանի խոսքը: Արդյո՞ք Խարբերդի ասորիների խոսակցական լեզուն տարբերվել է քաղաքի հայերի խոսքից, և եթե այո՝ տեղի՞ն է, արդյոք, խոսել «հայկական իդիշի»՝ այլ ազգի կողմից կիրառված յուրահատուկ «ենթալեզվի» մասին: Այս ամենի ենթատեքստում անհրաժեշտ է եղել, բացի զուտ լեզվաբանական վերլուծությունից, տալ Խարբերդի և, ընդհանրապես, Արևմտյան Հայաստանի ասորիների քաղաքական և կրոնական կարգավիճակի, կենցաղի, հոգևոր կյանքի, կրթական համակարգի և այլ դրսևորումների ընդհանուր բնութագիրը, այդ թվում՝ հատուկ կանգ առնել ասորատառ հայերենի երևույթի վրա, որը, «Բաբելոնի» հետ մեկտեղ, հայախոս ասորիների մտավոր ժառանգության կարևորագույն մասն է:

## **Աշխատանքի ժամանակագրական սահմանները**

Քանի որ ատենախոսությունն ունի առավելապես լեզվաբանական-բանասիրական ուղղվածություն, ապա «ժամանակագրական սահմաններ» հասկացությունը կիրառելի է հիմնականում նրա «Բաբելոնի» ազգային-լեզվական արմատներն ու միջավայրը» գլխի պարագայում: Առաջին ենթագլուխն անդրադառնում է արամեա-ասորական պատմության հիմնական փուլերին՝ մ.թ.ա. X դարից մինչև մ.թ. XIX դ.: Հայկական գարշունիին վերաբերող ենթագլուխը հիմնականում վերաբերում է XVII-XIX դդ., իսկ վերջին երկու ենթագլուխները՝ XIX-XX դդ.:

## **Գրականության համառոտ տեսություն**

Աշխատանքում օգտագործվել են հատկապես «Բաբելոնի» ազգային-լեզվական արմատներն ու միջավայրը» գլխի նյութին վերաբերող մի շարք կարևոր ուսումնասիրություններ, այդ թվում՝ Սեբաստիան Բրոքի, Դեյվիդ Գոնթի, Սեբաստիան դե Կուրտուայի, Սարգոն Դոնաբեդի, Ջոն Ջոզեֆի, Ջոն ՄաքՔարթիի, Էդեն Նաբիի, Հիդեմի Տակահաշիի, Բենջամին Տրիգոնա-Հարանիի և մի շարք այլ հեղինակների (տե՛ս օգտագործված գրականության ցանկը): Հատուկ հարկ է նշել Ռիչարդ Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված Armenian Tsopk/Kharpert և Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfa ժողովածուները: Լեզվաբանական վերլուծության համար օգտագործվել են նշանավոր սեմագետներ Փեյն Սմիթի, Օտտո Յաստրովի և Մայքլ Սոկոլովի աշխատությունները: Խարբերում Մեծ եղեռնի օրերին տեղի ունեցած իրադարձությունների մասին արժեքավոր տեղեկություններ ենք գտնում ամերիկացի դիվանագետ Լեսլի Դեվիսի և Խարբերդի «Եփրատ» քուլեջի վերջին նախագահ Հենրի Ռիգսի հուշերում: Հայալեզու աղբյուրներից հատկապես կարևոր են Վահե Հայկի «Խարբերդ և անոր ոսկեդեն դաշտը», Մանուկ Ճիգմեճյանի «Խարբերդ և յուր զավակները», Ալիս Նազարյանի «Արյունոտ ժպիտը» գրքերը: «Ասորական պատմության և հարանվանական բաժանման հակիրճ ակնարկ» ենթագլուխը հիմնված է մեր «Արամեագիտության և ասորագիտության ներածություն» մենագրության վրա: Որպես տեղեկատվության հարուստ աղբյուր օգտագործվել են հենց «Բաբելոնի», ինչպես նաև խարբերդցի ասորիների կողմից ԱՄՆ-ում 1930-ականներին հրատարակված Assyrian Progress պարբերականի նյութերը:

## **Հարցի ուսումնասիրման պատմությունը**

Լինելով հայալեզու ոչ հայկական միակ պարբերականը՝ «Բաբելոնը» հայտնի չի եղել հայ մամուլի պատմությունն ուսումնասիրող մասնագետներին և երբևիցե չի հիշատակվել այդ նյութին վերաբերող գրականության մեջ, մասնավորապես՝ հայկական պարբե-



րականների ամենամբողջական անվանացանկերում<sup>1</sup>: Մյուս կողմից՝ հայալեզու լինելու հանգամանքը, ինչպես նաև ձեռագիր և, հետևաբար, դժվար ընթեռնելի լինելը, անհաղթահարելի խոչընդոտներ են ստեղծել ասորի և այլազգի այն հատուկենտ մասնագետների համար, որոնք տեղյակ են եղել այդ պարբերականի գոյության մասին և այլ պարագաներում պատրաստ կլինեին ուսումնասիրել այն: «Բաբելոնի» մի քանի բնօրինակ հավաքածուներ պահպանվել են ԱՄՆ-ում բնակվող ասորի ընտանիքներում, որոնք Խարբերդից արտագաղթած հայախոս ասորիների սերունդներն են: Սակայն քանի որ Ամերիկայում ծնված խարբերդցի ասորիների երրորդ սերունդը չէր ժառանգել հայերենն ու ամբողջությամբ անգլախոս էր, ապա «Բաբելոնի» նմուշները մնում էին միայն որպես հայրերի և պապերի հիշատակի հետ կապված և սերնդեսերունդ փոխանցվող ընտանեկան նվիրական հուշաիր:

1900 թ. ի վեր ԱՄՆ-ում հրատարակված ասորական մամուլին վերաբերող Խոշաբա Յասիմի հետազոտությունը<sup>2</sup>, որը պարունակում է ասորական պարբերականների ամենաընդգրկուն ցանկը, Մասաչուսեթսին նվիրված բաժնում ներկայացնելով երեք աննշան հրատարակումներ, «Բաբելոնին» որևէ անդրադարձ չի պարունակում: Թվարկելով աշխատության մեջ բոլոր այն լեզուները, որոնք ասորիները գործածում էին իրենց պարբերականներում, նա չի նշում ոչ միայն հայերենը, որը կարող էր հեշտությամբ վրիպել ասորի գիտնականի ուշադրությունից, այլ նաև, զարմանալիորեն, ասորատառ օամաներեն-թուրքերենը, որով երբեմն հոդվածներ էին լույս տեսնում ինչպես «Բաբելոնում», այնպես էլ ԱՄՆ-ում հրատարակվող մի քանի այլ պարբերականներում: Սա պետք է բացատրել նրանով, որ հեղինակը հիմնականում կենտրոնացել է «արևելյան» ասորիների (հիմնականում՝ «նեստորականների» և նորադարձ բողոքականների) հրատարակած մամուլի վրա, և նրա ուշադրությունից վրիպել են «արևմտյան» ասորիների («հակոբիկների») հրատարակած անունները:

---

<sup>1</sup> Լևոնյան, Գ., *Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934)*, Երևան, 1934; Պետրոսյան, Հ., *Հայ պարբերական մամուլի բիրթիոգրաֆիա*, հատոր 2 (1900-1956), Երևան, 1957; Բաբլոյան, Մ., *Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ*, Երևան, 1986:

<sup>2</sup> Jasim, Kh., *A Brief Review of the Assyrian Media in the U.S.A. since 1900*, a paper presented to the Greek-Assyrian conference “Strains on Ethnic Pride”, October 31-November 1, 1987 at Loyola University of Chicago.

Ասորի գիտնականներից առաջինը «Բաբելոնը» փորձել է գիտական շրջանառության մեջ դնել ԱՄՆ-ում բնակվող ազգությամբ ասորի պատմաբան Էդեն Նաբին, որը երեք տարբեր առիթներով հիշատակում է այն: 1999 թ. ապրիլին Հարվարդի համալսարանի Վայդների գրադարանում պահվող ասորական նյութերի ցուցահանդեսի ընդարձակ կատալոգում, որը Է. Նաբիի հետ մեկտեղ կազմել է Մայքլ Հոփսերը, կարդում ենք. ««Բաբելոն» (1919-1921)՝ երկշաբաթյա, միմեոգրաֆացված ձեռագիր պարբերական, խմբագրված Naum S.G. Beshrov-ի կողմից և հրատարակված Բոստոնում ասորական համայնքի համար, բայց հայկական տառերով (բացառությամբ պատահական անգլատառ, հայատառ (?<sup>3</sup>) և ասորատառ հոդվածների): Լեզուն սովորաբար **ասորերեն է** (sic), որոշ հոդվածներ թուրքերեն են, բայց գրված հայկական տառերով»<sup>4</sup>: Նույն էջում զետեղված է նաև «Բաբելոնը» հրատարակած «Ասորվոց Հնգյակ Ընկերության» երեք անանուն անդամների խմբակային լուսանկարը («Ասորվոց Հնգյակ Ընկերության» և դրա մասին Էդեն Նաբիի մեկնաբանությունների մասին մանրամասն տե՛ս ստորև):

2004 թ. լույս տեսած «Գրեթե ընտանիք. ասորիներն ու հայերը Մասաչուսեթսում» հոդվածում Է. Նաբին գրում է. «Ապրելով հայերի հարևանությամբ՝ բազմաթիվ ասորիներ ոչ միայն սովորում էին հայերեն խոսել, այլև ծանոթ էին գրավոր հայերենին: Հարվարդի համալսարանի ասորական հավաքածուի նյութերի մեջ (որոնց ցուցահանդեսը տեղի ունեցավ 1999 թ. ապրիլին) գտնում ենք Բոստոնում հրատարակված և «Բաբելոն» կոչված մի պարբերական, որը գրված է հայերեն տառերով, բայց **ասորիների խոսակցական լեզվով** (sic): Առաջին համաշխարհային պատերազմի տարիների ասորիների ու հայերի ցեղասպանության պատճառով շատ քիչ գրավոր նյութեր են պահպանվել, որոնք ապացուցում են գրական մակարդակի վրա ասորիների ու հայերի նման մոտիկությունը, ուստիև հետպատերազմյան շրջանի այս պարբերականի կարևորությունը»<sup>5</sup>: Հեղինակը նշում է, որ նշված ցուցահանդեսում ցուցադրվելու համար «Բաբելոնի» նմուշներ էր տրամադրել ոմն Հերբերթ Քոյունը<sup>6</sup>:

---

<sup>3</sup> Հարցական նշանը մերն է:

<sup>4</sup> *The Assyrian Experience: Sources for the Study of the 19<sup>th</sup> and 20<sup>th</sup> Centuries*, ed. by Eden Naby and Michael E. Hopper, Harvard College Library, Cambridge, 1999, էջ 41:

<sup>5</sup> Naby, E., *Almost Family: Assyrians and Armenians in Massachusetts*, in *The Armenians of New England*, ed. by Marc Mamigonian, Armenian Heritage Press, 2004, էջ 46:

<sup>6</sup> Նույն տեղում:

Մեկ տարի անց լույս տեսած հոդվածում Էդեն Նաբին գրում է. «Չորրորդ [պարբերականը]... «Բաբելոն» էր (մոտ 1919-1920 թթ.) Բոստոնից: Սրա ուշագրավ առանձնահատկությունն այն է, որ գրեթե բոլոր տեքստերը գրված են հայկական տառերով, սակայն դրանց մեծ մասը **դասական ասորերենով է** (sic): Սա արտահայտում է լեզվական իրավիճակը Հարպուրում [Խարբերդ]՝ խմբագիր Բեշրովի, որի մասին քիչ բան է հայտնի, ենթադրվող ծննդավայրում»<sup>7</sup>:

Այս մեջբերումներից պարզ է դառնում, որ հեշտությամբ զանազանելով հայկական գիրը, հայերենին չտիրապետող Էդեն Նաբին դրա հետ մեկտեղ չի կարողացել (կամ չի կամեցել) ճիշտ մատնանշել «Բաբելոնի» հիմնական լեզուն՝ հայերենը: Առաջին դեպքում նա, ինչպես տեսանք, նշում է, որ «Բաբելոնի» հիմնական լեզուն «սովորաբար ասորերեն է» (usually Assyrian<sup>8</sup>), ապա մյուս երկու հոդվածներում «ճշգրտում», որ այդ ասորերենը, ըստ մի հոդվածի, Խարբերդի ասորիների՝ իրականում գոյություն չունեցած խոսակցական ասորերենն է (spoken language of the Suroyo<sup>9</sup>), իսկ ըստ մյուսի՝ դասական ասորերենը (Classical Syriac), որն էապես տարբերվում է արդի խոսակցական ասորական (ավելի ստույգ՝ արամեական) բարբառներից և դրանց հիման վրա զարգացած արդի գրական ասորերենից: Դասական ասորերենը, լինելով Ասորի ուղղափառ եկեղեցու ծիսական լեզուն, բացառությամբ մի քանի աղոթքների և կրոնական արտահայտությունների, անձանոթ էր Խարբերդցի ասորիներին և ոչ մի պարագայում չէր կարող լինել նրանց միջավայրում լույս տեսնող մամուլի լեզուն: Առավել ևս, առնվազն դպրոցական կրթություն ստացած ասորիները ծանոթ էին ասորական գրին, որը լայնորեն գործածում էին թուրքերենը գրի առնելու համար, և ոչինչ չպետք է ստիպեր նրանց հրաժարվել այդ գրից հոգուտ հայկականի՝ դասական ասորերենը գրի առնելու համար,

---

<sup>7</sup> Naby, E., *The Assyrian Diaspora: Cultural Survival in the Absence of State Structure, in Central Asia and Caucasus: Transnationalism and Diaspora*, ed. by Touraj Atabaki and Sanjyot Mehendale, Routledge, 2005, էջ 223-224:

<sup>8</sup> Հարկ է նշել, որ անգլալեզու սեմագիտությանը հայտնի չէ Assyrian կոչվող լեզու: Հնագույն ասորեստանցիների ու բաբելոնացիների լեզուն աքքադերենն էր (Akkadian), միջնադարի ասորիների լեզուն՝ արամեերենը, մասնավորապես՝ Եդեսիայի բարբառի հիման վրա զարգացած դասական ասորերենը (Classical Syriac), իսկ ասորիների մեջ ներկայումս տարածված բազմաթիվ բարբառներն անվանվում են «արդի արամեական» (Modern կամ Neo-Aramaic dialects):

<sup>9</sup> Խոսքն ասորիների ավանդական ինքնանվանման մասին է (բառացիորեն՝ «սիրիացիներ»), որը քրիստոնեություն ընդունելուց հետո փոխարինեց «հեթանոս» բառի հոմանիշն ընկալվող «արամեացի» ինքնանվանումը: Այս բառի *սուրայա* տարբերակը գործածության մեջ է մնում նաև Հայաստանի ասորիների մեջ:

ինչպես դա հետևում է է. Նաբիի հոդվածից: Ամեն պարագայում, վերջինս չի նշում, թե ինչից ելնելով է հանգել «Բաբելոնի» լեզվի մասին իր ենթադրություններին և ինչու է այդ լեզվին ամեն անգամ նոր անվանում տվել:

«Բաբելոնին» ժամանակային առումով ամենավերջինն անդրադարձել է ծագումով մալթացի Բենջամին Տրիգոնա-Հարանին, որին հաջողվել է ավելի ճիշտ պատկերացում կազմել խնդրո առարկա պարբերականի մասին: 2009 թ. լույս տեսած «Օսմանյան ասորիները 1908-ից 1914 թթ.» գրքում նա երեք անգամ հիշատակում է «Բաբելոնը», նախ նշելով, որ ««Բաբելոնը» գերազանցապես հայերեն էր՝ օսմանական թուրքերեն և անգլերեն հոդվածների փոքր թվով»<sup>10</sup>, ապա գրելով, որ «ասորիների համար հայալեզու թերթ՝ «Բաբելոն» 1920 և 1921 թթ. Բոստոնում հրատարակում էր մի խումբ<sup>11</sup>, որը նաև գրքույկներ էր տպում այդ լեզվով»<sup>12</sup>, ապա հիշատակում է Նաում «Բեշարուֆին», «որը ներգրավված էր Բոստոնում «Բաբելոն» պարբերականի խմբագրման գործում: Թեև հայալեզու՝ «Բաբելոնը» հրատարակվում էր հատուկ ասորական համայնքի համար»<sup>13</sup>:

Նույն թվականին Hugoye միջազգային ասորագիտական հանդեսում հրատարակած հոդվածում Տրիգոնա-Հարանին նշում է, որ «քիչ բան է հայտնի «Բաբելոնի» մասին, թեև հայերենի գործածությունը և Մասաչուսեթսում հրատարակվելը հուշում են առնչություն Հարպուֆի հետ»<sup>14</sup>: Նա զետեղում է նաև հետևյալ հակիրճ տվյալները. խմբագիր (Naum?) Beşaruf, վայր՝ Բոստոն, տարիներ՝ 1919-1921, լեզուներ՝ հայերեն, անգլերեն (?), օսմանական թուրքերեն (?<sup>15</sup>), պարբերականությունը՝ ամսական մեկ անգամ, համարները՝ (WL<sup>16</sup>) հատոր 1 (1919-20), թիվ 1-27, հատոր 2 (1920-21), թիվ 1-27<sup>17</sup>:

<sup>10</sup> Trigona-Harany, B., *The Ottoman Süryânî from 1908 to 1914*, Gorgias Press, 2009, էջ 71:

<sup>11</sup> Խոսքը «Ասորվոց Հնգյակ Ընկերության» մասին է: Հիշատակվող գրքույկներից պահպանվել է միայն մեկը՝ «Ասորվոց անգուգական ռահվիրան», որը նվիրված է խարբերոցի նշանավոր ասորի մտավորական Աշուր Յուսուֆին:

<sup>12</sup> Trigona-Harany, B., նշվ. աշխ., էջ 76:

<sup>13</sup> Trigona-Harany, B., նշվ. աշխ., էջ 122, ծանոթագրություն 355:

<sup>14</sup> Trigona-Harany, B., *A Bibliography of Süryânî Periodicals in Ottoman Turkish*, in “Hugoye: Journal of Syriac Studies”, Vol. 12, No. 2, 2009, էջ 299:

<sup>15</sup> Բոլոր հարցական նշանները Տրիգոնա-Հարանինին են:

<sup>16</sup> Հարվարդի համալսարանի Widener գրադարան:

<sup>17</sup> Trigona-Harany, B., նույն տեղում:

## **ԳԼՈՒԽ 1. «ԲԱԲԵԼՈՆԻ» ԱԶԳԱՅԻՆ-ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱՎԱՅՐԸ**

### **1.1. Ասորական պատմության և հարանվանական բաժանման հակիրճ ակնարկ<sup>18</sup>**

Ժամանակակից ասորիները սերում են սեմական ծագում ունեցող արամեական հնագույն ցեղերից, որոնք մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջում Արաբական թերակղզու հյուսիսային շրջաններից ներթափանցեցին Միջագետք և արևելյան Սիրիա: Ասորեստանի փորձերը՝ կանխելու այդ առաջխաղացումն ապարդյուն էին, և մ.թ.ա. X դ. արամեացիները Միջագետքի և Սիրիայի բնակչության արդեն մեծ տոկոսն էին կազմում, իսկ որոշ շրջաններում՝ նույնիսկ մեծամասնություն էին և երբեմն կարողանում էին իշխանության հասնել Ասորեստանի և Բաբելոնի որոշ քաղաք-պետություններում:

IX դ. Հյուսիսային Միջագետքում և Սիրիայում արամեացիներին հաջողվեց ստեղծել տասնյակից ավելի պետություններ, որոնցից ամենանշանավորը Հին Կտակարանում բազմիցս հիշատակվող Դամասկոսյան Արամն է: Այդ բոլոր պետությունները գտնվում էին Ասորեստանի մշտական ճնշման ներքո, և ի վերջո բոլորն ընկան նրա հարվածների տակ:

Ասորեստանցիները սովորություն ունեին գերված ժողովուրդների մի մասին վերաբնակեցնել բուն Ասորեստանում (Ժամանակակից Իրաքի հյուսիս): Արամեացիների պարագայում սա անհեռատես քաղաքականություն էր, քանի որ նպաստում էր Ասորեստանի բնակչության կազմում նրանց՝ առանց այդ էլ շատ բարձր տոկոսի հետագա աճին: Սրա արդյունքն այն եղավ, որ արամեերենն սկսեց աստիճանաբար դուրս մղել ասորեստանցիների և բաբելացիների խոսակցական և գրական լեզուն՝ աքքադերենը, և նույնիսկ վերջինիս հետ միասին ստացավ պաշտոնական արձանագրությունների լեզվի կարգավիճակ: Սրան հատկապես նպաստում էր այն, որ արամեերենը գործածում էր փյունիկեցիներից փոխառված պարզ տառային գիրը, որը հսկայական առավելություն ուներ աքքադական ծայր աստիճան խրթին սեպագրության համեմատ: Իր գոյության վերջին շրջանում Ասորեստանը, փաստորեն, լեզվական առումով առավելապես արամեական էր: Ձեռք բերելով Ասորեստանում նման բարձր կարգավիճակ՝ արա-

<sup>18</sup> Սույն ենթագլուխն առավելապես հիմնված է մեր «Արամեագիտության և ասորագիտության ներածություն» մենագրության վրա (Երևան, VMV-Print, 2015):

մեերենն աստիճանաբար դարձավ նաև Մերձավոր Արևելքի ազգամիջյան ու միջազգային հաղորդակցության լեզու (lingua franca):

Ասորեստանի անկումից անմիջապես հետո աքքադալեզու ավանդույթների վերջին պահապան հանդիսացող ասորեստանյան վերնախավը գրեթե ամբողջապես ոչնչացվեց միդիացիների կողմից: Մյուս կողմից, անվերջ պատերազմների և համաճարակների պատճառով ասորեստանցիները ժողովրդագրական խիստ անբարենպաստ պայմաններում էին հայտնվել: Այս ամենը, ինչպես նաև Միջագետքում արամեական զանգվածի մշտական աճը, հանգեցրին նրան, որ ասորեստանցիների և բաբելացիների վերջին մնացորդներն անմնացորդ ձուլվեցին արամեական խառնարանի մեջ և վերջնականապես հեռացան պատմության թատերաբեմից:

Աքեմենյան ժամանակաշրջանում արամեացիներն արդեն կազմում էին Միջագետքի և Սիրիայի բնակչության ճնշող մեծամասնությունը, իսկ նրանց լեզուն, որն Աքեմենյան Իրանի արևմտյան սատրապությունների պաշտոնական լեզուն էր, գործածվում էր դրանից շատ ավելի ընդարձակ տարածքում՝ Եգիպտոսից և Արևմտյան Անատոլիայից մինչև Հնդկաստան և Կենտրոնական Ասիա, և Վրաստանից մինչև Եմեն: Ասորեստանցիների և բաբելացիների արամեացումից հետո Մերձավոր Արևելքի սեմական բոլոր ժողովուրդներն այս կամ այն ծավալով գործածում էին արամեերենը որպես խոսակցական լեզու: Այսպես, հրեաները գրեթե բացառապես արամեախոս էին, թեև ամբողջությամբ պահպանում էին իրենց ազգային ինքնագիտակցությունը և ուրույն միաստվածային կրոնը: Փյունիկեցիներն ավելի երկար դիմադրեցին արամեերենի ճնշմանը, սակայն, ի տարբերություն հրեաների, դառնալով ի վերջո արամեախոս, ձուլվեցին արամեացիների հետ և ասորեստանցիների պես հեռացան պատմության թատերաբեմից:

Արաբական թերակղզու կենտրոնական և հարավային շրջանների արաբները սեմական միակ ժողովուրդն էին, որն իր ճնշող մեծամասնությամբ ենթարկված չէր լեզվական արամեացմանը, թեև թերակղզու հյուսիսային շրջաններում, ինչպես նաև Միջագետքում և Սիրիայում բնակվող կամ այնտեղ քոչող արաբական ցեղերից շատերն արամեախոս էին: Արամեերենը որպես խոսակցական և գրավոր լեզու լայն տարածում ուներ Նաբաթեական թագավորությունում (մայրաքաղաքը՝ Պետրա), որի բնակչությու-

նը գրեթե ամբողջապես արաբական ծագում ունեն և որի տեղական արամեական գիրը համարվում է արդի արաբական գրի նախատիպը:

Ամբողջ Մերձավոր Արևելքով մեկ տպավորիչ լեզվական էքսպանսիա կատարելու հետ մեկտեղ արամեացիները միևնույն ժամանակ զրկված էին սեփական քաղաքական պատմությունից և մնում էին այս կամ այն տերության իշխանության տակ: Դամասկոսյան Արամի անկումից միայն չորս հարյուր տարի անց՝ մ.թ.ա. IV դ.-ի վերջում էր, որ արամեացիներին Պալմիրայում հաջողվեց վերականգնել իրենց պետականությունը: Քաղաքական և մշակութային առումով լինելով Մերձավոր Արևելքի ամենանշանավոր պետություններից մեկը՝ Պալմիրան գոյատևեց մինչև մ.թ. 273 թ.:

Մ.թ.ա. 132 թ. Հյուսիսային Միջագետքում՝ Սելևկյան կայսրության քայքայման հետևանքով առաջացավ արամեական մեկ այլ պետություն՝ Օսրոյենեն, որի մայրաքաղաքը Եդեսիան էր (Ուրհա, հետագայում՝ Ուրֆա): Պաղեստինին և Անտիոքին մոտ լինելը հանգեցրեց նրան, որ II դ. Հյուսիսային Միջագետքում լայն տարածում ստացավ քրիստոնեությունը, իսկ Օսրոյենեի Աբգար VII թագավորին արևելաքրիստոնեական ավանդույթը համարում է պատմության մեջ քրիստոնեություն ընդունած առաջին միապետը:

Քրիստոնեության տարածմանը զուգահեռ՝ որոշ վերաիմաստավորման ենթարկվեց «արամեացի» բառը, որն սկսվեց ընկալվել որպես «հեթանոս» բառի հոմանիշ՝ մի ավանդույթ, որը սկիզբ էր առել հրեաներից: Քրիստոնյա արամեացիներն իրենց *սուրյայա*՝ «սիրիացի» էին անվանում, քանի որ այդ բառը մի քանի հարյուրամյակ՝ Սիրիայի ամբողջական արամեացումից ի վեր գործածվում էր որպես «արամեացի» բառի հոմանիշ և որպես այդպիսին գործածված է, մասնավորապես, Յոթանասնիցում՝ Հին Կտակարանի՝ Եգիպտոսում կատարված հնագույն հունական թարգմանության մեջ: Նույն բառով էին կոչում նաև Եդեսիայի արամեական բարբառի հիման վրա զարգացած նոր գրական լեզուն, որը գործածում էր արամեական գրի տեղական ծագում ունեցող կապակցված, շեղագիր տարբերակը (*էսթրանգելա*):

Հայերը որպես *սուրյայա* բառի համարժեք գործածում էին «ասորի» բառը (չփոթել «ասորեստանցի» բառի հետ<sup>19</sup>), իսկ արամեացիներով բնակեցված Միջագետքի և Սիրիայի տարածքներն ստացան «Ասորիք» կամ «Միջագետք ասորվոց» անվանումները: Հետևաբար, «ասորերենը» Եդեսիայի գրավոր արամեերենն է, և ոչ թե հին ասորեստանցիների լեզուն, որը սեմական լեզվաընտանիքի այլ խմբին պատկանող աքքադերենն էր:

Եդեսիան կարճ ժամանակում դարձավ քրիստոնեության խոշոր տարածաշրջանային կենտրոն, իսկ ասորերենը՝ արևելյան քրիստոնեության կարևորագույն լեզուներից մեկը: Հայաստանում քրիստոնեության տարածման գործում մեծ դեր են խաղացել ասորիները, Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունը կատարվել է ասորերենից և նույնիսկ երկրորդ՝ վերջնական թարգմանության մեջ պահպանվել են ասորերենի ազդեցության հետքերը<sup>20</sup>:

Սկզբնապես ասորիները կազմում էին «մի, ընդհանրական, առաքելական և սուրբ» եկեղեցու մասը և ենթարկվում էին Անտիոքի պատրիարքարանին: Տիեզերական առաջին ժողովներին հետևած վաղ քրիստոնեության պառակտումն առավել ցայտուն կերպով դրսևորվեց ասորիների պարագայում, որոնք բաժանվեցին մի քանի հակամարտող հարանվանությունների: Ասորիների հարանվանական տրոհմանը նպաստում էր նաև այն, որ նրանց մի մասը գտնվում էր Բյուզանդիայի, մյուսը՝ Սասանյան Իրանի տիրապետության տակ:

Եդեսիայում սկզբնապես բավականին լայն տարածում էր գտել նեստորականությունը, որն իր անունը ստացել է 428-431 թթ. Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորից: 431 թ. Եփեսոսի Տիեզերական ժողովը նզովեց Նեստորին և նրա ուսմունքը, որին հետևեցին նեստորականների հալածանքները: Այդուհանդերձ, ուսմունքը գոյատևեց և զարգացում ապրեց IV-V դդ. աստվածաբաններ Դիոդորոս Տարսոնացու և Թեոդորոս Մոպսուեստացու աշխատություններում: Նեստորականության ազդեցության տակ էր և նրա խոշոր կենտրոնն էր դարձել Եդեսիայի հանրահայտ «Պարսից դպրոցը», որը ժամանակի ասորական ամենանշանավոր բարձրագույն ուսումնական հաստատությունն

<sup>19</sup> «Ասորեստանցիների» և «ասորիների» զանազանումը հստակորեն երևում է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունում»:

<sup>20</sup> Cox, C., *The Syriac presence in the Armenian translation of the Bible, with special reference to the Book of Genesis*, "Journal of the Canadian Society of Syriac Studies", Volume 10, 2010, էջ 45-67:



էր: 489 թ. Ձենոն կայսեր հրամանով «Պարսից դպրոցը» փակվեց, և նեստորական ասորիներից շատերը Ասորիքից փախան Սասանյան Իրան:

Սասանյանները հիմնականում վարում էին հակաքրիստոնեական քաղաքականություն, սակայն դիտելով նեստորականներին որպես բյուզանդական իշխանությունների կողմից հալածվող տարր՝ որոշ արտոնություններ էին տալիս նրանց: Եղեսիայից փախած նեստորականության ջատագովներին նույնիսկ հաջողվեց Մծբինում վերականգնել իրենց դպրոցը, որը կարճ ժամանակում դարձավ Մերձավոր Արևելքի ամենանշանավոր ուսումնական հաստատություններից մեկը: Նեստորականությունը դարձավ Իրանում քրիստոնեության գերիշխող ուղղությունը, իսկ նրա ասորական էությունն այնքան ուժեղ էր, որ քրիստոնեություն ընդունող պարսիկները դառնում էին, փաստորեն, ասորական համայնքի անդամներ և ժամանակի ընթացքում ասորանում:

Աշխարհագրական և քաղաքական մեկուսացումն Անտիոքից ի վերջո նպաստեց նրան, որ Իրանի ասորի նեստորականները ստեղծեն իրենց սեփական եկեղեցական կառույցները: Արդյունքում Իրանում ծնունդ առավ ինքնուրույն և անկախ «Արևելքի եկեղեցին», որի գլխին կանգնած էին կաթողիկոսները: Արևելքի եկեղեցին երբեք չէր հայտարարել նեստորականությունն իր պաշտոնական վարդապետությունը, սակայն էությամբ մինչ օրս առավելապես նեստորական է: Այն աչքի էր ընկում միսիոներական չափազանց ակտիվ գործունեությամբ Կենտրոնական Ասիայում, Հնդկաստանում, Չինաստանում, արաբների և մոնղոլների միջավայրում և մինչև Հռոմի կաթոլիկ եկեղեցու՝ ամերիկյան մայրցամաք ներթափանցելը քրիստոնեական բոլոր եկեղեցիների շարքում ուներ ամենամեծ կանոնական տարածքը:

Ասորիների մեկ այլ խոշոր զանգված, խիստ հակադրվելով նեստորականությանը, հայտնվեց քրիստոսաբանության հակադիր բևեռում, որն էր միաբնակությունը (միաֆիզիթիզմ): Քրիստոնեության այս ճյուղին առավելապես քաղաքական նկատառումներով հարել էին նաև հայերն ու Եգիպտոսի ղպտիները: Ասորի միաբնակների վրա մեծ ազդեցություն էին գործել Սևերիոս Անտիոքացու հայացքները: Թեև այս ուսմունքի հետևորդները հալածանքների էին ենթարկվում քաղկեդոնականության հիմքերի վրա կանգնած բյուզանդական իշխանությունների և հոգևորականության կողմից, այդուհանդերձ VI դ. կեսերից՝ Հակոբ Բարադետո եպիսկոպոսի ջանքերով ասորի միաբնակ-

ները միավորվեցին ինքնուրույն եկեղեցու մեջ, որը կոչվեց «Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցի»: Հակոբ Բարադեոսի անունով այս եկեղեցու հետևորդները հայտնի են որպես «հակոբիկներ» և նեստորականների հետ միասին կազմում են ասորիների երկու խոշորագույն հարանվանական խմբերը: Հակոբիկները հիմնականում բնակվում էին Բյուզանդական կայսրության տիրույթներում, սակայն նրանց համայնքները գոյություն ունեին նաև Սասանյան Իրանի կազմում գտնվող Հյուսիսային Միջագետքի հատվածներում:

Հարանվանական բաժանումը և պետական սահմանով միմյանցից բաժանված լինելը նպաստեց նրան, որ նեստորականների, կամ «արևելյան» ասորիների, և հակոբիկների՝ «արևմտյան» ասորիների միջև ի հայտ գան և զարգանան որոշ տարբերություններ: Դա նախ և առաջ վերաբերում է գրավոր ավանդույթին: Եդեսիայում զարգացած ասորական հնագույն *էսթրանգելա* տառատեսակի հիման վրա հակոբիկներն ու նեստորականները ստեղծեցին սեփական տառատեսակներ՝ յուրաքանչյուրը ձայնավորներ նշելու իր ուրույն եղանակով: Այդ տառատեսակները մինչև այսօր գործածության մեջ են: Արամեական տեղական բարբառների ազդեցությամբ երկու հարանվանությունների մոտ ձևավորվեցին մինչ օրս դասական տեքստերի ընթերցանության մեջ պահպանվող արտասանական որոշ տարբերություններ, թեև քերականության, բառապաշարի և ընդհանուր ոճի առումով գրական ասորերենը միշտ մնում էր միասնական լեզու:

Նեստորականների ու հակոբիկների կողքին ասորական միջավայրում գոյացել էին նաև ավելի փոքրաթիվ հարանվանական խմբեր: Ասորիների մի զանգված ընդունեց Բյուզանդիայում պաշտոնական կարգավիճակ ունեցող քաղկեդոնականությունը (բյուզանդական ծեսի ուղղափառությունը): Սրանց կոչում էին *մալքայե* (մելքիներ), որն ասորերենից թարգմանվում է որպես «արքայական» կամ «կայսերական» և արտահայտում է բյուզանդական կայսեր հետ նույնադավան լինելը: Ի տարբերություն նեստորականների և հակոբիկների՝ ասորի քաղկեդոնական մելքիները չստեղծեցին իրենց սեփական ազգային եկեղեցին և հիմնականում ընդգրկված էին թվով շատ ավելի գերակշռող և Անտիոքի պատրիարքարանին ենթակա հունալեզու համայնքների մեջ: Ժամանակի ընթացքում մելքիների կապն ասորիների հետ թուլացավ, և նրանք գրեթե ամ-

բողջությամբ հելլենացան: Արաբական նվաճումներից հետո արաբների տիրապետության տակ գտնվող հույն և ասորի քաղկեդոնականներն աստիճանաբար դարձան արաբախոս և այսօր ընկալվում են որպես քրիստոնյա արաբներ՝ ընդգրկված լինելով Անտիոքի հույն ուղղափառ եկեղեցու հովանու ներքո: Նրանց մեծամասնությունը բնակվում է Սիրիայում, Լիբանանում, ինչպես նաև Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում: «Մելքիներ» անվանումը ներկայումս պահպանում են միայն այս եկեղեցուց ուշ միջնադարում անջատված Հույն կաթոլիկ եկեղեցու հետևորդները:

Սիրիայում բնակվող ասորի մելքիների մի համայնք իր առաջնորդ Մարոնի անունով հայտնի դարձավ որպես «մարոնիներ»: Սրանց միջավայրում լայն տարածում գտավ միակամության (մոնոֆելիզմի) գաղափարախոսությունը, և քաղկեդոնականների ճնշման տակ նրանք ի վերջո ստիպված եղան նահանջել դեպի լիբանանյան սարերը, որտեղ խառնվեցին տեղական արամեախոս բնակչության հետ: Այստեղ էլ վերջնական ձևավորում ստացավ Մարոնական ասորական եկեղեցին: Խաչակրաց արշավանքներից հետո մարոնիների միջավայրում տարածում ստացավ կաթոլիկությունը, և նրանց եկեղեցին ի վերջո ճանաչեց Վատիկանի գերագահությունը: Մարոնիները ներկայումս Լիբանանի ամենախոշոր քրիստոնեական համայնքն են և ամբողջությամբ արաբախոս են: Մեծ թվով մարոնիներ բնակվում են նաև Հյուսիսային և Հարավային Ամերիկայում: Ասորերենը՝ արաբերենի հետ մեկտեղ, սակայն ավելի քիչ ծավալով, մնում է Մարոնական եկեղեցու ծիսական լեզուն: Լինելով արևմտյան ասորական միջավայրի ծնունդ՝ մարոնիները գործածում են հակոբիկների հետ ընդհանուր ասորական տառատեսակն ու արտասանությունը: Մարոնիների դերը մեծ էր եվրոպական ասորագիտության կայացման գործում: Դրա հետ մեկտեղ՝ արամեա-ասորական ծագման գիտակցումը մարոնիների մոտ համատարած բնույթ չի կրում:

Կաթոլիկությունը տարածում գտավ նաև ասորական երկու գլխավոր հարանվանությունների միջավայրում: XVI դ. կեսերին Արևելքի եկեղեցու հոգևորականության մի մասը ճանաչեց Վատիկանի գերագահությունը՝ դնելով «Քաղղեական կաթոլիկ եկեղեցու» սկիզբը: Լինելով ի սկզբանե նեստորականների մի մասը՝ քաղղեականները որպես ծիսական լեզու պահպանեցին դասական ասորերենը և ներկայումս նեստորականների հետ գործածում են միևնույն արդի գրական ասորերենը և նեստորական տա-

նատեսակը: Քաղղեականներն այսօր Իրաքի խոշորագույն քրիստոնեական համայնքն են:

Հակոբիկների մեջ կաթոլիկությունը մի փոքր ավելի ուշ տարածում ստացավ: Կաթոլիկ հակոբիկները կազմեցին «Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցին», որն իր ծեսով և լեզվով մոտ է Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցուն:

Ասորական քրիստոնեության անքակտելի մասն են այսպես կոչված «Սուրբ Թովմասի քրիստոնյաները», որոնք բնակվում են Մալաբարում՝ Հնդկաստանի Քերալա նահանգի օվկիանոսամերձ շրջանում: Էթնիկ առումով նրանք մալայալի ժողովրդի մի մասն են և խոսում են մալայալամ լեզվով: Քրիստոնեությունը նրանց միջավայրում տարածում էր գտել դեռևս մեր թվարկության առաջին դարերում (ըստ ավանդույթի՝ Թովմաս առաքյալի ջանքերի շնորհիվ), ապա ձևավորում ստացել ինքնուրույն Մալաբարյան եկեղեցու տեսքով: Վաղ միջնադարում Մալաբարում հաստատված ասորի փախստականների ուժեղ ազդեցությամբ Մալաբարյան եկեղեցին փոխ էր առել Արևելքի եկեղեցու վարդապետությունն ու լեզուն և փաստացի դարձել նրա մի մասը: XV դ. վերջում Հնդկաստան ներխուժած պորտուգալացիները բռնի կերպով ենթարկեցին «Սուրբ Թովմասի քրիստոնյաներին» Վատիկանին, սակայն XVII դ. կեսին մալաբարցիների մի մասը հեռացավ կաթոլիկությունից և որոշեց վերականգնել իր ավանդական կապերն ասորական քրիստոնեության հետ: Քանի որ Արևելքի եկեղեցին այդ շրջանում գտնվում էր խոր անկման մեջ, Հնդկաստանի քրիստոնյաների կոչին արձագանքեց Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցին, որի միջնորդությամբ Մալաբարում ստեղծվեց «Մալանքարայի ասորի ուղղափառ եկեղեցին»: XIX դ. երկրորդ կեսին Արևելքի եկեղեցուն, այնուամենայնիվ, հաջողվեց վերահաստատել իր ներկայությունը Հնդկաստանում՝ ստեղծելով Մալաբարում «Քաղղեական ասորի եկեղեցին» (չփոթել Արևելքի եկեղեցուց անջատված Քաղղեական կաթոլիկ եկեղեցու հետ): Ասորական եկեղեցական ավանդույթն ի վերջո վերահաստատվեց նաև կաթոլիկությանը հավատարմություն պահպանած «Սուրբ Թովմասի քրիստոնյաների» մեջ: Ներկայումս Քերալա նահանգում գործում են տարբեր հարանվանություններին պատկանող ասորական ավանդույթի յոթ եկեղեցիներ, որոնց հետևորդներն իրենց թվով գերազանցում են բուն ասորիներին:

## 1.2. Հայկական *գարշունի*-ն և ուշ միջնադարի ասորական հայախոս համայնքները

Գրի եղանակը, երբ ասորական տառերը գործածվում են այլ լեզու գրառելու համար, կոչվում է *գարշունի*: Բառի ծագումը շարունակում է մնալ չպարզաբանված. փորձ է արվել այն կապել Հին Կտակարանի Ելից գրքում (2:22) հիշատակվող Մովսեսի որդի Գերշունի (Գերսամի) հետ<sup>21</sup>: «Գարշունի» ասելով սովորաբար նկատի են ունենում ասորատառ արաբերենը (արաբերեն արտասանությամբ՝ *քարշունի*), քանի որ այս եղանակով (առավելապես՝ *սերփո* արևմտյան ասորական տառատեսակով) գրված տեքստերի ճնշող մեծամասնությունն արաբերեն է:

Գարշունի գրելաձևը սկիզբ առավ, երբ մ.թ. VII դ. ասորիները հայտնվեցին արաբների տիրապետության տակ, և արաբերենն սկսեց աստիճանաբար դուրս մղել ասորերենը որպես խոսակցական և գրավոր լեզու: Ասորիների շփումն իրենց լեզվի ցեղակից արաբերենի հետ շատ ակտիվ էր. նրանք ներգրավված էին Աբբասյան խալիֆայությունում հունարենից արաբերեն իրականացվող լայնածավալ թարգմանչական գործունեության մեջ և շատ հաճախ հունարենից արաբերեն թարգմանելիս կատարում էին նաև միջանկյալ ասորերեն թարգմանություններ<sup>22</sup>: Միաժամանակ ստեղծվում էր արաբերեն գրված ասորական բնագրային գրականություն (արժե հիշատակել, օրինակ, պատմագրական հարուստ նյութ պարունակող անանուն «Սղերդի ժամանակագրությունը», որը ենթադրաբար ստեղծվել է XI դ. առաջին կեսին<sup>23</sup> կամ «Աշտարակի գիրք» աստվածաբանական աշխատությունը, որը վերագրվում է XII դ. ապրած Մարեբար Շլեմոնին<sup>24</sup>): Ձգտելով իրենց արաբալեզու գրականությունը տարանջատել մահմեդական արաբների գրականությունից և ընդգծել նրա ասորական էությունը՝ ասորիները հարմարեցրին իրենց գիրն արաբերենին, որը բնավ չի նշանակում, որ արաբերեն գրված ասորական բոլոր գործերն ասորատառ են: Հաճախ ասորատառությունը հանդես էր գալիս որպես յուրատեսակ գաղտնագրություն, երբ անհրաժեշտ էր ըստ հնա-

<sup>21</sup> *Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage*, eds. Sebastian P. Brock, Aaron M. Butts, George A. Kiraz, Lucas Van Rompay, Gorgiaspress, 2011, էջ 172:

<sup>22</sup> Hitti, Ph., *History of the Arabs*, Macmillan Education, 1970, էջ 310-11:

<sup>23</sup> Wood, Ph., *The Chronicle of Seert*, Oxford University Press, 2013:

<sup>24</sup> Wright, W., *A Short History of Syriac Literature*, London, Adam and Charles Black, 1894 (reprint 2005), էջ 255:

րավորին սահմանափակել այս կամ այն (օրինակ՝ ալքիմիական) տեքստից օգտվելու հնարավորություն ունեցող անձանց թիվը: Բացի ասորիներից՝ գարշունին որոշ տարածում ուներ և քրիստոնյա արաբների միջավայրում: Կարծիք կա, որ այս գրելաձևը նպաստել է արաբական դասական գրի վերջնական ձևավորմանը:

Ասորական գիրն իր կառուցվածքով և ընդհանուր սկզբունքով *արջադային* է, այսինքն՝ բաղաձայնագրային և որպես այդպիսին՝ մոտ է արաբականին, որը նույնպես արամեական ծագում ունի և սկիզբ է առնում նաբաթեացիների գրից<sup>25</sup>: Արաբերենն ասորական գրով գրառելու համար պահանջվում էր ընդամենը ներմուծել մի քանի լրացուցիչ նշաններ, քանի որ արաբերենի 28 տառի դիմաց ասորերենն ունի միայն 22-ը:

Երկար ժամանակ գարշունին կիրառվում էր միայն արաբերենի համար, ապա աստիճանաբար այն ընդգրկեց պարսկերենն ու, հատկապես, օսմանյան թուրքերենը (օսմաներենը): Ասորատառ օսմաներենը XIX դ. վերջից արևմտյան ասորիների մամուլի հիմնական լեզուն էր, և դրա գործածությունը պահպանվեց մինչև 1932 թ.<sup>26</sup>: Շատ ավելի քիչ ծավալով ասորական գիրը գործածվել է հունարենը, եբրայերենը, քրդերենը, լատիներենն ու մալայալամը գրառելու համար: Ասորատառ, ինչպես նաև հայատառ օսմաներենով հոդվածներ է պարունակում նաև «Բաբելոնը»:

Գոյություն է ունեցել նաև հայկական գարշունիի՝ ասորատառ հայերենի հազվագյուտ երևույթը, որն անմիջականորեն կապված է հայախոս ասորիների համայնքների երևան գալու հետ: Այդ համայնքները գոյացել էին Խարբերդի և Մալաթիայի միջև ընկած տարածաշրջանում, հավանաբար՝ XVI-XVII դդ.<sup>27</sup>: Շրջանը գտնվում է ասորիների ավանդական բնօրրանից՝ Հյուսիսային (Ասորվոց) Միջագետքից դուրս. ասորիների թիվն այստեղ սկսեց աճել X դ. երկրորդ կեսից՝ Բյուզանդական կայսրության քաջալերմամբ: Մալաթիան XII-XIII դդ. «ասորական վերածննդի»՝ ասորական գրականության վերջին վերելքի կենտրոնն էր, և այստեղ էին ծնվել և աշխատել նրա վերջին անվանի ներկայացուցիչները՝ աստվածաբան Դիոնիսիոս բար Սալիբին (†1171), պատմաբան Միքայել Ասորին (1126–1199) և մեծագույն հանրագիտակ Գրիգոր բար Հեբրայոսը

<sup>25</sup> Hitti, Ph., նշվ. աշխ., էջ 70:

<sup>26</sup> Trigona-Harany, B., *A Bibliography of Süryânî Periodicals in Ottoman Turkish*, “Hugoye: Journal of Syriac Studies”, Vol. 12, No. 2, 2009, էջ 300:

<sup>27</sup> Takahashi, H., Weitenberg, J., *The Shorter Syriac-Armenian Glossary in Ms. Yale Syriac 9, Part 1*, Journal of the Canadian Society for Syriac Studies, Volume 10, 2010, էջ 68-83:

(1226-1286): Մալաթիայի մերձակայքի Մոր Բարսաումա վանքն այս ժամանակաշրջանում Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարքների աթոռանիստն էր<sup>28</sup>: Վանքը գոյատևեց մինչև XVII դ. կեսը, սակայն XV դարից սկսած որպես Մալաթիայի շրջանի ասորիների հոգևոր կենտրոն առաջ եկավ Գերգեր ավանի մերձակայքի Մոր Աբհայ վանքը, որը գոյատևեց մինչև XVIII դ. սկիզբը: Վանքն այն մի քանի գրչական կենտրոններից էր, որտեղ հայախոս ասորիների կարիքների համար ստեղծվում էին ասորատառ հայերենով ձեռագրեր<sup>29</sup>: Քանի որ այս շրջանի ասորիները պատկանել են Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցուն, ապա ասորատառ հայերենը բացառապես հանդես է գալիս հակոբիկները *սերտո* տառատեսակով:

Անգլիացի նշանավոր ասորագետ Սեբաստիան Բրոքը հայկական գարշունիի ամենավաղ նմուշը համարել է Հռոմի Սբ. Պողոսի բազիլիկի դռներից մեկի վրա առկա «Խաչիկ» անունը, որը պատկանել է Կոստանդնուպոլսում բնակված և դուռը պատրաստած վարպետին<sup>30</sup>: Այս դռանն ու վրայի արձանագրություններին մանրամասն անդրադարձել է գերմանացի արևելագետ Անտոն Շալլը<sup>31</sup>: Քանի որ այս պարագայում խոսքը միայն անձի անվան մասին է, ապա մենք հակված չենք համարելու սա հայկական գարշունիի նմուշ, մանավանդ որ ավելի վաղ շրջանի ասորական ձեռագրերում հայկական հատուկ անուններ հանդիպում են բավականին հաճախ<sup>32</sup>:

---


<sup>28</sup> Leroy, J., *La renaissance de l'Église syriaque aux XIe-XIIIe siècles (suite et fin)*, Cahiers de civilisation médiévale. 14e année (n°55), 1971, էջ 244: Ավելի մանրամասն տե՛ս Honigmann, E., *Le Couvent de Bar Sauma et le Patriarcat jacobite d'Antioche et de Syrie*, Corpus Scriptorum Christianorum Orientalium (CSCO), 146/17, 1954:

<sup>29</sup> Takahashi, H., Weitenberg, J., նույն տեղում:

<sup>30</sup> Brock, S., *Armenian in Syriac Script*, "Armenian Studies: In Memoriam Haig Berberian", ed. Dickran Kouymjian, Lisbon, Calouste Gulbenkian Foundation, 1986, էջ 75:

<sup>31</sup> Schall, A., *Zur syrischen Inschrift am Bronzetur der Basilica San Paolo fuori le Mura in Roma*, "Römische Quartalschrift für christliche Altertumskunde und Kirchengeschichte" (RQ) 65. 1970, էջ 232-237:

<sup>32</sup> Արամեագիր հայերենի հնագույն փորձ պետք է, թերևս, համարել «դանիելյան գրերը», քանի որ դրանք, անկասկած, արամեական ծագում ունեին (այդ ժամանակ տարածաշրջանի բոլոր գրերը, բացառությամբ հունականի, արամեականի այս կամ այն տարբերակներն էին): Դա են անուղղակիորեն վկայում և Կորյունի խոսքերը, թե դանիելյան գրերը բավարար չէին հայերենի հնչյուններն արտահայտելու համար: Խոսքն այս պարագայում, ամենայն հավանականությամբ, պալմիրյան գրի մասին է: Ըստ Կորյունի՝ դանիելյան գրերը թաղված էին «այլոց դպրությանց» մեջ և ապա «վերակենդանացված»: Մաշտոցի օրոք պալմիրյան գիրն արդեն իրոք «թաղված» էր (պալմիրյան վերջին արձանագրությունը թվագրված է մ.թ. 280 թվականով), սակայն պատմական կտրվածքով պալմիրյան քաղաքակրթության անկումից դեռ այնքան ժամանակ չէր անցել, որ մնացած չլինեին նրա դպրությանը ծանոթ և այն «վերակենդանացնել» ցանկացող ուսյալները. դրանցից մեկը կարող էր լինել ասորական աղբյուրներին անծանոթ «ազնվական Դանիել Եպիսկոպոսի» նախատիպարը:



Պատկեր 1. Mingana syr. 44 ձեռագիրը

Ասորատառ հայերեն մի քանի բառեր հանդիպում են Գրիգոր բար Հերայոսի՝ սաղմոսներին նվիրված աշխատությունում, որում նա հղում է կատարում աստվածաշնչային հատված պարունակող հայկական տեքստին<sup>33</sup>:

Ասորատառ հայերենի պահպանված նմուշներն իրենց թվով զգալիորեն զիջում են ասորատառ արաբերենին ու օսմաներենին: Գիտական գրականության մեջ կամ մամուլում այս կամ այն ծավալով հիշատակվում են ընդամենը մի քանիսը, որոնցից երեքը բառարաններ կամ բառացանկեր են:

Հայկական գարշունիով պահպանված ամենահին ձեռագիրը ստեղծվել է 1574-75 թթ.՝ Մարդինի մերձակայ-

քի ասորական նշանավոր Դեյր ազ-Չաաֆարան վանքում, որը Մոր Բարսաումա վանքից հետո 1160-1932 թթ. եղել է Ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարքների աթոռանիստը: Այս ձեռագիրն ասորի արևելագետ Ալֆոնս (Հորմիզդ) Մինգանայի (1878–1937), հավաքածուի մասն է (Mingana syr. 44, պատկեր 1): Հիմնականում տրամաբանությանը վերաբերող տեքստերի կողքին ձեռագիրը պարունակում է ասորատառ հայերենով Տերունական աղոթքը: Կարելի է ենթադրել, որ գրիչը եղել է հայախոս ասորի և ավելացրել է Տերունական աղոթքն իր իսկ նախաձեռնությամբ և իր իսկ կողմից ստեղծած տառադարձության եղանակով:

<sup>33</sup> Goettsberger, J., *Die syro-armenischen und die syro-koptischen Bibelcitate aus den Scholien des Barhebraeus*, in *Zeitschrift für die Alttestamentliche Wissenschaft*, Volume 21, Issue 1, էջ 101–41:








Յեյլի ձեռագիրը հիշատակվում է Մոշե Գոշեն-Գոթթեյնի մատենագրությունում՝ Հարվարդի ձեռագրի նկարագրության տողատակում:

2006 թ. ասորագիտական Hugoye պարբերականում լույս տեսավ Յեյլի ասորական ձեռագրերի Լեո Դեպույդի անվանացանկը, որի մեջ հեղինակը տալիս է բառարանի հետևյալ նկարագրությունը. «Հետաքրքրական նմուշ է հմ. 10-ը՝ ասորերեն-հայերեն բառարանը: Հայերենը գրված է ասորական տառերով: Զանազան աղոթքներ նախորդում, հաջորդում և զուգորդում են բառացանկը: Դիակրիտիկ նշանները, որոնք ավելացված են ասորական տառերին՝ հիմնականում կարմիր թանաքով, թույլ են տալիս զանազանել հայերենին բնորոշ հնչյունները»<sup>39</sup>:

Յեյլի ձեռագրին ավելի մանրամասն անդրադարձել է Հիդեմի Տակահաշին<sup>40</sup>: Ըստ նրա՝ այդ ձեռագիրը համալսարանը 1967-68 թթ. գնել է թուրք ֆրանսագետ Մահալաթ Մենեմենջիողլուից: Դրանից մի քանի տասնամյակ առաջ ձեռագիրը, ի թիվս ասորական այլ ձեռագրերի, պատկանել է Օսմանյան արքունիքի արարողապետ, ազգությամբ ասորի Պետրոս Էրոնուրին (Ֆեհիմ Բեկ): Վերջինիս հավաքածուի ձեռագրերը նրա հայրը՝ Թիմոթեոս Պաուլոս Ֆեհիմը, ձեռք էր բերել Ուրֆայում, երբ 1883-87 թթ. այդ քաղաքի ասորի ուղղափառ եպիսկոպոսն էր<sup>41</sup>: Ձեռագրերի մեծ մասը պատկանել է



Պատկեր 4. Մեկ էջ Յեյլի համալսարանի ձեռագրից

<sup>39</sup> Depuydt, L., *Classical Syriac Manuscripts at Yale University: a Checklist*, “Hugoye: Journal of Syriac Studies”, Vol. 9, No. 2, 2006:

<sup>40</sup> Takahashi, H., Weitenberg, J., *The Shorter Syriac-Armenian Glossary in Ms. Yale Syriac 9: Նույնի՝ The Shorter Syriac-Armenian Word List in Ms. Yale Syriac 9 - Part2: Glossary/Translation*, “Hugoye: Journal of Syriac Studies”, Vol. 14, No. 1, 2011, էջ 87-144:

<sup>41</sup> Հարկ է նշել, որ Ուրֆայի՝ նախկին Եդեսիայի ասորիները նույնպես հայախոս էին, և Հալեպում և Հյուսիսային Ամերիկայում բնակվող նրանց սերունդների միջավայրում հայերենը մինչև օրս՝ որպես «ընտանեկան լեզու» որոշ տարածում ունի:

քաղաքի Սուրբ Պողոս-Պետրոս ասորական եկեղեցուն, որտեղ բերվել է նույն Մոր Աբհայ վանքից: Հետևելով այս շղթային՝ Տակահաշին ենթադրել է, որ Յեյլի ձեռագիրը, ինչպես և Հարվարդինը, ծագում է Մոր Աբհայ վանքից: Ի տարբերություն Հարվարդի ձեռագրի՝ այս մեկը չի պարունակում հիշատակարաններ, որոնք լույս կսփռեին նրա ծագման վրա: Բացի բուն բառարանից, որը զբաղեցնում է ձեռագրի 4-րդից 199-րդ էջերը և Դուլաբանիի հիշատակած տեքստերից, ձեռագիրը (պատկեր 4) պարունակում է հայ-ասորական ավելի հակիրճ բառացանկ (էջ 231-241), որին և նվիրված է Հիդեմի Տակահաշիի հիշատակված հոդվածը:




Պատկեր 5. Մեկ էջ Մալկե բար Նիկողիմոսի ձեռագրից

Հայկական գարշունիով հաջորդ ձեռագիրը պարունակում է եռալեզու՝ ասորերեն-հայերեն-արաբերեն բառարան: Ձեռագիրը 1665-66 թթ. Դիարբեքիում պատճենել է ոմն Մալքե բար Նիկողիմոսը, որը ծագումով Գերգերի շրջանից էր: Ձեռագիրն ունի 333 էջ: Բառարանի մեծ մասում բառերը խմբավորված են թեմատիկ սկզբունքով, ապա՝ այբբենական: Ձեռագիրը պահվում է Կահիրեի Քրիստոնյա արևելքի ուսումնասիրման ֆրանցիսկյան կենտրոնում և հիշատակվում է նրա մատենագրությունում<sup>42</sup> (պատկեր 5, 6):

Ասորատառ հայերենով երկու տեքստեր՝ «Հավատամք» և շարական, պարունակում է Վատիկանի գրադարանի ասորական հավաքածուի մի ձեռագիր (Vat. Syr. 544), որը 1711-12 թթ. արտագրել է Իբրահիմ անունով ասորի մի սարկավագ: Հայկական գարշունիի այս նմուշներին գիտական գրականության մեջ անդրադարձել է Արնոլդ

<sup>42</sup> Brock, S., Macomber, W.F., Mistrich V., *Catalogue des manuscrits syriaques, éthiopiens et arméniens du Centre d'Etudes Orientales Chrétiennes du Mouski, Le Caire*, in *Studia Orientalia Christiana Collectanea XVII*, Jerusalem, 1985, էջ 215: Գոհունակությամբ պետք է նշենք, որ այս ձեռագրին իր դիպլոմային աշխատանքն է նվիրել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի 2013 թ. շրջանավարտ Էսթեր Պետրոսյանը:

վան Լանդշուտը<sup>43</sup>: Սրանց առանձնահատկությունն այն է, որ ասորական տառերի կողքին պատահում են արաբական և հայկական տառեր կամ առանձին բառեր: Այսպես՝ «հավատամքի մի աստված» բառակապակցությունում «աստված» բառը ներկայացված է արաբական الله *ալլահ* բառով, որը հանդես է գալիս որպես հետերոգրամ, թեև «որդի աստծո» կապակցությունում այդ նույն բառը գրված է ասորական տառերով: Նմանանապես՝ «Հիսուս Քրիստոս» անունն արտահայտված է հայատառ *ju pu* հապավումով: Բացի դրանից՝ տեքստի ընթերցումը դյուրացնելու նպատակով գրիչը հաճախ ասորական տառերի տակ մանր գրով ավելացրել է համապատասխան հայկական տառերը<sup>44</sup>: Պատկեր 7-ը ներկայացնում է Վան Լանթշուտի հողվածի մեջ գետնեղված «Հավատամքի» տպատառ վերարտադրությունը՝ առանց ասորական տառերի տակ ավելացված հայկականների:



Պատկեր 6. Մալքե բար Նիկողոսի ձեռագրի ասորատառ արաբերենով հիշատակարանը

Ըստ հայ նշանավոր աշխարհագրագետ, Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանի (1758-1833)՝ «մինչև ցայժմ լսեմք ուրեք ուրեք գտանիլ հայկական մատենից գրեալ ասորի տառիք. յորոց զմին ինքնին տեսեալ վկայեաց մեզ Սիմոն Ասսեմանին, որ մի էր ի վարժապետացն ի Պետաւիոն» («մինչև այսօր լսում ենք, որ ժամանակ առ ժամանակ գտնվում են ասորական տառերով գրված հայկական մատյաններ, որոնցից մեկն անձամբ տեսնելու մասին մեզ հայտնեց Սիմոն Ասսեմանին, ով մեկն էր Պադուայի (համալսարանի) դասախոսներից»)<sup>45</sup>: Թեև Ինճիճյանը չի մանրա-

<sup>43</sup> Van Lantschoot, A., *Un Texte Arménien en Lettres Syriaques* in "Mélanges Eugène Tisserant", Vol. III/Orient Chrétien, Biblioteca Apostolica Vaticana, 1964, էջ 419-428:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 420-421:

<sup>45</sup> Ինճիճեան, Ղ., *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, Վենետիկ, 1836, հատ. 3, էջ 71, տողատակ 1: Խոսքը մարոնի ասորագետների Ասսեմանի տոհմի վերջին ներկայացուցչի՝ Սիմոն



իրենց եկեղեցական արարողություններում<sup>46</sup>: Հայերենը ժամերգության մեջ գործածվել է նաև Մարդինի Քառասուն նահատակների ասորական եկեղեցում<sup>47</sup>, թեև այս քաղաքի (ինչպես և Սղերդի<sup>48</sup>) ասորիներն ու հայերն առավելապես խոսում էին արաբերենի անատոլիական բարբառով:

Այս նույն Ավետարանին իր «Հայոց գրերը» գրքում անդրադառնում է նաև Հրաչյա Աճառյանը, որը, մասնավորապես, գրում է. ««Արմենիա» թերթի 23-րդ համարում (1914 թ.) Տաճատ ստորագրությամբ մի հոդված է եղել, ուր հիշվում է, թե Տիգրանակերտում կա ասորատառ հայերեն մի ավետարան. միանգամայն կասկած է հայտնվում նույն ավետարանի մնացած լինելու մասին: Թերթի թղթակիցը պատասխանում է Տիգրանակերտից, որ նույն Ավետարանը դեռ անկորուստ մնում է: Նույնը արտատպված ենք գտնում Բազմավեպում (1914, էջ 95): Արդյոք այդ Ավետարանը մինչև այժմ կա՞, թե նա էլ վառվեց համաշխարհային հրդեհին»<sup>49</sup>:

Վերջապես, հայտնի է, որ XIX դ. սկզբում կազմվել է Ծաղկազարդին նվիրված եկեղեցական մի հավաքածու, որի մեջ զետեղվել են ասորերեն, հայերեն, արաբերեն, թուրքերեն ու պարսկերեն շարականներ՝ բոլորն ասորատառ: Այս ձեռագիրը նույնպես կազմում է Ալֆոնս Մինգանայի հավաքածուի մի մասը (Mingana syr. 520)<sup>50</sup>:

Ծնունդով դիարբեքիրցի ասորի լրագրող Նաում Ֆահկի (1868-1930)՝ ԱՄՆ-ում հրատարակած *Բեթնահրին* («Միջագետք») ասորական թերթը պարունակում է ասորատառ հայերենի մի քանի նմուշներ: Մասնավորապես, թերթի ընթերցողներից մեկը կազմել է հայերենում գործածվող ասորական բառերի մի քանի ցանկեր, որոնք ասորատառ թուրքերենով վերնագրված են «Ասորական բառեր հայերենում»: Այստեղ զետեղված պատկերում (պատկեր 8<sup>51</sup>) ասորատառ հայերենը ներկայացված է միջին սյունակում (աջ սյունակը պարունակում է ասորական բառի դասական գրությունը, իսկ ձախը՝ բառի թարգմանությունն ասորատառ թուրքերենով):

<sup>46</sup> Krikorian, M., *Armenians in the Service of the Ottoman Empire*, London, Routledge & Kegan Paul, 1977, էջ 117:


<sup>47</sup> Trigona-Harrany, B., նշվ. աշխ., էջ 199, տողատակ 549:

<sup>48</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 2, էջ 438:

<sup>49</sup> Աճառյան, Հ., *Հայոց գրերը*, Եր., Երևանի համալս. հրատ., 1984, էջ 473:

<sup>50</sup> Brock, B., նշվ. աշխ., էջ 80:

<sup>51</sup> Սիրալիորեն տրամադրել է Բենջամին Տրիգոնա-Հարանին:



Պատկեր 8. «Բեթնահրին» պարբերականի բառացանկերից մեկը

Խնդրո առարկային թերևս որոշ առնչություն կարող է ունենալ Խարբերդում և Դիարբեքիում Մեծ Բրիտանիայի նախկին փոխհյուպատոս Թովմաս Մկրտչյանի վկայությունը, որը 1938 թ. լույս է տեսել Ֆրեզնոյի «Մշակ» թերթում, ապա անգլերեն թարգմանությամբ արտատպվել Լոս Անջելեսում խարբերդցի ասորիների կողմից 1932-38 թթ. հրատարակված Assyrian Progress պարբերականում: Ըստ Մկրտչյանի՝ 1896 և 1898 թթ. նա բրիտանացի արևել-

լագետ Ջեյմս Ռանդել Հարիսի (1852–1941) հետ երկու անգամ վերոհիշյալ Դեյր ազ-Ջաաֆարան վանքում այցելել է Ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարք Իգնատիոս Արդելմասիին, որից Ռանդելը փորձում էր գնել «հարավային հայերի» մասին մի հին գիրք կամ ձեռագիր՝ գրված «ասորական տառերով»: Բրիտանացի գիտնականը գրքի դիմաց առաջարկում էր 3000 ֆունտ սթերլինգ, սակայն պատրիարքը հրաժարվեց վաճառել այն: Անհաջողությամբ ավարտվեց նաև գրքի կրկնօրինակն ստանալու փորձը<sup>52</sup>: Թեև Մկրտչյանի վկայությունից պարզ չէ, թե ինչ լեզվով է գրված եղել գիրքը, այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ այն ասորատառ հայերենով կամ օսմաներենով էր (ասորատառ արաբերենն այս պարագայում քիչ հավանական է թվում), քանի որ ուշ միջնադարում, երբ ամենայն հավանականությամբ գրվել է այդ պատմությունը, ասորերենն այլևս չէր գործածվում այս տիպի գրականություն ստեղծելու համար:

### 1.3. Ասորիները XIX-XX դդ. Օսմանյան կայսրությունում և Իրանում

Մինչև 1915 թ. Մեծ եղեռնը, որի զոհերը հայերի հետ միասին դարձան նաև տասնյակ հազարավոր ասորիներ, վերջիններիս աշխարհագրական տարածումն ուներ հետևյալ պատկերը: Նեստորականներն ունեին բնակության երկու խոշոր շրջան: Առաջինը

<sup>52</sup> Assyrian Progress, Volume III (January 1937 – December 1938), April 1937, Lulu Publishing, 2010:



Հաքքյարի լեոնային անկլավն էր (արամեերեն *աքքարե*՝ «ոանչպարներ» բառից), որը զբաղեցնում է այսօրվա Թուրքիայի հարավարևելյան անկյունը: Հաքքյարիի նեստորականները բաժանված էին մի քանի ցեղերի և համեմատաբար անկախ էին Օսմանյան իշխանություններից: Այստեղի Քոչանիս գյուղում գտնվում էր Արևելքի եկեղեցու կաթողիկոսի նստավայրը: Կաթողիկոսը, բացի կրոնական պարտականություններից, կատարում էր նաև նեստորականների աշխարհիկ առաջնորդի դերը: Հաքքյարիից բացի՝ նեստորականներ կային նաև Վանի վիլայեթի հարակից շրջաններում: Այստեղի ասորիների կախվածությունն Օսմանյան իշխանություններից և տեղացի մահմեդականներից ավելի ուժեղ էր<sup>53</sup>:

Նեստորականների բնակության երկրորդ շրջանը գտնվում էր Իրանում՝ Ուրմիա լճին արևելքից հարող դաշտավայրում, ներառյալ բուն Ուրմիա քաղաքը: XIX դ. առաջին տասնամյակներից սկսած՝ այստեղ հաստատվեցին օտարերկրյա՝ ամերիկացի, անգլիացի, ֆրանսիացի և ռուս միսիոներները, որոնց ջանքերով Ուրմիայի շրջանի ասորիների մեծամասնությունը դարավերջում արդեն բողոքականներ, բյուզանդական ծեսի ուղղափառներ ու կաթոլիկներն էին, մինչ Արևելքի եկեղեցուն հավատարմություն պահպանածները փոքրամասնության էին վերածվել:

Նեստորականների հետ ասորիների արևելյան խումբը կազմող քաղղեականները հիմնականում բնակվում էին Հաքքյարիից դեպի հարավ տարածվող Մոսուլի դաշտավայրում, որը կազմում էր Մոսուլի վիլայեթի մասը: Այստեղ նրանց գլխավոր կենտրոնը Ալկոշ գյուղաքաղաքն էր, որի մերձակայքում գտնվում էր քաղղեականների ամենանշանավոր Ռաբբան Հորմիզդ վանքը: Քաղղեական գյուղեր կային նաև Ուրմիայի շրջանում, ինչպես նաև Վանի և Դիարբեքիրի վիլայեթներում, այդ թվում՝ Սղերդում:

Արևելյան ասորիներն իրենց մեծամասնությամբ շարունակում էին խոսել զանազան արդի արամեական բարբառներով, որոնք բաժանվում էին մի քանի խմբերի: Ալկոշում, ուշ միջնադարից սկսած, որոշ տարածում ուներ ասորալեզու պոեզիան, սակայն իսկական զարգացում արդի արամեական բարբառներն ապրեցին Ուրմիայում: Այստեղ հաստատված միսիոներները լրջորեն ուսումնասիրում էին տեղի արամեական բարբառները, որոնցից մեկի՝ Ուրմիա քաղաքի բարբառի հիման վրա նրանց ջանքերով

<sup>53</sup> Լալայան, Ե., *Վասպուրականի ասորիները*, «Ազգագրական հանդես», 24 (I), 1913, էջ 181-232 (<http://ethno.asj-oa.am/644/>):

XIX դ. կեսերից զարգացավ գրական նոր լեզու՝ արդի գրական արամեերենը (արդի ասորերենը), որը գործածում է ասորական գրի նեստորյան տարատեսակը: Այս լեզվով, որն ի վերջո դարձավ բոլոր արևելյան ասորիների ընդհանուր գրական լեզուն, իրականացվում էր հանրակրթություն միսիոներների հիմնած բազմաթիվ դպրոցներում և քոլեջներում, նրանով հրատարակվում էին գրքեր և պարբերականներ: Միսիոներների նման ակտիվ լուսավորչական գործունեության շնորհիվ Ուրմիայի ասորիների կրթական մակարդակը զգալի աճ ապրեց, և քաղաքը, փաստորեն, դարձավ ասորիների թիվ մեկ մշակութային կենտրոնը:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմն Օսմանյան կայսրությունում, տարբեր աղբյուրների գնահատմամբ, հաշվում էին մոտ 250 հզ ասորիներ: Նրանց գրեթե կեսը, ըստ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի տվյալների, բնակվում էր հայկական վիլայեթներում՝ 60 հազար Դիարբեքիրի, 25 հազար՝ Սեբաստիայի, 18 հազար՝ Վանի, 15 հազար՝ Բիթլիսի, 5 հազար՝ Խարբերդի (Էրզրումի վիլայեթում, որն ամենահեռուն էր ասորիների պատմական բնօրրան Ասորիքից, ասորիներ չկային)<sup>54</sup>: Ասորիների մյուս կեսը բնակվում էր Ադանայի (Ադանա, Մարաշ), Հալեպի (Ուրֆա, Հալեպ, Կամիշլի), Սիրիայի (Դամասկոս, Համա) և Մոսուլի վիլայեթներում: Օսմանյան ուղղափառ և կաթոլիկ ասորիների մի մասը կենտրոնացած էր նաև Կոստանդնուպոլսում:

Օսմանյան հակոբիկների հոժ բնակության ամենախոշոր շրջանը Տուր Աբդինն<sup>55</sup> էր՝ այսօրվա Թուրքիայի հարավում: Վարչականորեն Տուր Աբդինը կազմում էր Դիարբեքիրի վիլայեթի Մարդինի սանջակի մի մասը: Այն պատմական Ասորիքի մի մասն է, ասորական վանականության հնագույն օջախը, որի բնական սահմանները հյուսիսում և արևելքում Տիգրիս գետն է, հարավում՝ թուրք-սիրիական սահմանը, իսկ արևմուտքում՝ Մարդին քաղաքը: XX դ. սկզբին Տուր Աբդինում հաշվում էին ավելի քան 150 ասորական գյուղեր, որոնցից մեկը Նուսայբինն էր՝ նախկին Մծբինը, ասորական մշակութային խոշորագույն կենտրոնը, որը թուրքական տիրապետության տակ վերածվել էր խարխուլ ավանի: Տուր Աբդինի կենտրոնը Միդյաթ քաղաքն է, որի բնակչության մեծ

<sup>54</sup> Léart, M. (Krikor Zohrap), *La question arménienne à la lumière des documents*, ed. Paris, 1913 ([http://armenews.com/IMG/La\\_question\\_Armenienne\\_a\\_la\\_lumiere\\_des\\_documents\\_1913.pdf](http://armenews.com/IMG/La_question_Armenienne_a_la_lumiere_des_documents_1913.pdf)); McCarthy, John, *Muslims and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*, New York University Press, 1983, էջ 102-03:

<sup>55</sup> Արամեերեն՝ «[Աստծո] երկրպագուների սար»:

մասը XX դ. սկզբին հակոբիկ ասորիներն էին: Տուր Աբդինում կային նաև ոչ բազմաթիվ քաղղեականներ, նեստորականներ և ասորի կաթոլիկներ:

Տուր Աբդինն այսօր էլ Ասորի ուղղափառ եկեղեցու կարևոր կրոնա-մշակութային կենտրոնն է: Այստեղ գտնվում են բազմաթիվ նշանավոր եկեղեցիներ և վանքեր, որոնցից կարևորագույններն են Մոր Գաբրիելի և Մոր Խնանյո («Դեյր ալ-Ջաաֆարան») վանքերը:

Օսմանյան կայսրության իշխանության ներքո և օսմանյան իշխանությունների աջակցությամբ Տուր Աբդին և նրան սահմանակից շրջաններ սկսեցին ներթափանցել քրդերը, որոնք պարբերաբար քրիստոնյաների ջարդեր էին կազմակերպում, հաճախ՝ նույն օսմանյան իշխանությունների հրահրումով: Ջարդերը չէին սահմանափակվում Տուր Աբդինով. այսպես, 1829 թ. քրդերը ասպատակեցին Մոսուլի վիլայեթի Ալկոշ գյուղաքաղաքի մերձակայքում բնակվող հակոբիկների վրա և սրի քաշեցին հարյուրավոր խաղաղ բնակիչների, այդ թվում՝ հոգևորականների: Հակոբիկների ամենաարյունալի կոտորածը տեղի ունեցավ 1895 թ. Եդեսիայում, որտեղ քրդերը իշխանությունների հորդորով ոչնչացրին 15 հզ ասորիների:

Ի տարբերություն նեստորականների՝ հակոբիկները, ինչպես և քաղղեականները, չունեին ցեղային բաժանում: Բնակվելով խոշոր, բազմազգ քաղաքներում և դրանք շրջապատող գյուղերում՝ նրանք աշխարհագրորեն նեստորականների պես մեկուսացված չէին: Սա մի կողմից նրանց ավելի խոցելի ու մահմեդականներից ավելի կախված էր դարձնում, սակայն մյուս կողմից նպաստում էր նրանց ավելի բաց լինելուն և Հաքքյարիի նեստորականների համեմատ կրթվածության ավելի բարձր մակարդակին: Ի տարբերություն նեստորականների՝ արևմտյան ասորիներն ավելի լավ էին ինտեգրված օսմանյան հասարակության մեջ և ավելի լոյալ էին Օսմանյան կայսրությանը: Նրանց մտավորականության շրջանում տարածում ուներ այն գաղափարը, թե բարեփոխված և ժողովրդավարական Օսմանյան կայսրությունում կարելի է հասնել մահմեդականների հետ խաղաղ գոյակցության, իրավահավասարության և ազգային կյանքի զարգացման: Հայերի ազգային-ազատագրական շարժումն ասորական մտավորականության կողմից հաճախ դիտվում էր որպես լուրջ սպառնալիք ասորական ինքնությանը. սեփական ազ-

գային-ազատագրական գաղափարախոսություն և շարժում օսմանյան ասորիները չունեին:

Ինչպես և Ուրմիայի շրջանի ասորիները, Օսմանյան կայսրության քրիստոնյաները հասանելի էին արևմտյան կաթոլիկ և բողոքական միսիոներների համար, որոնք նրանց միջավայրում զգալի հաջողությունների էին հասել: Այսպես, Մարդինի հայերի ու ասորիների զգալի հատվածը կաթոլիկություն էր ընդունել, իսկ հայ և ասորի բողոքականների մեծ թվով աչքի էին ընկնում Խարբերդն ու Ուրֆան<sup>56</sup>:

Օսմանյան կայսրությունում հակոբիկները, լինելով առաքելական հայերի հետ նույնադավան, կազմում էին հայկական *միլլեթ*-ի, այսինքն՝ պաշտոնապես ճանաչված և ներքին ինքնավարություն վայելող կրոնական փոքրամասնության մի մասը: Պաշտոնական փաստաթղթերում նրանց երբեմն նույնիսկ կոչում էին *յաղուբի էրմենիլեր*, այսինքն՝ «հակոբիկ հայեր», թեև ավելի տարածված էր *սյուրյանի կադիմ* «հին ասորիներ», այսինքն՝ ոչ կաթոլիկներ կամ բողոքականներ անվանումը: Մինչև 1783 թ. «հակոբիկներն» ունեին օսմանյան իշխանությունների հետ անմիջականորեն շփվելու հնարավորություն, սակայն այդ թվականից հետո իշխանությունները, որոնք ցանկանում էին ըստ հնարավորին կենտրոնացնել քրիստոնյա համայնքների կառավարումը, զրկեցին նրանց այդ իրավունքից: Հակոբիկները պետք է այդուհետ դիմեին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի ծառայություններին, ով ներկայացնում էր մայրաքաղաքում բոլոր միաբնակ քրիստոնյաներին (նույն իրավիճակը տիրում էր և Երուսաղեմում, որտեղ մինչև 1865 թ. ասորի, ղպտի և եթովպացի հոգևորականությունը ենթակա էր հայոց պատրիարքին):

Հայկական վիլայեթների խոշոր քաղաքներում և բազմաթիվ գյուղական վայրերում հայերն ու ասորիներն ապրում էին կողքկողքի և ունեին բարիդրացիության և համագործակցության բազմադարյան ավանդույթներ: Հայ առաքելական եկեղեցին չէր փորձում միջամտել քույր Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցու ներքին գործերին, թեև եղել են անախորժ բացառություններ (առավելապես՝ եկեղեցապատկան ունեցվածքի տնօրինման իրավունքի շուրջ): Սա որոշ լարվածություն էր առաջացնում երկու նույնադավան քրիստոնյա եկեղեցիների հարաբերություններում և ժամանակ առ ժամանակ

<sup>56</sup> Հակոբյան, Ա., նշվ. աշխ., էջ 538:

ստիպում էր ասորիներին ընկալել թվով իրենց անհամեմատ գերազանցող, տնտեսական, մշակութային և լեզվական առումներով գերիշխող և քաղաքականապես ակտիվ հայերին որպես իրենց ազգային ինքնությանը սպառնացող վտանգ: Նախորդ գլխում հիշատակված ասորի լրագրող Նաում Ֆաիկն իր հոդվածներից մեկում գրել է, թե հայերը, դիտելով իրենց ու ասորիներին որպես մեկ միասնություն, «ավերել են մեր միլիթրը, մեր տեսակն ու մեր լեզուն, գրավել են մեր եկեղեցիները, վանքերն ու կրոնական հաստատությունները, դարձրել են մեզ իրենց ենթակաները»<sup>57</sup>: Նրան են պատկանում այն խոսքերը, թե ասորիները «մեկ կաթիլ են հայկական ծովի մեջ» և «հայերի ստվերում են»: 1895-96 թթ. հայկական ջարդերից հետո Ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարք Իգնատիոս Աբդելմասիհը շտապեց իր հավատարմությունը հայտնել Օսմանյան իշխանություններին և նրանց հասցեագրված նամակներից մեկում գրել, թե «հայերը անցյալում փորձել են հայացնել մեր լեզուն և մեր կրոնը, որոնք մինչ օրս գոյատևել են շնորհիվ մահմեդական օրենքի <...> Բիթլիսի և Ուրֆայի մեր հոգևոր առաջնորդների նամակները, որոնք ստորագրված են նաև այլ հարգված անձանց կողմից, ապացուցում են, որ հայերը թալանել և սպանել են մեր համայնքներից շատերին»<sup>58</sup>: Այս կապակցությամբ Դիարբեքիրում Մեծ Բրիտանիայի հյուպատոսը տեղեկացրել է Կոստանդնուպոլսում իր դեսպանությանը, որ այս և նման այլ նամակները գրվել են Դիարբեքիրի վալիի պարտադրանքով<sup>59</sup>:

Սկսած 1870-ականներից՝ հակոբիկները դիմում էին օսմանյան իշխանություններին՝ խնդրելով իրենց ճանաչել որպես ինքուրույն միլլեթ: Օսմանյան կառավարությունը 1882 թ. ի վերջո գնաց այդ քայլին, և ասորի պատրիարք Իգնատիոս Պետրոս IV-ը (1872-1894), առնվազն թղթի վրա, ստացավ կառավարության հետ պաշտոնական շփման մեջ մտնելու՝ հայոց պատրիարքի հետ հավասար իրավունք: Բացի պատրիարքից՝ XIX դ. երկրորդ կեսին Ասորի ուղղափառ եկեղեցին Օսմանյան կայսրությունում ուներ ևս ութ բարձրաստիճան եկեղեցականներ. դրանք էին Երուսաղեմի, Մոսուլի, վերջինի մերձակայքում գտնվող Մար Մաթթա վանքի, Խարբերդի, Ուրֆայի և Մարդինի

<sup>57</sup> Trigona-Harrany, B., *The Ottoman Süryânî from 1908 to 1914*, Gorgias Press, 2009, էջ 199:

<sup>58</sup> Joseph, J., *Muslim-Christian Relations and Inter-Christian Rivalries in the Middle East*, Albany, State University of New York Press, 1983, էջ 92-93:

<sup>59</sup> Նույն տեղում:

Եպիսկոպոսները, ինչպես նաև ևս երկու եպիսկոպոսներ, որոնք կապված չէին որևէ թեմի կամ վանքի հետ:

Ձևականորեն հայկական առաքելական միլլեթին էին դասվում նաև Վանի վիլայեթի նեստորականները, չնայած զուտ դավանական առումով Հայ առաքելական եկեղեցին «անհամատեղելի» է Արևելքի եկեղեցու հետ: 1864 թ. անհաջող փորձ արվեց ստեղծելու առանձին նեստորական միլլեթ: Իրենց աշխարհագրական մեկուսացվածության և կենտրոնական իշխանությունից ինքնավարության ավելի բարձր աստիճանի պատճառով նեստորականները, փաստորեն, դուրս էին մնում միլլեթների համակարգից:

Քաղղեական և Ասորի կաթոլիկ եկեղեցիների հետևորդները պատկանում էին 1831 թ. ստեղծված հայ կաթոլիկների միլլեթին (Հայ կաթոլիկ եկեղեցու համայնքի մեջ ասորիների ընդգրկում դեռևս XVIII դ. արձանագրվել է Մարդինում<sup>60</sup>): Քաղղեականները, որպես ինքնուրույն միլլեթ, առանձնացան 1889 թ., իսկ կաթոլիկ ասորիների համար այդ գործընթացն ավարտվեց 1890-ականների վերջում:

Ինչ վերաբերում է բողոքականներին, ապա բրիտանական ճնշման ներքո Օսմանյան կայսրությունը 1850 թ. հայտարարեց բողոքականների միլլեթ ստեղծելու մասին<sup>61</sup>, սակայն փաստացի ճանաչում այն այդպես էլ չստացավ: Կայսրության բողոքականների ճնշող մեծամասնությունը հայեր էին, և բողոքականություն ընդունող ասորիներն ինքնաբերաբար միավորվում էին հայերի հետ ընդհանուր՝ իր էությամբ հայկական համայնքի մեջ (Ուրֆայում, սակայն, բողոքական ասորիներն ունեին իրենց սեփական եկեղեցին<sup>62</sup>):

Լեզվական առումով Օսմանյան կայսրության արևմտյան ասորիները բավականին խայտաբղետ հավաքածու էին: Արդի արամեական բարբառները պահպանվել էին միայն Տուր Աբդինում, ինչը միավորում էր այդ շրջանը արևելյան ասորիներով (նեստորականներով և քաղղեականներով) բնակեցված Հաքքյարիի, Ուրմիայի և Մոսուլի

---

<sup>60</sup> De Courtois, S., *The Forgotten Genocide: Eastern Christians, the Last Arameans*, Gorgias Press, 2004, էջ 171:

<sup>61</sup> Shaw S., Shaw E., *History of the Ottoman Empire and Modern Turkey: Volume 2*, Cambridge University Press, 2002, էջ 127:

<sup>62</sup> Kieser, H.-L., *Ottoman Urfa and its Missionary Witnesses*, in *Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfa*, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2006, էջ 413:

շրջանների հետ: Արդի արամեական բարբառներ պահպանվել էին նաև Դիարբեքիրի մերձակայքում. դրանցից մեկը՝ Մլահսո գյուղինը, գոյատևեց մինչև XX դ. վերջը և ներկայումս մեռած է համարվում: Սիրիայի ասորիները գերազանցապես արաբախոս էին, նրանց մոտ տարածում ունեին նաև արաբական և արաբացված անունները, և արաբները նրանց հաճախ ընկալում էին որպես քրիստոնյա արաբներ: Ինչպես նշեցինք, արաբերենը տարածված էր նաև Մարդինում, որտեղ այդ լեզվով խոսում էին ոչ միայն ասորիները, այլև հայերը<sup>63</sup>: Արևելյան Անատոլիայի գյուղաբնակ ասորիները հիմնականում թրքախոս և քրդախոս էին:

Առանձին և բավականին սովոր զանգված էին հայախոս ասորիները: Ինչպես նշվեց նախորդ գլխում, հայախոս ասորիների խոշոր համայքներ առնվազն XVII դ. կեսերից գոյություն ունեին Մալաթիայի և Խարբերդի միջև ընկած տարածքում, որտեղից Մոր Աբհայ վանքն ասորատառ հայերենի գլխավոր կենտրոններից մեկն էր:

XIX դ. ամբողջապես հայախոս էին Խարբերդի և Ուրֆայի ասորիները: Բացի դրանից՝ անկախ ազգությունից, հայախոս էին Դիարբեքիրի բոլոր քրիստոնյաները<sup>64</sup>: Մեծ թվով հայախոս ասորիներ կային Բիթլիսում, Մալաթիայում, Մարաշում և Ադանայում: Ըստ էության՝ հայաշատ բոլոր վայրերում ասորիները խոսում էին հայերեն և քրդերեն<sup>65</sup>:

#### 1.4. Խարբերդի հայախոս ասորիները

Ասորիների ներկայությունը Խարբերդում արձանագրված է XI դարի սկզբից, երբ քաղաքը՝ «Հեսնա դ-Ջիյադ» («Ջիյադի բերդ») անվամբ հիշատակվում է Անտիոքի ասորի

<sup>63</sup> Մարդինցի կաթոլիկ հայերի շառավիղները մինչև օրս յուրատեսակ «ենթահամյանքներ» են կազմում Սփյուռքի մի քանի գաղթօջախներում, որտեղ նրանց «հին հայեր» են կոչում. նրանք, որպես կանոն, արաբախոս են մնում: Հարկ է նշել, որ մարդինցի կաթոլիկ հայերի մի մասն ասորական ծագում ունի, քանի որ, ինչպես արդեն նշվեց, XVIII դ. երբ Մարդինում դեռ չկային ասորական կաթոլիկ հաստատություններ, կաթոլիկություն ընդունել ցանկացող ասորիներն ընդգրկվում էին կաթոլիկ հայերի համայնքի մեջ: Անուղղակի կերպով այս հանգամանքը ներկայումս դրսևորվում է նրանով, որ «հայ կաթոլիկ» հասկացությունը հաճախ դիտվում է որպես առավելապես հարանվանական, և ոչ անպայման՝ ազգային պատկանելություն արտահայտող (հիշենք Ուկրաինայի «հույն կաթոլիկներին», որոնք ազգությամբ բացառապես ուկրաինացիներ են):

<sup>64</sup> Kévorkian, R., *Demographic Changes in the Armenian Population of Diarbekir, 1895-1914*, in *Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfa*, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2006, էջ 265:

<sup>65</sup> De Courtois, S., նշվ. աշխ., էջ 17, 64:

ուղղափառ եկեղեցու թեմերի ցանկում<sup>66</sup>: «Հեսնա դ-Չաիդ» արտասանական տարբերակով քաղաքը հիշատակում է ասորի խոշորագույն հանրագիտակ Գրիգոր բար Հեբրայոսը (1226-1286): Հետագայում ավելի է տարածվում արաբական՝ «Հիսն Ջիյադ» տարբերակը: Այն իր «Երկրների բառարանում» հիշատակում է արաբ անվանի աշխարհագրագետ Յակուբ ալ-Համավին (1179-1229)՝ «Հիսն Ջիյադ, հայկական հողերում, այսօր հայտնի է որպես Խարթաբիրթ» (حصن زياد بأرض أرمينية ويعرف ليوم بخرتبرت): Մեկ այլ նշանավոր արաբ աշխարհագրագետ՝ Շամսուդդին ադ-Դիմաշկին (1256-1327), պարզաբանում է, որ «Խարթաբիրթ» է կոչվել քաղաքը, իսկ «Հիսն Ջիյադ»՝ նրա հինավուրց միջնաբերդը<sup>67</sup>:

Ինչպես նշել էինք, տարածաշրջանում ասորիների թվաքանակը, բյուզանդացիների քաջալերմամբ, աճել է XII-XIII դդ., և նրա կենտրոնը՝ Մալաթիան, դարձել «ասորական վերածննդի»՝ ասորական գրականության վերջին վերելքի կենտրոնը: Մալաթիայի մերձակայքի Մոր Բարսաումա վանքում հաստատվել էր նաև Ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարքի նստավայրը: Խարբերդի ասորական թեմը կրկին հիշատակվում է XIII-XIV դդ.: Այսպես, XIII դ. կեսերին Խարբերդի մետրոպոլիտ է եղել Դիոսկորոս Թեոդորոսը: Նա ծնվել է Խարբերդում՝ Միքայել բար Բասիլ քահանայի ընտանիքում: Եղել է Խարբերդի մերձակայքի ասորական Բաուս վանքի միաբանը (վանքն առաջին անգամ հիշատակվել է 1057 թ., մահմեդականների կողմից գրավվել 1311 թ., գոյության ընթացքում ունեցել է չորս արբահայր եպիսկոպոս<sup>68</sup>): Մասնագիտացել է դասական ասորերենի, գեղագրության և մանրանկարչության մեջ, ապա, մինչև եպիսկոպոս դառնալը, զբաղվել ձեռագրերի հայթայթումով և արտագրությամբ: Հայտնի են իր գրչի տակից դուրս եկած վեց ձեռագրեր, որոնցից մեկը պահվելիս է եղել Խարբերդի ասորական եկեղեցում: Դիոսկորոս Թեոդորոսին իր «Եկեղեցական պատմության» մեջ հիշատակում է Գրիգոր բար Հեբրայոսը՝ կոչելով նրան «եկեղեցու անվանի վարդապետ»<sup>69</sup>: XIV դարից հայտնի է Խարբերդի թեմի առաջնորդ Հովսեփը, որը թողել է քաղաքին

<sup>66</sup> Fiey, J.-M., *Pour un Oriens Christianus Novus: répertoire des diocèses syriaques orientaux et occidentaux*, Orient-Institut, 1993, էջ 216:

<sup>67</sup> Kramers, J. H., *Kharput*, Encyclopaedia of Islam, First Edition (1913-1936), ed. M.Th. Houtsma, T.W. Arnold, R. Basset, R. Hartmann, Brill Online, [http://referenceworks.brillonline.com/entries/encyclopaedia-of-islam-1/k-h-arpu-t-SIM\\_4127](http://referenceworks.brillonline.com/entries/encyclopaedia-of-islam-1/k-h-arpu-t-SIM_4127):

<sup>68</sup> Barsoum, I. A., *The Scattered Pearls*, Second revised edition, Gorgias Press, 2003, էջ 562:

<sup>69</sup> Barsoum, I. A., նշվ. աշխ., էջ 462-63:



բաժին ընկած փորձությունների արձանագրությունը<sup>70</sup>: Ըստ ամենայնի, XVI դ. սկզբին ասորական վանք է եղել և բուն Խարբերդում, որտեղ որոշ ժամանակով մեկուսացել է Տուր Աբդինի պատրիարք<sup>71</sup> Մասուդ Ջազազին<sup>72</sup>:

Ըստ ամերիկացի բողոքական միսիոներ Հորացիո Սաուրգեյթի, որը 1840-ականների կեսերին եղել էր Խարբերդում, քաղաքում բնակվել է 150 ասորի ընտանիք: Հեղինակն անմիջապես ավելացնում է, որ այդ տվյալները հավաստի չեն, քանի որ, իր խոսքերով, Օսմանյան կայսրության քրիստոնյաները սովորություն ունեին միտումնավոր նվազեցնելու իրենց թվաքանակը<sup>73</sup>: Ըստ մեկ այլ թուրքական աղբյուրի՝ Խարբերդում կար մոտ 60 ասորական ծովա<sup>74</sup> (թուրքերն, իրենց հերթին, նույնպես միտումնավոր նվազեցնում էին քրիստոնյաների իրական թվաքանակը):

1911-12 թթ. օսմանյան մարդահամարի տվյալներով Խարբերդի վիլայեթում բնակվել է 2,823 ասորի, մինչ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանը, ինչպես նշեցինք, նույն ժամանակահատվածի համար տալիս է 5,000 թիվը: Երկու աղբյուրների տվյալներից էլ ստանում ենք ասորիների ու հայերի գրեթե նույն հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 1/31 և 1/33: Բուն Խարբերդում, որտեղ քրիստոնյաները մինչև Մեծ եղեռնը կազմում էին 20 հազար բնակչության մոտ կեսը, այդ հարաբերակցությունը պետք է, որ ավելի փոքր լիներ: Ամեն պարագայում, մինչև 1915 թ. ասորիների թիվը Խարբերդում դժվար թե զերազանցեր մեկ հազարը: Հարկ է նաև հաշվի առնել, որ 1890-ականներից սկսած Խարբերդի ասորիները շարունակաբար արտագաղթել են ԱՄՆ, որտեղ Մասաչուսեթս նահանգի Վուսթեր և Բոստոն քաղաքներում աշխարհամարտի նախօրեին արդեն կար բավականին սովոր և լավ կազմակերպված ասորական համայնք: Ըստ ԱՄՆ-ի 1910 թ. մարդահամարի՝ Վուսթերում բնակվել է «ասիական Թուրքիայից» ներգաղթած 2,832 մարդ, որոնք իրենց ճնշող մեծամասնությամբ Խարբերդի վիլայեթի հայեր և ասորիներ պետք է լինեին<sup>75</sup>:

<sup>70</sup> Barsoum, I. A., նշվ. աշխ., էջ 155:


<sup>71</sup> 1364-1816 թթ. Տուր Աբդինում եղել է Անտիոքի պատրիարքությանը զուգահեռ պատրիարքություն:

<sup>72</sup> Barsoum, I. A., նշվ. աշխ., էջ 510:

<sup>73</sup> Southgate, H., *Narrative of Visit to the Syrian [Jacobite] Church of Mesopotamia*, New York, 1856, էջ 87:

<sup>74</sup> Sunguroğlu, İ., *Harput Yollarında*, Istanbul, Yeni Matbaa, 1958. մեջբերված է Trigona-Harrany, էջ 50:

<sup>75</sup> ԱՄՆ մարդահամարների արխիվային տվյալներն ըստ [www.census.gov](http://www.census.gov) կայքի: Հասկանալի է, որ օսմանյան ասորիները Հյուսիսային Ամերիկայում բնակություն էին հաստատում հայրենակցական սկզբունքով: Այսպես, Խարբերդիցիները հաստատվեցին Մասաչուսեթսում (Վուսթեր և Բոստոն քաղաքներում, որտեղից նրանց մի մասն այնուհետև տեղափոխվեց Կալիֆոռնիա), տուրաբոլիցիները՝ Ռոդ Այլենդ-



Պատկեր 9. Խարբերդի «Ասորվոց թաղը»

Խարբերդում ասորիներն ունեին իրենց սեփական թաղը (հայերեն՝ «ասորվոց թաղ», թուրքերեն՝ *սյուրյանի կադիմ մահալլեսի*), որում միևնույն տանիքի տակ ապրում էր մինչև 20 հոգի: Ասորական թաղը կազմել է քաղաքի «Վարի թաղի» մի մասը (ավելի բարձր գտնվող մյուս խոշոր թաղը կոչվել է «Վերի թաղ»): Ասորիները քաղաքում մեկուսացած չէին և հայերի ու մահմեդականների հետ ամենօրյա ակտիվ շփման մեջ էին: Նրանք հիմնականում զբաղված էին առևտրով (օրինակ՝ մետաքսի) և արհեստներով: Մեծ հռչակ ունեին հատկապես ասորի ջուլիակներն ու նրանց արտադրած «ասորոց չիթը», որը հատուկ եղանակով արտադրվող տոկուն հյուսվածք էր, որպես կանոն՝ կարմիր գույնի, զարդարված ծաղիկների և թռչունների պատկերներով<sup>76</sup>: Կային նաև մի քանի ասորի հողատերեր:

---

դում, դիարբեքիրցիները՝ Նյու Ջերսիում, մարդիկները՝ Մոնրեալում, հոմսեցիները՝ Դեթրոյթում և Ֆլորիդայում:

<sup>76</sup> Ճիզմէճեան, Մանուկ, *Խարբերդ եւ իր զաւակները*, Ֆրեզնո, 1955, էջ 87-88: Հեղինակն այսպիսի մանրամասներ է հաղորդում ասորի ջուլիակների մասին. «Պէտք է ըսել որ Խարբերդի ասորիները այս արհեստը կը վարեն իսկական ընկերակցութեան մը օրինակով: Այսինքն, արհեստը ունի իր գաղտնիքները, զորս պէտք է պահպանել, իրարու միջեւ պէտք է ստեղծել փոխադարձ վստահութեան ու փոխադարձ շահի պայմաններ, մէկը միւսին պէտք է զօրակցիլ, պէտք է մանաւանդ պաշտպանել յաճախորդին ապրանքը, որ իրենց մօտ ներկուելու դրկուած է: Այս բոլորը նաեւ ստեղծած է վստահութիւն յաճախորդին ու ասորի արհեստաւորին միջեւ: Օրինակի համար, գարնան եղանակին, ասորիներ կ'այցելէն գիւղերը ու այն տեղերէն կը հաւաքեն զանազան կտաւներ ու հիւսուածքներ, որոնք պէտք է ներկել ու աշնան վերադարձնել իրենց տէրերուն: Այս բոլորը կը կատարուի առանց փաստաթուղթի ու ստորագրութեան, ամէն ինչ

Քաղաքի քրիստոնյա բնակչության մեծամասնության՝ հայերի հետ ասորիները կազմում էին մահմեդականներին հակակշռող միասնական հասարակատնտեսական, կրոնական և մշակութային հանրություն: Ըստ Հորացիո Սաութգեյթի՝ հայերն ու ասորիները Խարբերդում ապրում էին «ամենասերտ մտերմության պայմաններում, այցելում էին միմյանց եկեղեցիները, սակայն չէին ամուսնանում իրար հետ»<sup>77</sup>: Վերջին պնդումը, սակայն, հերքվում է փաստացի արձանագրված բազմաթիվ հայ-ասորական ամուսնություններով ինչպես Խարբերդում, այնպես էլ Օսմանյան կայսրության այլ վայրերում և ԱՄՆ-ում: Այսպես, ըստ դե Կուրտուայի «Դիարբեքիի և Մարդինի հայ համայնքները շատ մեծ էին, և հաճախ հայերը կազմում էին բանկատերերից, առևտրականներից, բժիշկներից և մտավորականներից կազմված հասարակական վերնախավը, որի հետ ասորական կարևոր ընտանիքները խառնվում էին»<sup>78</sup>: Մոտիկությունը հայերի հետ թույլ էր տալիս Դիարբեքիի և Մարդինի մի քանի նշանավոր ասորի ընտանիքներին «բարձրանալ հասարակական սանդղակով»<sup>79</sup>: Էդեն Նաբին նույնպես նշում է, որ Հայ առաքելական և Ասորի ուղղափառ եկեղեցիների նույնադավանության պատճառով, «խառն ամուսնությունները ոչ միայն հնարավոր էին, այլև հաճախակի տեղի էին ունենում»<sup>80</sup>: Նա ապա ավելացնում է, որ «բողոքականություն ընդունած ասորիներն ամուսնանում էին այլ բողոքականների հետ՝ անկախ նրանց ազգությունից: Խարբերդում, որտեղ բողոքականների ճնշող մեծամասնությունը հայեր էին, բողոքական ասորու համար ամենահավանական զույգը հայն էր»<sup>81</sup> (ինչպես նշեցինք նախորդ գլուխներում, Օսմանյան կայսրությունում բողոքականություն ընդունող ասորիները, որպես կանոն,

---

հիմնուած է ասորիներու այս արհեստին նկատմամբ վստահութեան վրայ: Գողեր անպակաս են *ասորոց չիթ* կոչուած վայրէն, նկատի ունենալով որ կտաներն ու զանազան հիսուածքները բացօթեայ փռուած կ'ըլլան այնտեղ: Բայց հսկողութիւնը ասորիներուն համար հաւաքական պարտականութիւն մըն է: Երբ պատահի որ գող մը յայտնուի, պահակները ձայն կու տան եւ կարճ ժամանակի մը մէջ մեծաթիւ ասորիներ կը յայտնուին այս վայրը՝ փայտերով ու բիրերով զինուած: Ասորիները իրենց ամբողջ համայնքով տէրն ու պահապանը կը կանգնին այս արհեստին: Ասորի ոստայնանկ եւ վաճառական ընտանիքներէն կը յիշուին՝ Եաղուպ Տաշօն եւ իր որդին՝ Սուրիան, Ակոբ եւ Պողօս Փերջ եղբայրները, Մինաս, Պօղոս եւ Մարտիրոս Չաթալպաները (եղբայրներ), Մալճաները, Կարապետ, Գէորգ եւ Աւետիս Տօնապետ եղբայրները, Աղայիկները, Աղայէկ, Կէվարկիս եւ Գասպար Չթճի եղբայրները»:

<sup>77</sup> Նույն տեղում:

<sup>78</sup> De Courtois, S., նշվ. աշխ., էջ 44:

<sup>79</sup> De Courtois, S., նշվ. աշխ., էջ 47:

<sup>80</sup> Naby, E., *Almost Family: Assyrians and Armenians in Massachusetts*, in *The Armenians of New England*, ed. by Marc Mamigonian, Armenian Heritage Press, 2004, էջ 46:

<sup>81</sup> Նույն տեղում:

միավորվում էին հայերի հետ ընդհանուր՝ իր էությամբ հայկական համայնքի մեջ. այդ պատճառով բողոքական ասորիների շրջանում հայացման միտումներն ավելի ուժեղ էին, քան ավանդական հարանվանություններին հավատարմություն պահպանողների մեջ):

XIX դ. վերջում Օսմանյան կայսրությունում գրանցված էին 49 տարրական, 5 երկրորդական և 1 միջնակարգ ասորական դպրոցներ<sup>82</sup>: Հայտնի է, որ Խարբերդի ասորիներն ունեին մեկ դպրոց, որը Վահե Հայկը «պարզ նախակրթարան» է բնութագրել<sup>83</sup>, իսկ Խարբերդցի ասորի Ալեք Սողոն իր հայերեն հոդվածներից մեկում կոչել «խոնարի»<sup>84</sup>: 1909 թ. ասորի տիկնանց *Մարթ Շիմունի* («Սրբուհի Շիմունի») ընկերությունը՝ հանձինս Հանըմ Բարսումի ու Մարիամ Տոնապետի՝ Խարբերդում հիմնել էր առանձին իգական դպրոց. 1912 թ. այդ դպրոցը, որի տնօրենուհին Սրբուհի Դաշոն էր, ուներ 6 ուսուցիչ (հինգը՝ կանայք) և 60 աշակերտուհի<sup>85</sup>: Դրա հետ մեկտեղ, Խարբերդի հայկական դպրոցները, այդ թվում՝ օտարերկրյա միսիոներների հիմնած, բաց էին ասորիների համար<sup>86</sup>, և նրանցում նաև ասորի ուսուցիչներ են եղել: Այսպես, երկու ասորուհիներ՝ Սառա և Շամիրամ, հիշատակվում են կապուցիների հիմնած «Սեն Քլեր» օրիորդաց երկրորդական վարժարանի ուսուցիչների կազմում (ի դեպ, վարժարանի շենքը նախկինում պատկանել էր ասորի Նաման ընտանիքին)<sup>87</sup>: Ասորի ծնողներն ամենայն հավանականությամբ նախընտրում էին իրենց զավակներին ուղարկել հենց այդ դպրոցները, և սա է, թերևս, պատճառը, որ ասորական «խոնարի նախակրթարանը» 1912 թ. փակվեց:

Ասորական դպրոցներում դասավանդման հիմնական լեզուն հայերենն էր: Դրանց ասորական բնույթն արտահայտվում էր նրանում, որ աշակերտներն ուսումնասիրում էին ասորական գիրն ու կրոնը, կարևորագույն աղոթքներն ու սաղմոսները և ասորի եկեղեցու կողմից առավել հաճախ գործածվող մի քանի օրհներգեր: Դասական ասորերենը, որպես այդպիսին, չէր դասավանդվում, և մեխանիկորեն սերտված տեքս-

<sup>82</sup> Trigona-Harrany, B., նշվ. աշխ., էջ 74, տողատակ 186:

<sup>83</sup> Հայկ, Վ., *Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը*, Նյու Յորք, 1959, էջ 511:

<sup>84</sup> Սոսո Ա., *Աշոր Ս. Եոսուֆ*, «Ասորվոց անզուգական ռահվիրան» ժողովածու, հրատ. Ասորվոց Հնգյակ Ընկերության, Բոստոն, 1919:

<sup>85</sup> Trigona-Harrany, B., նշվ. աշխ., էջ 175:

<sup>86</sup> Joseph, J., նշվ. աշխ., էջ 78:

<sup>87</sup> Հայկ, Վ., նշվ. աշխ., էջ 160:

տերից, կրոնական բնույթի մի քանի արտահայտություններից բացի՝ շատ քիչ ասորիներ էին ի վիճակի ցուցաբերել այդ լեզվի որևէ իմացություն<sup>88</sup>: Ասորական գիրը հիմնականում գործածվում էր թուրքերենը գարշունի եղանակով գրի առնելու համար: Խարբերում գարշունիով լույս են տեսել երեք պարբերականներ (տե՛ս ստորև), այն կարելի էր տեսնել տապանաքարերի վրա և մի քանի այլ արձանագրություններում: Ասորական գրի գործածություն հայերենի համար Խարբերում չի արձանագրվել (որպես գաղտնագրություն, փորձեր, թերևս, արվել են), և Խարբերողի ասորիները ոչ միայն հայախոս, այլև «հայագիր» էին: Սա միանգամայն տրամաբանական էր, քանի որ առօրյայում անիմաստ պետք է դիտվեր հրաժարվել հայկական գրից՝ հոգուտ դժվար ընթեռնելի հայկական գարշունիի (նշենք, որ թուրքերենի պարագայում ավանդական արաբական գրի փոխարինումը կառուցվածքով և սկզբունքով ցեղակից ասորականով որևէ դժվարություն չէր ներկայացնում. օսմանյան ասորիները լայնորեն գործածում էին ասորատառ թուրքերենը, նույնիսկ Ասորի ուղղափառ եկեղեցին՝ իր ներքին գրագրության համար):

Հայտնի չէ, թե երբ են Խարբերողի ասորիները կորցրել ասորերենը, կամ, ինչպես նրանք էին ասում (դատելով «Բաբելոնից»)՝ «ասորենը», եթե ընդունենք, որ Խարբերում ընդհանրապես երբևիցէ եղել են ասորախոս ասորիներ: «Բաբելոնի» հողվածներից մեկում կարդում ենք. «Մոտավորապես երկու դար առաջ էր, որ մեր ցեղը Խարբերողի և շրջակայքի մեջ կորսնցուց յուր լեզուն, և մինչև այսօր միայն *օլաֆ բերթը* [այբուբենը] կա մեզի ժառանգ»<sup>89</sup>: Այսինքն, ըստ հեղինակի, Խարբերողի ասորիներն իրենց լեզուն կորցրել են XVII դ. առաջին քառորդից հետո (հարկ է նշել, որ Խարբերողի և Մալաթիայի շրջաններից սերող ասորատառ հայերենի ամենավաղ նմուշները պատկանում են հենց XVII դ.): Եթե նկատի ունենանք, որ Խարբերողից դեպի հարավ՝ Տուր Աբդինում, *տուրոյոյո* կոչվող արդի արամեական բարբառը գոյատևում է մինչև այսօր, իսկ Դիարբեքի մերձակայքի առնվազն երկու գյուղերում տուրոյոյին մոտ մեկ այլ արամեական բարբառ՝ *մլահուն*-ն, գոյատևել է մինչև XX դ. վերջը<sup>90</sup>, ապա կարելի է ենթադրել, որ

<sup>88</sup> Աղավաղված ասորերենով այդպիսի մի քանի արտահայտություններ, «հակառակ գարշունիով», այսինքն՝ հայատառ ասորերենով, կարելի է գտնել «Բաբելոնում. դրանց մանրամասն կանդրադառնանք համապատասխան գլուխներում:

<sup>89</sup> Գոյուն, Ն., *Ասորեն թերթը, որ պիտի գա*, «Բաբելոն», թիվ 4, սեպտեմբեր 16, 1920:

<sup>90</sup> Jastrow, O., *Der neuaramäische Dialekt von Mlahso*, Harrassowitz Verlag, Wiesbaden, 1994, էջ 6:

Խարբերդի շրջանում արդի արամեական ինչ-որ բարբառ, իրոք, կարող էր գոյատևած լինել մինչև XVII դ., թեև գիտականորեն ապացուցել այս վարկածն այլևս հնարավոր չէ: Ամեն պարագայում, այդ բարբառը պետք է լիներ «ներմուծված», քանի որ Խարբերդը, ի տարբերություն Տուր Աբդինի և Դիարբեքի, Ասորիքի մաս չի կազմել և բնիկ արամեական բարբառներ այստեղ չեն եղել: Էդեն Նաբին Խարբերդի ասորիների կողմից ասորերենը կորցնելու պատճառներից մեկը տեսնում է Ասորի ուղղափառ եկեղեցու դիրքորոշման մեջ, որը «հիմնական շեշտը դնում էր դասական ասորերենի վրա և հրաժարվում էր թարգմանել ծիսակատարություններն ու հարակից նյութերը խոսակցական լեզվի»<sup>91</sup>:

Նաբին նշում է, որ Խարբերդի ասորիների համար ճշմարիտ էր ընդհանուր միջինարևելյան լեզվական պարադիգմը, ըստ որի՝ տղամարդիկ տիրապետել են հասարակական վայրերի լեզուներին, սույն պարագայում՝ հայերենին և թուրքերենին (Դիարբեքիում, որպես այլ օրինակ, բոլոր քրիստոնյաները, ինչպես նշվեց, եղել են հայախոս, իսկ հասարակական վայրերում, օրինակ՝ շուկաներում, խոսել են նաև քրդերեն<sup>92</sup>), մինչև կանայք, ներփակված լինելով ընտանիքների և թաղերի շրջանակներում, տիրապետել են միայն ազգային լեզվին, սույն պարագայում՝ հայերենին<sup>93</sup>: Այլ կերպ ասած՝ Խարբերդի ասորի կանայք գրեթե բացառապես հայախոս էին, մինչև տղամարդիկ, հայերենից բացի, տիրապետել են նաև թուրքերենին (ասորական միջավայրում թրքալեզու մամուլի գոյությունը սրանում որևէ կասկած չի թողնում): Այս նույն իրողությունը 1870-ականների Տուր Աբդինում արձանագրել է գերմանացի սեմագետ Էդվարդ Չախաուն՝ նշելով, որ Տուր Աբդինում «տղամարդիկ տուրոյոյից բացի հիմնականում տիրապետում են նաև քրդերենին և արաբերենին, մինչև կանայք և երեխաները խոսում են միայն տուրոյոյով»<sup>94</sup>:

Դրա հետ մեկտեղ՝ «Բաբելոնի» մի քանի հողվածներից կարելի է եզրակացնել, որ Խարբերդի ասորիների «ազգային» երգերը հիմնականում թուրքերեն էին. դա շատ

<sup>91</sup> Naby, E., նշվ. աշխ., էջ 46:

<sup>92</sup> De Courtois, S., նշվ. աշխ., էջ 17 և 64:

<sup>93</sup> Naby, E., նշվ. աշխ., էջ 47: Դե Կուրտուան նշում է, որ Մարդինի մերձակայքում իրեն պատահած ոմն ուղղափառ ասորի Իբրահիմի մայրը, որը ծնվել էր Դիարբեքիում, մինչև այդ օրը խոսում էր միայն հայերեն (De Courtois, էջ 17, տողատակ 2):

<sup>94</sup> Sachau, E., *Reise in Syrien und Mesopotamien*, Leipzig, 1883, էջ 420:

հաճախ ճշմարիտ է նաև հայերի պարագայում: Մեզ է հասել միայն մեկ հիշատակում հայալեզու ասորական երգի մասին, որը կոչվել է «Ասորի իմ ես, ասորու որդի»<sup>95</sup>:

Հայախոս լինելուց բացի՝ Խարբերդի ասորիները շատ հաճախ կրել են հայկական անուններ կամ աստվածաշնչային անունների հայկական տարբերակներ: Տարբեր աղբյուրներում մեր կողմից գրանցված ասորիների հայկական անուններն են՝ Ազնիվ, Աղավնի, Անդրանիկ, Առաքել, Ավետիս, Արթին, Գևորգ, Զարուհի, Թորոս, Լուսիկ, Կարապետ, Կիրակոս, Հովակիմ, Հովհաննես, Մանուկ, Մարկոս, Մարտիրոս, Մելքոն, Մինաս, Նշան, Պետիկ, Պերճ, Պողոս, Սաթենիկ, Սահակ, Սրբուհի, Տոնապետ, Օհան: Ասորիները, փաստորեն, կարող էին կրել ցանկացած հայկական անուն (բացառությամբ, թերևս, Հայկի): Այս անունները հաճախ գործածվել են նաև որպես ազգանուններ: Այսպես, Խարբերդի նշանավոր ասորական ընտանիքներից մի քանիսը կրել են Տոնապետ, Պերճ, Մանուկ, Առաքել և այլ նման ազգանուններ: «Յան» վերջավորությամբ ազգանուններ Խարբերդի ասորիների մեջ, որոնք, լինելով հայախոս, այնուամենայնիվ, կառչում էին իրենց ազգային ինքնությունից, հանդիպել են շատ հազվադեպ: Այսպես, Օսմանյան կայսրության ասորի նշանավոր մտավորականներից էր Խարբերդի «Սմբատյան» ճեմարանի շրջանավարտ, բողոքական պատվելի Առաքել Պետիկյանը (1860-1902), որը, «Գիսակ» գրչանունով հայերենով զբաղվել է գրական գործունեությամբ (հատկապես հայտնի է նրա «Գիսակարան. խոսք և խորհուրդք ի խորոց սրտի Գիսակի» ժողովածուն<sup>96</sup>): Որոշ ասորիներ իրենց ազգանուններին «-յան» վերջավորություն էին ավելացնում (օրինակ՝ Քեշիշյան, Բարսամյան), որպեսզի ավելի հեշտ ստանան ԱՄՆ ներգաղթելու իրավունք<sup>97</sup>: Հոգևորականներն ու սարկավագներն, ըստ երևույթին, պաշտոնական գրություններում գործածել են ասորական բար («որդի») բառով կազմված ավանդական անուններ. այսպես, հայտնի է Խարբերդցի Յաղուբ բար Թոմա սարկավագի անունը:

<sup>95</sup> Donabed, S., *Remnants of Heroes*, էջ 77:

<sup>96</sup> Տագեսեան, Ա., Իրնէշլեան, Ա., *Լիբանանահայ գիրքը 1894-2012. մատենագիտական ցանկ*, Բեյրութ, Հայկազյան Համալսարան, 2013, էջ 44: Հայտնի է Խարբերդցի ասորու առնվազն մեկ ազգանուն ուսական –ով վերջավորությամբ. խոսքը «Բաբելոնի» երկրորդ խմբագիր Նաում Բեշարովի մասին է, որին մանրամասն կանդիդատանք համապատասխան գլխում:

<sup>97</sup> Donabed, S., Shamiran M., *Harput, Turkey to Massachusetts: Notes on the Immigration of Jacobite Christians*, in *Chronos: Revue d'Histoire de l'Université de Balamand*, No. 23, 2011, էջ 21:

Հայկական անունների տարածված լինելն ակնհայտորեն առաջացրել է որոշ ազգայնականորեն տրամադրված տարրերի և, հավանաբար, եկեղեցու դժգոհությունը: Այսպես, «Բաբելոնի» խմբագրականներից մեկում կարդում ենք. «Նվազ ուշագրավ տեղ չի բռներ մեր անունները, ցուցուցեք հայ մը Եուհեննե, Ֆավլոս, Սարկոն, Աշուր, Աֆրեմ անունները կը կրեն, բայց շատ ու բազմաթիվ են մեր մեջ Հովհաննես, Պողոս, Կարապետ, Մարկոս, Կիրակոս»<sup>98</sup>:

Բացի հայկական անուններից՝ հայախոս ասորիները որպես անուններ և ազգանուններ գործածել են ավանդական ասորական անունները, ինչպես՝ Յուհաննա, Հաննա, Բիշարա, Մարութա, Բարսամ, Ջիրջիս, Շեմուն, Թումա, Մալքե, Նաում, Դաշո, Դենհո և այլն, ինչպես նաև արաբա-թուրքական ծագում կամ տեսք ունեցող անուններ՝ Իբրահիմ, Յուսուֆ, Նուրի, Ռասիմ, Դավուդ, Իսքանդեր, Յաղուբ, Գոյուն, Քեշիշ, Էլբի, Լուֆֆի, Թումաջան, Յուլբեկ, Սեֆեր, Խորի, Չաթալբաշ և այլն: Որոշ տարածում ունեին նաև եվրոպական անունները կամ աստվածաշնչային անունների՝ եվրոպական լեզուներում առկա ձևերը:

Մի քանի սերունդներ շարունակ լինելով հայախոս և «Բաբելոնի» էջերում ցուցաբերելով հայերենի փայլուն իմացություն, Խարբերդի ասորիները, այդուհանդերձ, չէին դիտում հայերենը որպես մայրենի լեզու: Նրանց համար այն միշտ մնում էր «օտար», «ուրիշների» լեզու<sup>99</sup>, որի հետ խորքային զգացմունքային կապվածության արտահայտություններ գրեթե չեն պահպանվել<sup>100</sup>: Սեփական լեզուն կորցրած լինելու հանգամանքը բարդույթի տեսքով իշխում էր ասորի մտավորականների վրա: «Բաբելոնի» հողվածներից մեկում կարդում ենք. «Ունինք լեզու մը որ գործածող չկա, ուրիշների լեզուն առած ենք, մեկ՝ մեկ ազգի մը լեզվով կ'խոսի, ուրիշ մը՝ ուրիշին: Ոմանք թուրքերեն կ'խոսին, ոմանք պարսկերեն, ոմանք հայերեն, ոմանք ալ արաբերեն <...> Իրար չենք ճանչնար, իրար չենք հասկնար, հազար ու մեկ ճյուղերու, հազար ու մեկ մասերու բաժնված ենք: Մեքիթին ինքզինքը տարբեր կը ճանչնա, քիլոանին տարբեր, Պարս-

<sup>98</sup> «Մեզի ի՞նչ պեպք է», «Բաբելոն», խմբագրական, Ա տարի, թիվ 27, հուլիս 22, 1920:

<sup>99</sup> Trigona-Harrany, B., նշվ. աշխ., էջ 193:

<sup>100</sup> Այս առումով ուշագրավ է Assyrian Progress պարբերականի մի հաղորդագրություն, որը ներկայացնում է 1930-ականներին Կալիֆոռնիայում երիտասարդների կողմից կազմակերպված և մասամբ հայերեն վարված մի միջոցառում. այդ կապակցությամբ հողվածագիրը նշում է, որ ներկա մեծահասակները «վայելեցին հայերենը» (“enjoyed the Armenian language”):



կաստանի ասորին ինքնզինքը նեստորի կը կոչէ ու կը զատվի բոլորովին Միջագետքի Ասորիէն»<sup>101</sup>: Անորոշ ապագայում «մայրական լեզուն» վերակենդանացած տեսնելու հույսը պարբերաբար հնչում է «Բաբելոնում», թեև Խարբերդի ասորիների պարագայում այն իրականանալու որևէ նախադրյալներ չունեն: Այսպես, հողվածներից մեկում կարդում ենք. «Ասորի ազգը անլեզու չէ և ունեցած է լեզու մը ճոխ գրականությամբ: Մինչ ուրիշ ազգեր չունենին լեզու, ասորին իր լեզուն ուներ և ուրիշին կուսուցաներ: <...> Նա այնչափ ճոխ է, որչափ արաբերենը, հունարենը և ուրիշ եվրոպական լեզուներ: <...> Ազգաց մեր վրա իշխելովը ստիպած ենք գործածել իշխող ազգաց լեզուները: <...> Ինչպես ուրիշ լեզուներ ավելի պարզված, ավելի բարեփոխված և ըրած են հարմարագույն ներկա պարագայից՝ կրնա ըլլալ ասորի լեզուն ևս առավել պարզ և ժամանակին հարմար: Ասոր համար խումբ մը լեզվագետներ կրնան բարեփոխել զայն՝ այսպես որ ըլլա ընդհանուր լեզու Նեստորականին, Ջեկոբայթներու»<sup>102</sup>, Քաղղեացիներու»<sup>103</sup>: «Բաբելոնի» էջերից ինչպես հրատարակիչների, այնպես էլ նամակագիրների կողմից երբեմն հնչել է պարբերականը ապագայում ասորալեզու դարձնելու գաղափարը, թեև կրկնենք, որ Խարբերդի ասորիների և «Բաբելոնի» պարագայում սա անիրականանալի էր: Այսպես, հողվածներից մեկում կարդում ենք. «Սրտի անհուն ուրախությամբ է, որ կարդալու բարեբախտությունը կունենան ձեր ազգագուտ կիսամայան, վստահելով որ մոտալուստ ձեր չարաչար աշխատանաց արդյունքը պիտի ըլլա մայրական լեզվով «Բաբելոնի» հրատարակչությունը»<sup>104</sup>:

Խարբերդի ասորիների ազգային ինքնության գլխավոր գրավականը և հայերից նրանց զանազանող գլխավոր գործոնը նրանց ազգային ավանդական եկեղեցիներն էին՝ Անտիոքի ասորի ուղղափառ և Ասորի կաթոլիկ: Ինչպես նշել էինք, Խարբերդի Ասորի ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսի աթոռանիստ էր: Ասորական Մարթ (Սուրբ) Մարիամ եկեղեցին (ավելի ճանաչված է թուրքերեն՝ *Մերյեմ անա քիլիսեսի* անունով) պարզունակ, որևէ ճարտարապետական արժանիքներով աչքի չընկնող շինություն էր, սակայն ասորիներն այն շատ հին են համարում և հիմնադրումը վերագրում 179 թ.<sup>105</sup>:

<sup>101</sup> Ռասին, «*Դեպ ո՞ր կը քալենք*», «Բաբելոն», Ա տարի, թիվ 5, սեպտեմբեր 18, 1919:

<sup>102</sup> Խոսքը ուղղափառ ասորիների՝ «հակոբիկների» մասին է (անգլերեն՝ Jacobites):

<sup>103</sup> Երևուժ, Ա.Գ., «*Նամակ Փարիզեն*», «Բաբելոն», Ա տարի, թիվ 8, հոկտեմբեր 30, 1919:

<sup>104</sup> Տոնապետ, Մ., «*Նամակ «Բաբելոնին»*», «Բաբելոն», Ա տարի, թիվ 6, հոկտեմբեր 2, 1919:

<sup>105</sup> Fiey, J.-M., նշվ. աշխ., էջ 216-217:

Սա, հավանաբար, նախկին հայկական Սբ. Աստվածածին եկեղեցին է. տեղեկություններ կան, որ հայերն այն հանձնել են ասորիներին, փոխարենը նրանցից ստանալով մոտակա Մորենիկ գյուղի եկեղեցին<sup>106</sup>: Ըստ երևույթին, քաղաքում եղել է ևս երկու ասորի ուղղափառ եկեղեցի: Ասորի կաթոլիկ եկեղեցի, ամենայն հավանականությամբ, չի եղել, համենայն դեպս, չի հիշատակվում:

Ի տարբերություն աշխարհականների՝ ասորի հոգևորականներն ունեին դասական ասորերենի որոշ իմացություն, և Ասորի ուղղափառ և Ասորի կաթոլիկ եկեղեցիները փորձում էին ինչքան հնարավոր է պահպանել այդ լեզուն եկեղեցական կյանքում: Վերը նշվեց, որ հայախոս ասորիների ծանոթությունը դասական ասորերենին հիմնական սահմանափակվում էր աղոթքներով և շարականներով: «Բաբելոնի» բազմաթիվ հողվածներից տեղեկանում ենք, որ նույնիսկ Ամերիկայում հավաքները սովորաբար սկսվում էին ասորալեզու Տերունական աղոթքով (արևմտահայ տառադարձությամբ՝ *Ապունյր պաշմայն*՝ այսինքն՝ «Հայր մեր, որ երկնքում ես»), իսկ ընտանեկան և այլ խնջույքների ժամանակ սարկավազները (*շմմաս*-ները) երգում էին նաև ասորական շարականներ: Այսպես, հողվածներից մեկում կարդում ենք. «Ճաշասեղանեն վերջն էր, որ *ըթլոթո* [երեք<sup>107</sup>] շմմասներու մասնակցությամբ «Թշպոհթօ» փառաբանական ժամերգով մը սկսվեցավ արարողությունը»<sup>108</sup>:

Արժե ևս մեկ անգամ նշել, որ Բիթլիսում, օրինակ, ասորիները ոչ միայն խոսում էին հայերեն, այլև գործածում էին այն իրենց եկեղեցական արարողություններում<sup>109</sup>, և որ հայերենը ժամերգության մեջ գործածվել է նաև Մարդինի Քառասուն նահատակների ասորական եկեղեցում<sup>110</sup> (և սա այն պարագայում, երբ քաղաքի ասորիներն ու հայերը՝ հատկապես կաթոլիկ, արաբախոս էին): Կրկնենք նաև, որ XX դ. սկզբին Դիարբեքիրում գործածվել է ասորատառ հայերենով Ավետարան, որն, ըստ երևույթին, հայկական գարշունիի՝ գործածության մեջ եղած վերջին նմուշն էր:

<sup>106</sup> Moranci, Ch., *The Medieval Architecture of Kharpert*, in *Armenian Tsopk/Kharpert*, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2002, էջ 187:

<sup>107</sup> Հայկական տեքստի մեջ ասորական բառերի գործածության մասին կխոսենք այլ գլուխներում:

<sup>108</sup> «*Ըթլոթոյո* [երրորդ] *տարեդարձի մը առթիվ*», «Բաբելոն», թիվ 13, հունվարի 8, 1920:

<sup>109</sup> Krikorian, M., նշվ. աշխ., էջ 117:

<sup>110</sup> Trigona-Harrany, B., նշվ. աշխ., էջ 199, տողատակ 549:

Խարբերդի ասորիների ծիսական պրակտիկայում, ամենայն հավանականությամբ, որոշ տեղ ուներ թուրքերենը: Դա են վկայում վերոհիշյալ Խարբերդցի սարկավագ Յաղուբ բար Թոմայի XX դ. սկզբում կազմած երկու աղոթագրքերը, որոնցում դասական ասորերենով գրված օրհներգերի կողքին նույն տեքստը կրկնօրինակված է ասորատառ թուրքերենով<sup>111</sup>:

Վերևում արդեն նշվեց, որ ասորական ավանդական եկեղեցիներն իրենց ծիսակարգում կառչում էին դասական ասորերենից. Ասորի ուղղափառ եկեղեցին այսօր էլ ընդդիմանում է Տուր Աբդինի տուրոյո արդի արամեական բարբառը գրական լեզվի վերածելու փորձերին՝ դիտելով այն դասական ասորերենի աղավաղված ձև: Դրա հետ մեկտեղ՝ ո՛չ Խարբերդում, ո՛չ այլուր ասորի հոգևորականությունը որևէ էական քայլ չէր ձեռնարկում դասական ասորերենը հասարակ ժողովրդին ավելի հասու դարձնելու համար, և դեռ ավելին, ինքն իր ներքին գրագրությունը, ինչպես նշվեց, վարում էր ասորատառ թուրքերենով: Ասորի հոգևորականների կրթվածության ցածր մակարդակն ու ուղղակի տգիտությունը սուր քննադատության առարկա էին ասորական մամուլում, այդ թվում՝ «Բաբելոնում». վերջինն ընդհանրապես աչքի է ընկնում սուր հակակղերական տրամադրվածությամբ:

Ինչպես և հայերի, Խարբերդցի ասորիների միջավայրում XIX դ. երկրորդ կեսում շատ լայն տարածում էր ստացել բողոքականությունը, որը հիմնականում քարոզում էին ամերիկացի միսիոներները: Բողոքականություն ընդունող ասորիները գտնվում էին հայերի ավելի ուժեղ ազդեցության տակ, քան «հակոբիկներն» ու կաթոլիկները: Ակնհայտ է, որ Խարբերդում կային «հայացած» ասորիներ: Ասորի երկու բողոքական պատվելիների գործունեությունն ԱՄՆ-ի հայերի միջավայրում «Բաբելոնի» մի քանի համարներում ասորի «ազգատյացների» շուրջ սուր բանավեճի առիթ դարձավ: Այսպես, հողվածներից մեկում կարդում ենք. «Շատ շատեր կկարծեին, թե ասորի անունը անարգական անուն մըն է: Հայրենիքում եթե մեկին ասորի անվանեիր, կբարկանար - Ասորին դուն ես, ես հայ քրիստոնյա եմ, կըսեր»<sup>112</sup>: Մեկ այլ տեղ. «Ունիմ հավատքը, թե ասորիները մի անգամ ընդ միշտ սթափվելու և գիտակցելու են այն թունավոր միկրոբ-

<sup>111</sup> *The Assyrian Experience: Sources for the Study of the 19<sup>th</sup> and 20<sup>th</sup> Centuries*, ed. by Eden Naby & Michael E. Hopper, Harvard College Library, Cambridge, 1999, էջ 12-13:

<sup>112</sup> Բեշարով, Ն., «Բաց նամակ վերապատվելի Գավմէ Ապլահարի», «Բաբելոն», Ա տարի, թիվ 21, ապրիլ 19, 1920:

ներուն, որոնց հանդեպ ազգային թերթով մը հականեխել պետք է: Եթե ոչ, լավ է որ հիմնականէ հետևինք այն ազգին [հայերին], որուն լեզուն, գրականությունը, սովորությունը կգործածենք արդեն, քան որ քառորդ դար վերջ: <...> Ի՞նչ ընենք, մենք ալ [մեր] գրե՞րը թաղենք և ասորության վերջ մը դնենք, թե ոչ ծաղկեցունենք»<sup>113</sup>:

Գրանցված են դեպքեր, երբ ասորիները զանգվածաբար անցել են նաև Հայ առաքելական եկեղեցու գիրկը. դա, մասնավորապես, տեղի է ունեցել Խարբերդից ոչ հեռու գտնվող Աղվան գյուղում, որտեղ դարձի էին դիմել ոչ միայն աշխարհականները, այլև՝ 1896-1913 թթ. Խարբերդի եպիսկոպոս Դիոնիսիոս Աբդելնուր Ասլանի հետ ունեցած տարածայնությունների պատճառով, գյուղի Ձեյթուն անունով ասորի ուղղափառ քահանան<sup>114</sup>:

Ասորիների հարանվանափոխությունն ու «հայացումը» չէր կարող չառաջացնել ասորի հոգևորականության դժգոհությունը: Սարգոն Դոնաբեդը, չհիշատակելով որևէ աղբյուր, նշում է, որ Դիոնիսիոս Աբդելնուր Ասլան եպիսկոպոսը քաղաքում հաստատվելուն պես դրամական տուգանքով էր սպառնացել այն ասորիներին, որոնք կբռնվեն հայերեն խոսելիս<sup>115</sup>: Այս վկայության հավաստիությունն այսօր շատ դժվար է հաստատել (ամեն պարագայում, քիչ հավանական է, որ բարձրաստիճան հոգևորականն իրոք արգելքների և տուգանքների միջոցով հույս ունենար փոխելու ասորիների՝ մի քանի հարյուրամյակների խոսակցական լեզուն). հավանաբար, աղավաղված ձևով, այն պահպանում է հիշողությունը հարանվանափոխ եղած ասորիների նկատմամբ եպիսկոպոսի ձեռնարկած ինչ-ինչ պատժամիջոցների մասին: Դիոնիսիոս եպիսկոպոսի մասին, որը ծնվել է Ուրֆայում 1851 թ., այսինքն՝ ինքն էլ է եղել հայախոս միջավայրի ծնունդ, իրոք հայտնի է, որ նա փորձել է սահամանփակել հայերի ազդեցությունն ասորիների վրա, ընդդիմացել է խառն ամուսնություններին և հաճախ լուրջ խնդիրներ է ունեցել սեփական հոտի հետ: Քաղաքի ասորական մտավորականությունը նրան մեղադրել է նաև չափից դուրս օսմանամետ կեցվածքի, ինչպես նաև եկեղեցական միջոցները վատնելու համար: Խարբերդից հետո Դիոնիսիոս Աբդելնուր Ասլանը եղել է Հոմսի

<sup>113</sup> Գոյուն, Ն., «Ասորեն թերթը, որ պիտի գա», «Բաբելոն», Բ տարի, թիվ 4, սեպտեմբեր 16, 1920:

<sup>114</sup> Trigona-Harrany, B., նշվ. աշխ., էջ 202:

<sup>115</sup> Donabed, S., նշվ. աշխ., էջ 41:



Պատկեր 10. Խարբերդի Վերի թաղն ու «Եփրատ» քոլեջի համալիրը

(Սիրիա) և ապա՝ Դիարբեքիրի եպիսկոպոսը: Ունեցել է ասորական ձեռագրերի հարուստ հավաքածու: Մահացել է 1933 թ.<sup>116</sup>:

Արևմտահայերի՝ XIX դ. երկրորդ կեսի մշակութային և կրթական վերելքի պտուղներից օգտվեցին նաև ասորիները: Ինչպես նշվեց, խարբերդցի ասորիներից շատերը ստացել էին լավ կրթություն ոչ միայն ասորական, այլև հայկական, այդ թվում՝ միսիոներների հիմնած դպրոցներում: Նրանցից ոմանք շարունակել են կրթությունը Խարբերդի հանրահայտ «Եփրատ» քոլեջում, որը 1878 թ. հիմնել էին ամերիկացի բողոքական միսիոներները: Լինելով, ըստ էության, միսիոներական հաստատություն՝ քոլեջը բաց էր բոլոր հարանվանություններին պատկանող քրիստոնյաների համար և Արևմտյան Հայաստանում բարձրագույն կրթության առաջատար հաստատությունն էր: Քոլեջը գտնվում էր Վերի թաղում և տասից ավելի շինություններից բաղկացած համալիր էր: Այստեղ երկու սեռերի ներկայացուցիչներն էլ կարող էին ուսում ստանալ. 1912 թ. 47

<sup>116</sup> Դիոնիսիոս Աբդելնուր Ասլանից հետո Խարբերդի եպիսկոպոսական աթոռի ճակատագիրն անորոշ է: Ըստ որոշ վկայությունների՝ հաջորդ եպիսկոպոսը եղել է Կուրիլոս Մանսուրը, որը նահատակվել է Մեծ Էղեռնի օրերին, ըստ մյուս՝ աթոռը թափուր է մնացել:

շրջանավարտներից երկուսն ասորի են եղել՝ մեկ տղա և մեկ աղջիկ<sup>117</sup> (Assyrian Progress-ում հիշատակվում է քուլեջն ավարտած ասորուհիներից մեկի անունը՝ Սրբուհի Արսլան): Ինչպես նշվեց, ասորիները սովորել են նաև Խարբերդի այլ ուսումնական հաստատություններում՝ Կեդրոնական վարժարանում, «Սմբատյան» ճեմարանում, Ս. Կարապետ եկեղեցու նախակրթական վարժարանում, Վարի թաղի «աղջկանց վարժարանում», Կապուցիների վարժարանում: Ասորիներին հասու էր նաև Այնթապում (ներկայումս՝ Գագիանթեպ) գտնվող և նույնպես միսիոներների կողմից հիմնադրված «Կենտրոնական Թուրքիայի քուլեջը», որն ուներ բժշկական ֆակուլտետ: «Բաբելոնի» հեղինակների, թղթակիցների և նամակագիրների մեծ թիվը և հայոց լեզվին նրանց կատարյալ տիրապետումը (ներառյալ՝ հայերենով բանաստեղծություններ գրելը) վկայում է հայերենով լավ կրթություն ստացած ասորիների մեծ թիվը: Որոշ ասորիներ համագործակցում էին հայկական մամուլի հետ, ինչպես, օրինակ, կաթոլիկ ասորի բժիշկ Պիեր Դաշոն, որը Խարբերդի «Եփրատ» թերթում հրապարակում էր առողջապահությանը վերաբերող հոդվածներ<sup>118</sup> (դրանցից մեկը վերարտադրված է նաև «Բաբելոնի» համարներից մեկում), ինչպես նաև ֆրանսերեն էր դասավանդում «Եփրատ» քուլեջում<sup>119</sup>:

Խարբերդի հայախոս ասորիների միջավայրից է սերում Օսմանյան կայսրությունում ասորի ամենանշանավոր մտավորական Աշուր (ի ծնե՝ Աբրահամ<sup>120</sup>) Յուսուֆը: Նա ծնվել է 1858 թ. Խարբերդում՝ դերձակ Սահակ Յուսուֆի ընտանիքում: Դպրոցական կրթություն ստանալով հարազատ քաղաքում՝ այն շարունակել է Այնթապի «Կենտրոնական Թուրքիայի քուլեջում», որը, սակայն, չի ավարտել: Երկար տարիներ դասավանդել է տարբեր դպրոցներում և միևնույն ժամանակ զբաղվել ինքնակրթությամբ: Աշուր Յուսուֆի կրթվածությունը լավագույնս վկայում է այն, որ նա ի վերջո դարձավ «Եփրատ» քուլեջի գրաբարի և գեղագրության ուսուցիչը:

<sup>117</sup> Trigona-Harrany, B., նշվ. աշխ., էջ 112, տողատակ 488:

<sup>118</sup> Trigona-Harrany, B., նշվ. աշխ., էջ 107:

<sup>119</sup> Հայկ, Վ., նշվ. աշխ., էջ 335:

<sup>120</sup> Մալճան, Ե., «Անտիպ նոթեր», «Բաբելոն», Բ տարի, թիվ 17, մարտ 17, 1921:



Պատկեր 11. Աշուր Յուսուֆի դիմանկարը Assyrian Progress պարբերականում

Աշուր Յուսուֆը բողոքական էր<sup>121</sup> և ամուսնացած էր հայ ավետարանական պատվելիի դուստր Արշալույս Օղկասյանի հետ. նրանք ունեցել են յոթ զավակ<sup>122</sup>: Բողոքական լինելը, ինչպես նաև այն, որ Աշուր Յուսուֆի ծանոթությունն ասորերենին սահմանափակվում էր միայն այբուբենով, չխանգարեց նրան դառնալու արևմտաստրական միջավայրում ազգայնականության գաղափարների առաջին նշանավոր ջատագովը: Երիտթուրքական հեղափոխությունից հետո նա հիմնեց Օսմանյան կայսրությունում արևմտաստրական առաջին պարբերականը՝ *Մյուրշիդ-ի-ասիրիյուն* («Ասորիների ուղեցույց») հան-

դեսը, որը լույս էր տեսնում Խարբերդում ասորատառ թուրքերենով: Այդ պարբերականում հրատարակված հոդվածների զգալի մասի հեղինակն ինքը՝ Աշուր Յուսուֆն էր: 1915 թ. ապրիլին նա ձերբակալվեց թուրքական իշխանությունների կողմից և մի քանի օր անց՝ «Եփրատ» քոլեջի բոլոր հայ դասախոսների և իր եղբոր՝ Տոնապետի հետ միասին առանց դատաստանի սպանվեց: Ձերբակալության ժամանակ ոչնչացվեց Աշուր Յուսուֆի հեղինակած գրաբարի դասագրքի միակ ձեռագիրը: Իր բազմաթիվ հոդվածներից բացի՝ պահպանվել են հայերեն և թուրքերեն գրված բանաստեղծությունները, որոնք հաճախ տոգորված են բողոքական օրհներգությանը բնորոշ ոգով և պատկերայնությամբ<sup>123</sup>:

Բացի *Մյուրշիդ-ի-ասիրիյուն*-ից՝ Խարբերդում 1910 թ. Դիոնիսիոս Աբդելնուր Ասլան Եպիսկոպոսը ասորատառ թուրքերենով և արաբերենով հրատարակել է 9 էջանոց *Քաուքվա սուրյայա* («Ասորական աստղ») պարբերականը՝ ըստ ամենայնի փորձելով հակազդել Աշուր Յուսուֆի *Մյուրշիդ*-ին, որի էջերում հաճախ սուր քննադատության է արժանացել: Նույն թվականին Խարբերդում թուրքերենով լույս է տեսել 4 էջանոց *Հայթ* («Կյանք») հանդեսը, որի երկու էջերը ասորատառ, մյուս երկուսը՝ նույն տեքստը՝

<sup>121</sup> Նույն տեղում:  
<sup>122</sup> Աշուր Յուսուֆի ընտանիքի մասին տեղեկություններ են պարունակում իր դուստր՝ Ալիս Նազարյանի «Արյունոտ ժպիտը» գիրքը (Բեյրութ, 1963), ինչպես նաև ավագ որդու՝ Ռասին Յուսուֆի հայերեն գրված անտիպ հիշողությունները:  
<sup>123</sup> *Ասորվոց անզուգական ուսվիրան*, հրատ. Ասորվոց Հնգյակ Ընկերության, Բուստոն, 1919:

արաբատառ թուրքերենով էին: Հանդեսը հրատարակել է ոմն Պաուլոսը, որը ենթադրաբար նույնպես հոգևորական է եղել: Թեև Խարբերդում գոյություն ունեին տպարաններ (այդ թվում՝ «Եփրատ» քուլեջում), ասորական տպագրական տառատեսակի բացակայության պատճառով այս երեք պարբերականներն ստեղծվել են ձեռագիր, ապա կրկնօրինակվել բազմատիպով:

Մեծ եղեռնի օրերին Խարբերդի ասորիները լիուլի կիսեցին հայերի ճակատագիրը: 1915 թ. հունիսի 26-ին Խարբերդի վալի Սաբիթ Բեյը հրաման արձակեց, ըստ որի՝ հայերն ու ասորիները պետք է Միջագետք աքսորվեին<sup>124</sup>: Սակայն նույն օրն ասորիներին թույլ տվեցին ժամանակավորապես մնալ քաղաքում, և թուրք ոստիկանները հայտնվեցին նրանց հայերից զանազանելու խնդրի առջև, որը, «Եփրատ» քուլեջի վերջին նախագահ Հենրի Ռիգսի խոսքերով, «այդքան հեշտ չէր, ինչպես կարող էր թվալ»<sup>125</sup>: Ռիգսը նաև պատմում է, որ թուրք ոստիկանները պարտադրել էին ասորի տղաներին հայերի լքված ունեցվածքը ամբարել քաղաքի հայկական եկեղեցիներում<sup>126</sup>: Հայերի և ասորիների ձերբակալման երկրորդ ալիքը վրա հասավ նույն տարվա նոյեմբերին՝ հիմնականում Խարբերդի մերձակայքի Մեմյուրեթ-ուլ-Ազիզ (նախկինում՝ Մեզիրե, ներկայումս՝ Էլազըղ) քաղաքում, որտեղ գտնվում էին օսմանյան տեղական իշխանությունները, ինչպես նաև ԱՄՆ-ի հյուպատոսությունը<sup>127</sup>: 1920-ականների սկզբին Խարբերդում դեռ մնում էին որոշ թվով ասորիներ, որոնք՝ ԱՄՆ-ում բնակվող իրենց հայրենակիցների օգնությամբ փորձում էին ինչ-որ կերպ վերականգնել իրենց ազգային կյանքը, սակայն նրանք էլ, ի վերջո, ստիպված եղան լքել Խարբերդը:

Մեծ եղեռնը վերապրած որոշ ասորիներ հաստատվեցին Հայաստանում, մասնավորապես՝ Երևանի մերձակայքի Նոր Խարբերդ ավանում. նրանց թվում էր Աշուր Յուսուֆի որդի Ռասիմը, որը ստալինյան բռնությունների տարիներին աքսորվեց (1940-ականներին Սիրիայից Հայաստան հայրենադարձվեց նաև Աշուր Յուսուֆի այրին՝ Ար-

---

<sup>124</sup> Davis, L., *The Slaughterhouse Province: an American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, New Rochelle, New York, Aristide D. Caratzas, 1989, էջ 143-144:

<sup>125</sup> Riggs, H., *Days of Tragedy in Armenia: Personal Experiences in Harpoot (1915-1917)*, Gomidas Institute, 1997, էջ 119:

<sup>126</sup> Riggs, H., նշվ. աշխ., էջ 135:

<sup>127</sup> Walker, Ch., *Kharbert in 1915-1916*, in *Armenian Tsopk/Kharbert*, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2002, էջ 334:





Պատկեր 12. Խարբերդի ասորական եկեղեցին այսօր

շալույս Օղկասյանը): Հավանական է, հայախոսության և խառն ամուսնությունների պատճառով այդ ասորիներն ամբողջությամբ ծուլվել են հայերին:

Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքներից Խարբերդը թերևս միակն է, որ Մեծ եղեռնի հետևանքով ոչ միայն հայաթափվեց, այլև ֆիզիկապես վերացավ որպես բնակավայր: Նրա մահմեդական և հատուկենտ ասորի բնակիչները 1920-ականներին վերաբնակեցվեցին Էլազըղում, շինությունները՝ ներառյալ «Եփրատ» քոլեջի համալիրը և Խարբերդի միջնաբերդի որոշ հատվածներն ավերվեցին և օգտագործվեցին որպես շինանյութ: Այսօր հին

Խարբերդի տեղում ամայի սարալանջեր են, և միակ կանգուն շինությունն ասորական Մարիամ Աստվածածին եկեղեցին է, որն այցելուների համար բաց է եղել մինչև 1998 թ., ապա կողպվել է<sup>128</sup>, «վերանորոգության» ենթարկվել և մասամբ մատչելի դարձել 2000-ականների սկզբներին:

### 1.5. Խարբերդի ասորիներն ԱՄՆ-ում

Խարբերդցի հայերի և ասորիների զանգվածային արտագաղթը դեպի ԱՄՆ սկսվեց 1890-ականներին: Նրանք հիմնականում հաստատվում էին Մասաչուսեթս նահանգում, մասնավորապես՝ Վուսթեր, Բոստոն և Լովել քաղաքներում, որոնք այդ ժամանակահատվածում արդյունաբերական վերելք էին ապրում և մեծ քանակով աշխատուժի կարիք ունեին: Խարբերդցի ասորիների համայնքներ կային նաև Նյու Յորք և Ռոդ Այլենդ նահանգներում, ինչպես նաև ԱՄՆ-ի արևմտյան ափում՝ Կալիֆոռնիայում: Ժամանակի ընթացքում հայերից ու ասորիներից շատերն սկսեցին զբաղվել ԱՄՆ-ում նաև անհատ


<sup>128</sup> Hewsen, R., *Golden Plain: the Historical Geography of Tsopk/Karbert*, in *Armenian Tsopk/Kharpert*, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2002, էջ 50:

ծեռներեցությամբ: Երիտասարդերից շատերն ընդգրկվեցին բարձրագույն կրթական հաստատություններում: 1923 թ. Վուսթերում սկսեց գործել ԱՄՆ-ում առաջին ասորի ուղղափառ եկեղեցին:

Ինչպես և Խարբերդում, ասորիները Մասաչուսեթսում շարունակում էին սերտորեն կապված լինել հայերի հետ՝ կազմելով նրանց հետ, Էդեն Նաբիի խոսքերով, «համարյա ընտանիք»: Հայ-ասորական ամուսնությունները շարունակում էին մեծ թիվ կազմել: Ինչպես երևում է Assyrian Progress պարբերականի բազմաթիվ հոդվածներից,

հայերի հետ զույգ կազմող ասորիները, որպես կանոն, ընդգրկվում էին հայկական համայնքի մեջ, և նրանց զավակների կապն ասորական համայնքի հետ հիմնականում թույլ էր:

Մասաչուսեթսում ասորիների համայնքային կյանքում կարևոր դեր էին խաղում պարբերաբար կազմակերպվող դաշտագնացություններն ու այլ հավաքները, որոնց մասին բազմաթիվ հաղորդագրություններ ենք կարդում «Բաբելոնում»: Ամերիկաբնակ խարբերդցիները հիմնել էին նաև մի շարք միություններ ու ընկերակցություններ, որոնց մի քանիսի հայերեն անվանումները պահպանվել



Պատկեր 13. «Խարբերդի ասորոց նպաստամատուց ընկերության» կանոնագիրքը

են՝ «Խարբերդի ասորոց նպաստամատուց ընկերություն», «Խարբերդի ասորի կարոտելոց ընկերություն» և այլն: Սրանց հիմնական նպատակն էր Խարբերդում մնացող ասորիներին դրամական աջակցություն ցույց տալը: Որպես այս կազմակերպությունների հիմնադիր՝ սովորաբար հիշատակվում է Աբրահամ Յուսուֆը<sup>129</sup>, թեև փաստացի ապացույցներ դրա վերաբերյալ մեզ հայտնաբերել չի հաջողվել:

<sup>129</sup> Donabed, S., նշվ. աշխ., էջ 83:

Աբրահամ Յուսուֆը (1866-1924) ԱՄՆ-ի խարբերոցի ասորիների ամենանշանավոր ներկայացուցիչն ու ոչ պաշտոնական առաջնորդն էր: Նա ծնվել էր Խարբերում և Աշուր Յուսուֆի հորեղբորորդին էր: Ի տարբերություն իր նշանավոր ազգականի, որը զտարյուն ասորի էր, Աբրահամ Յուսուֆը մոր՝ Սառա Թովմասյանի կողմից հայ էր և ասորական համայնքի հետ մեկտեղ գրեթե հավասարաչափ ներգրավված էր նաև Մասաչուսեթսի հայ համայնքի կյանքում: Նա ավարտել էր Այնթապի «Կենտրոնական Թուրքիայի քոլեջը», ապա, տեղափոխվելով ԱՄՆ, շարունակել ուսումը Բալթիմորի բժշկական քոլեջում: Որպես բժիշկ՝ նա ծառայության էր անցել Միացյալ Նահանգների բանակում և հասել մայրի կոչման: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Փարիզում գումարված խաղաղ կոնֆերանսին՝ արևելյան ասորի, բողոքական քարոզիչ Ջոել Վերդայի հետ միասին նա ներկայացնում էր ԱՄՆ-ի ասորիներին: «Բաբելոնը» պարունակում է բազմաթիվ նյութեր Աբրահամ Յուսուֆի գործունեության մասին Փարիզում, ինչպես նաև նրա կողմից հեղինակված մի քանի նյութեր:

Մասաչուսեթսի հայախոս ասորիների միջավայրում ծնունդ առած թերևս ամենանշանավոր կազմակերպությունը «Բաբելոնը» հրատարակող «Ասորվոց Հնգյակ ընկերությունն» էր (Assyrian Five Association), որը հիմնադրվել է 1917 թ. մայիսի 5-ին Բոստոնում: Հայերենին անձանոթ ասորի հետազոտողների համար Five բառը հանելուկ էր մնացել: Այսպես, Էդեն Նաբին ենթադրել է, որ ընկերությունը բաղկացած է եղել հինգ անդամներից<sup>130</sup>, կամ ծնունդ է առել հինգ այլ միությունների միանալու արդյունքում<sup>131</sup>: Իրականում ընկերության «Հնգյակ» անվանումը կապված է նրա գործունեության հինգ նպատակներից, որոնց անդրադառնալը սույն աշխատության մեջ կարևոր չենք համարում:

Ըստ «Բաբելոնի» մի հոդվածի՝ Ընկերությունն սկզբնապես կազմված է եղել 7-8 անդամներից<sup>132</sup>: Ընկերության անունից տպված մեկ այլ հոդվածում կարդում ենք. «Անդամներ ցարդ ունինք 15 հատ, սակայն վերջերս նոր անդամակցիլ փափագող ազնիվ ազգայնոց լեցուցած *էփիքեյձներ* ալ մեծ թիվ մը ունինք սեղանի վրա... Վստահ ենք

<sup>130</sup> *The Assyrian Experience: Sources for the Study of the 19<sup>th</sup> and 20<sup>th</sup> Centuries*, ed. by Eden Naby & Michael E. Hopper, Harvard College Library, Cambridge, 1999, էջ 41:

<sup>131</sup> Naby, E., *Almost Family: Assyrians and Armenians in Massachusetts*, in *The Armenians of New England*, ed. by Marc Mamigonian, Armenian Heritage Press, 2004, էջ 47:

<sup>132</sup> Թուֆա, Մ., «Հաջողակ դիրք բռնել», «Բաբելոն», թիվ 5, սեպտեմբեր 18, 1919:



Պատկեր 14. «Ասորվոց Հնգյակ Ընկերության» կնիքը

թե ի մոտո 1-2 ամիսեն սույն ազնիվ հատկության տեր և իրական ազգասերներու, մտավորական և գործունյա դասակարգի անդամակցությամբը շատ դյուրավ բարձրացունել թիվը 30-ի»<sup>133</sup>:

Ընկերության ղեկավար մարմնի կազմը 1919 թ. ունեցել է հետևյալ պատկերը. ատենապետ՝ Էդվարդ Քենդեր (Իսքենդեր), փոխատենապետ՝ Յուսուպ Չաթաբաշ, ատենադպիր՝ Նշան Պ. Գոյուն,

գանձապահ՝ Ալբեր Սեֆեր, խորհրդականներ՝ Պիտեր Սեֆեր, Չալի Չելիր, Տիգրան Ա. Սեֆեր<sup>134</sup>: Ղեկավար մարմնի այս նույն կազմը պահպանվել է նաև 1920 թ. մայիսին կայացած ընտրություններում<sup>135</sup>:

Ասորվոց Հնգյակ Ընկերության գաղափարախոսության հիմքում ասորիների վերհարանվանական միասնության գաղափարն էր և անկախ պետություն հիմնելու ձգտումը: Առկա էր նաև հստակ արտահայտված հակակղերականությունը, քանի որ ասորի մտավորականության մեջ լայն տարածում ունեւր այն գաղափարը, թե ասորիների ազգային պառակտվածության բուն պատճառը հոգևորականներն են: Այսպես, «Բաբելոնի» խմբագրականներից մեկում կարդում ենք. «Կղերները պետք է կղերականության մեջ սահմանափակենք, իրենց հոգևոր պաշտոնը ցուցնենք և ձեռքերնին ազգային ու քաղաքական խնդիրները բոլորովին քաշել տալու ենք»<sup>136</sup>: Սա բավականին անսովոր երևույթ էր այդ ժամանակների ասորական կյանքի համար և, ինչպես կարելի է ենթադրել «Բաբելոնի» որոշ հոդվածների ենթատեքստից, առաջացնում էր շատերի դժգոհությունը: Այս ամենը համահունչ էր Աշուր Յուսուֆի ազգայնական հայացքներին, որոնք նա արտահայտել էր Խարբերդում, իր հրատարակած *Մյուրշիդ-ի-Ասիրիյուն*

<sup>133</sup> «Մեր պարասխանը», «Բաբելոն», թիվ 6, հոկտեմբեր 2, 1919:

<sup>134</sup> «Ազգային կյանք Ամերիկայի մեջ», «Բաբելոն», թիվ 8, հոկտեմբեր 30, 1919: Նույն հոլվածից տեղեկանում ենք, որ Ասորվոց Հնգյակ Ընկերությունն ունեցել է իր օրհներգը, որը ասորերեն-թուրքերեն խառնորդով կոչվել է *էյ Ասուրոյո Համշո Շիրքեթի* («Ո՛վ Ասորվոց Հնգյակ Ընկերություն»):

<sup>135</sup> «Մավրոնութո դասուրոյո» («Ասորական լուրեր»), «Բաբելոն», թիվ 22, մայիս 13, 1920:

<sup>136</sup> «Մեզի ի՞նչ պետք է», «Բաբելոն», խմբագրական, Ա տարի, թիվ 27, հուլիս 22, 1920:


պարբերականում: Պատահական չէ, որ 1918 թ. Ընկերությունը հայերեն հրատարակեց Աշուր Յուսուֆին նվիրված «Ասորվոց անգուգական ոահվիրան» ժողովածուն, որի տիտղոսաթերթի վերևում ասորերեն գրված է «Այո, Աշուր Յուսուֆը մահացել է, սակայն նա խոսում է»: Ժողովածուն ընդգրկում է Աշուր Յուսուֆին նվիրված հոդվածներ, նրա մի քանի հոդվածները և հայերեն ու թուրքերեն գրած նրա բանաստեղծությունները: Ընկերության կնիքից բացի՝ ժողովածուի տիտղոսաթերթը միակ փաստաթուղթն է, որի վրա պահպանվել է Ընկերության անվանման ասորերեն տարբերակը՝ *Շատութաֆութոն դ-համշո դ-աթուրայե բ-Բոստրոն*, ինչպես նաև ընկերության հիմնադրման ստույգ տարեթիվը՝ մայիս 5, 1917 թ.:

Իր պաշտոնական «Բաբելոն» պարբերականն Ասորվոց Հնգյակ Ընկերությունը հրատարակում էր 1919 թ. օգոստոսից մինչև 1921 թ. օգոստոսը: Այն տպվում էր Assyrian Star Press տպարանում, որն, ըստ երևույթին, պատկանում էր Ընկերության անդամներից մեկին (ամենայն հավանականությամբ՝ Յուհաննա Չաթալբաշին):

Ընկերությունը զբաղվում էր նաև բարեգործական գործունեությամբ և դրամահավաքով: Այդ նպատակով հրատարակում և վաճառում էր ասորական մոտիվներով բացիկներ, ինչպես նաև պատրաստում էր կրծքանշաններ, դրոշակներ և այլ նման իրեր, որոնք վաճառվում էին ոչ միայն Ամերիկայում, այլև Թուրքիայում և Մերձավոր Արևելքում:

«Բաբելոնը» թույլ է տալիս բավականին լավ պատկերացում կազմել ԱՄՆ-ում XX դ. առաջին երկու տասնամյակներին ասորիների հասարակական և մշակութային կյանքի մասին: 1920-ականների համար նման վստահելի ակզբնադրյուր գոյություն չունի, ապա 1932 թ. լոսանջելեսաբնակ երիտասարդ խարբերդջի ասորիներն սկսում են անգլերեն հրատարակել Assyrian Progress պարբերականը, որը լույս տեսավ մինչև 1938 թ.: Սա «Կալիֆոռնիայի ասորական ամերիկյան բարեգործական ընկերության» (Assyrian American Benevolent Association of California) պաշտոնաթերթն էր: Ի տարբերություն ձեռագիր «Բաբելոնի»՝ Assyrian Progress-ը տպվում էր գրամեքենայով և աչքի ընկնում գրաֆիկական ոճի հարուստ պատկերազարդումով, հատկապես՝ հրատարակման առաջին տարվա ընթացքում:

# ASSYRIAN PROGRESS



Պատկեր 15. Assyrian Progress-ի համրներից մեկի պատկերագարի շապիկը

հաստատված և հայրենիքի հետ դեռ հոգեբանորեն և զգայականորեն սերտորեն կապված և նրա շուրջ ծավալվող քաղաքական իրադարձություններին ուշիուշով հետևող ավանդական հասարակության ծնունդ էր, անզլալեզու Assyrian Progress-ում տեսնում ենք արդեն մի համայնք, որը, շարունակելով պահպանել իր ազգային ինքնությունը, միևնույն ժամանակ ավելի կայունացած, ինտեգրված և ամերիկանացած է, և որում արդեն ավելի նկատելի դեր է խաղում ԱՄՆ-ում մեծացած երիտասարդ սերունդը: Պարբերականի հոդվածներից մեկն այսպես է նկարագրում ամերիկաբնակ խարբերոցի ասորիների կարգավիճակը. “Little by little, the old customs are being lost by the new generation in America, even while the parents continue their observance”<sup>137</sup> («Նոր սերունդն Ամերիկայում քիչ-քիչ կորցնում է հին սովորությունները, նույնիսկ եթե ծնողները շարունակում են պահպանել դրանք»):

<sup>137</sup> Hoyen, J., “Worcester’s New Assyria”, Assyrian Progress, July, 1934:

Assyrian Progress-ն առավելապես լուսաբանում էր Կալիֆոռնիայում հաստատված և Մասաչուսեթսից տեղափոխվողների հաշվին շարունակաբար աճող խարբերոցի ասորիների համայնքի կյանքը, թեև նրանում քիչ չեն նաև նյութերը Մասաչուսեթսի և, մասնավորապես՝ Վուսթերի մասին, որը 1930-ականներին էլ մնում էր ԱՄՆ-ում խարբերոցի ասորիների գլխավոր կենտրոնը:

Բովանդակային առումով Assyrian Progress-ը որոշ ընդհանրություններ ունի «Բաբելոնի» հետ, սակայն տարբերություններն ակնհայտ են: Ի տարբերություն հայալեզու «Բաբելոնի», որն ԱՄՆ-ում համեմատաբար վերջերս

Assyrian Progress-ը թույլ է տալիս քիչ թե շատ հստակ պատկերացում կազմել 1930-ականներին խարբերոցի ասորիների մեջ տիրող լեզվական իրավիճակի մասին: Ակնհայտ է, որ ավագ և միջին սերունդը, լավ չտիրապետելով անգլերենին, շարունակում էր կառչել հայերենից: Հոդվածներից մեկում կարդում ենք, որ Եզեկիել Մալճանը, որը երկար ժամանակ կատարում էր Assyrian Progress-ի խմբագրի պարտականությունը, ասորիների հավաքներից մեկում ելույթ էր ունեցել անգլերենով և հայերենով և որ “most of the old folks enjoyed the Armenian language”<sup>138</sup> («տարեցների մեծամասնությունը վայելեց հայերենը»): Մեկ այլ հոդվածում կարդում ենք. “Mr. Maljan read the Armenian translation of the Wounded Eagle from the Assyrian Progress for the benefit of those that did not understand it in English”<sup>139</sup> («Պրն. Մալճանը ընթերցեց Assyrian Progress-ից «Վիրավոր արծվի» հայերեն թարգմանությունը նրանց համար, ովքեր այն անգլերեն չհասկացան»): Ապա՝ “Mr. Albert Safer had prepared an article in Armenian that he read to us.”<sup>140</sup> («Պրն. Ալբերտ Սաֆերը հայերեն հոդված էր պատրաստել, որը նա ընթերցեց մեզ»):

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ում ծնված և մեծացած երիտասարդ սերնդին, ապա Assyrian Progress-ից հետևում է, որ այն՝ լինելով, բնականաբար, առաջին հերթին անգլախոս, պահպանում էր հայերենով շփվելու ունակությունը: Սա միանգամայն բնական է թվում, քանի որ հայերենն այն լեզուն էր, որը նրանք լսում էին իրենց ընտանիքներում և որով ստիպված էին շփվել իրենց՝ անգլերենին չտիրապետող ավագների հետ: Դժվար է ասել, թե որքանով էին նրանք պահպանում այդ ունակություններն ավելի հասուն տարիքում, երբ կապը հայախոս սերնդի հետ բնական պատճառներով խզվել էր: Ասորական ինքնագիտակցություն պահպանող խարբերոցի ասորիների ներկայումս ապրող սերնդի համար հայերենն արդեն ամբողջությամբ օտար լեզու է, թեև քչերի համար է գաղտնիք, որ այն եղել է իրենց պապերի և տատերի միակ կամ հիմնական խոսակցական լեզուն:

Այստեղ նշենք նաև, որ ծուլման աստիճանն ԱՄՆ-ում հաստատված խարբերոցի ասորիների միջավայրում ավելի բարձր էր, քան հայերի: Դա բացատրվում է հայերի

<sup>138</sup> Assyrian Progress, June, 1938:

<sup>139</sup> Assyrian Progress, May, 1934:

<sup>140</sup> Assyrian Progress, January, 1934:

համեմատ նրանց փոքր թվով, ազգային լեզվի բացակայությամբ և ազգային հաստատությունների թուլությամբ: Պարզ չէ, թե ինչ աստիճանով էին հայախոս ասորիները ձգտում կամ փորձում փոխանցել նոր սերնդին հայերենը, սակայն ակնհայտ է, որ ավագ սերնդի ասորիները, ինչպես և հայերը (և դրա մասին կարդում ենք Վիլյամ Սարոյանի՝ նույն ժամանակաշրջանն ու վայրը նկարագրող պատմվածքներում), ջանում էին, որ իրենց զավակներն առաջին հերթին կատարելապես տիրապետեն անգլերենին և ինտեգրվեն ամերիկյան հասարակության մեջ:

Assyrian Progress-ից տեղեկանում ենք, որ 1933 թ. մարտին պարբերականի երիտասարդներից բաղկացած խմբագրակազմն ասորական հավաքույթներից մեկի ժա-

TRIPLE A JUNIORS  
Present  
DICKIE  
FROM HOLLYWOOD  
A THREE ACT COMEDY IN  
ARMENIAN  
BY ALBERT MARSHALL  
at DANISH AUDITORIUM  
1359 1/2 WEST 24th ST., NEAR VERMONT  
SAT. MAY-23, 1936  
8: P.M. SHARP  
ADULTS  
50¢  
CHILDREN  
25¢  
REFRESHMENTS WILL BE SERVED

Պատկեր 16. Հայերեն ներկայացման ազդ. Assyrian Progress պարբերականում

մանակ հայերեն ներկայացրել էր Մերի Սաֆերի հեղինակած և բեմադրած մեկ գործողությամբ անանուն կատակերգությունը, որը տեղի էր ունենում Assyrian Progress թերթի խմբագրությունում և անդրադառնում էր ասորական համայնքում պարբերական հրատարակելու դժվարություններին: 1936 թ. մայիսին «Կալիֆոռնիայի ասորական ամերիկյան բարեգործական ընկերության» երիտասարդական թևի անդամները բեմադրել և հայերեն համայնքին էին ներկայացրել Ալբերտ Մարշալի «Դիքին Հոլիվուդից» երեք գործողությամբ կատակերգությունը<sup>141</sup>: Այս ներկայացման՝ Assyrian Progress-ում տպված տպավորիչ ազդը հատուկ նշում է, որ ներկայացումը “in Armenian” հայերեն է: 1935 թ. դեկտեմ-

<sup>141</sup> Assyrian Progress, May, 1936:



բերին Վուսթերի երիտասարդները հայերեն ներկայացրել էին մեկ գործողությամբ կատակերգություն. Assyrian Progress-ը հիշատակում է պիեսի հայերեն անունը՝ «Քառասուն ութնոց փորձանքը», որը գրված է լատինական տառերով՝ Karasoon-ootnotz portzanka: Սրանից բացի՝ Assyrian Progress-ում տեսնում ենք լատինատառ ևս մի քանի հայերեն բառեր՝ zome-paatz (ծոմ պահաց), veejag (վիճակ), tanaboor (թանապուր), gayant (կաղանդ):

Երիտասարդ սերնդի ասորիների մեջ հայերենը նկատելի որակական կորուստ էր կրել՝ հատկապես լավ հայկական կրթություն ստացած իրենց ավագ սերնդների համեմատ: Assyrian Progress-ում կարդում ենք, որ «Կալիֆոռնիայի ասորական ամերիկյան բարեգործական ընկերության» երիտասարդական թևի ղեկավար Մալճան Չավուրը ելույթ ունենալով համայնքային ժողովներից մեկում խոսում էր «կոտրատված հայերենով» (broken Armenian): Անդրադառնալով Մերի Սաֆերի վերոնշյալ հայալեզու կատակերգությանը՝ պարբերականը նշում է, որ իրենց ամերիկյան արտասանությամբ երիտասարդ դերասաններն առաջացրին հանդիսատեսի ծիծաղը:

1930-ականներին և, հավանաբար, հետագա մեկ-երկու տասնամյակներում Կալիֆոռնիայի ասորիների մեջ հայերենի պահպանմանն անկասկած նպաստում էր այն, որ, ինչպես և Մասաչուսեթսում, նրանք սերտորեն կապված էին հայերի հետ: Ըստ Assyrian Progress-ի՝ հայերը հաճախ հայերեն խոսք էին առնում ասորական հավաքների ժամանակ, որը ևս մեկ անգամ վկայում է, որ առնվազն 1930-ականներին հայերենը շարունակում էր լայնորեն գործածելի լինել խարբերոցի ասորիների միջավայրում: Պարբերականն ընդհանրապես լի է հայկական անուններով և հայ-ասորական ամուսնությունների բազմաթիվ վկայություններով: Ինչպես և արևելյան ափում, խառն ամուսնություններից ծնվածները սովորաբար ինտեգրվում էին հայկական համայնքի մեջ և, ի վերջո, հայանում, թեև Assyrian Progress-ի որոշ տվյալներից կարելի է եզրակացնել, որ ոմանք հավասարապես բաժանում էին իրենց կյանքը երկու համայնքների միջև:

Ներկայումս ԱՄՆ-ում խարբերոցի ասորիների ժառանգների ամենամեծ կուտակումը վերստին Մասաչուսեթսի Վուսթեր քաղաքում է: 1950-60-ականներին Վուսթերի ասորական համայնքի պատկերը նկատելիորեն փոխվեց Սիրիայից և Թուրքիայից (հիմնականում՝ Տուր Աբդինից) ներգաղթած հակորիկ ասորիների հաշվին, որոնք հա-

յախոս չէին և չունեին հայերի հետ սերտ գոյակցության ավանդույթներ: Արաբախոս և թրքախոս տարրի մեծացումը նպաստեց Վուսթերում և խարբերոցի ասորիների այլ համայնքներում հայերենի «մարման» բնական գործընթացին: Այստեղ հարկ է նշել, որ ի տարբերություն խարբերոցիների՝ Ուրֆայից ծագող ասորիներից (այսպես կոչված *ուրֆայի*-ներ) շատերը, որոնք ներկայումս հիմնականում բնակվում են Հալեպում և Հյուսիսային Ամերիկայում, շարունակում են պահպանել հայերենը որպես «ընտանիքի լեզու»<sup>142</sup>: Սրան նպաստում է այն, որ Հալեպում ուրֆացիներն ունեն իրենց սեփական թաղը (արաբերեն՝ *հայյ աս-սրյան*) և զանազանվում են քաղաքի մյուս ուղղափառ ասորիներից, թեև նրանց պարագայում էլ արաբացման միտումն ակնհայտ է:

---

<sup>142</sup> Մենք անձամբ հնարավորություն ենք ունեցել հայերեն ազատորեն հաղորդակցվելու Տորոնտոյում բնակվող *ուրֆայի* ասորիների հետ:

## 2.1. Ընդհանուր բնութագիր

Լինելով ոչ պրոֆեսիոնալ լրագրողների կողմից հրատարակվող պարբերական՝ «Բաբելոն» աչքի չէր ընկնում հստակ կառուցվածքով և կանոնակարգվածությամբ: Ունենալով քիչ թե շատ հստակ դիրքորոշում այս կամ այն ազգային և քաղաքական հարցերի վերաբերյալ՝ հրատարակիչները գրեթե չեն ունեցել խմբագրական քաղաքականություն տեխնիկական հարցերի պարագայում: Ինչպես նշել էինք, խմբագիրները, որոնք երկու տարիների ընթացքում առնվազն երկուսն էին, ամենայն հավանականությամբ չէին մշակում և խմբագրում ստացվող նյութերը, և նրանց պարտականությունը հիմնականում կայանում էր նյութերն արտագրելու և դրանց շարունակական շարադրանքն ապահովելու մեջ: Խմբագրականից (կամ որպես խմբագրական գործածված հոդվածից) հետո նյութերն ավելացվում էին ստացվելուն պես, որի պատճառով նույնիսկ մշտական բաժինները, որպես կանոն, չունեին իրենց ամրագրված դիրքը:

«Բաբելոնի» բովանդակային մասն աչքի է ընկնում բազմազանությամբ: Լինելով հասարակական կազմակերպության օրգան՝ այն միևնույն ժամանակ հայախոս ասորիների համար յուրատեսակ ամբիոն էր, թեև ակնհայտ է, որ Ասորվոց Հնգյակ Ընկերության տեսակետներից սկզբունքայնորեն տարբերվող տեսակետները «Բաբելոնի» էջերում չէին հայտնվում:

1900 թ. ի վեր ԱՄՆ-ում հրատարակված ասորական մամուլի վերաբերյալ իր հետազոտությունում Խոշաբա Յասիմը թվարկում է այն բնագավառները, որոնց սովորաբար անդրադառնում էր ամերիկաասորական մամուլը, այն է.

1. ազգային խնդիրներ
2. գովազդեր
3. զվարճալիք
4. հատուկ իրադարձություններ
5. գրական նյութեր

<sup>143</sup> Աշխատանքում կիրառում ենք «Բաբելոնի» հոդվածների հետևյալ կոդավորումը.

Ա կամ Բ՝ հրատարակության առաջին (1919-1920) կամ երկրորդ (1920-1921) տարի – «Բաբելոնի» ընթացիկ համարն ըստ իր շապիկի – հոդվածի համարն ըստ մեր թիվ 2 հավելվածի (օրինակ՝ Ա-27-5, Բ-3-6):

6. մարզական լուրեր
7. կրոն
8. կրթություն<sup>144</sup>

Բացի մարզականից՝ «Բաբելոն» այս կամ այն ծավալով պարունակում է Խոշաբա Յասիմի թվարկած բոլոր ոլորտները: Քանի որ պարբերականի բովանդակային մասը սույն ուսումնասիրության բուն առարկան չէ, ապա բավարարվենք նշելով, որ այն պարունակում է ազգային-հայրենասիրական, քաղաքական, հասարակական, խրատախոսական, կրոնափիլիսոփայական, պատմագրական, կենսագրական և այլ բնույթի հոդվածներ, հաղորդագրություններ ԱՄՆ-ում և Մերձավոր Արևելքում բնակվող ասորական համայնքների կյանքի և քաղաքական ու հասարակական կազմակերպությունների գործունեության մասին, հաղորդագրություններ և վերլուծություններ ասորիների հետ առնչություն ունեցող միջազգային իրադարձությունների մասին, արտատպումներ այլ պարբերականներից (այդ թվում՝ հայկական), գեղարվեստական բնույթի շարադրություններ, ասացվածքներ և բանաստեղծություններ (ընթերցողների և համագործակցողների գրած<sup>145</sup>), զանազան բնույթի հայտարարություններ, ծանուցումներ և գովազդ, ասորերենի բառացանկեր և այլն: Ժամանակ առ ժամանակ «Բաբելոնում» տեղադրվում էին նաև լուսանկարներ:

Տեղին է կրկնել, որ «Բաբելոնի» նյութերի ճնշող մեծամասնությունը հայերեն է, սակայն պարբերաբար հրատարակվում էին նաև անգլերեն և ասորատառ կամ հայատառ թուրքերեն (օսմաներեն) գրված նյութեր:

## 2.2. Մշտական բաժիններ

Թեև, ինչպես նշեցինք, «Բաբելոնը» չունի հստակ կառուցվածք և աչքի էր ընկնում կանոնակարգվածության և ստանդարտավորվածության բացակայությամբ, այն, այնուա-

---

<sup>144</sup> Jasim, Kh., նշվ. աշխ., էջ 5:

<sup>145</sup> Մեջբերենք մեկ հատված Մերի Չեվուրի բանաստեղծություններից մեկից (Ա-27-5).

«Ո՛վ անձնազոհ եղբարք ասորիք,  
Որ կը հանգչեք նահատակ որդիք,  
Ձեր սուրբ արյան թողած կաթիլներ,  
Փրկեց խեղճուկ ասորի գերիներ»:

մենայնիվ, ուներ մշտական բաղադրիչներ և բաժիններ, որոնց ընդհանուր նկարագրությունն ու բնութագիրը ներկայացնում ենք ստորև:

### 2.2.1. Տիտղոսագլուխներ և տիտղոսաթերթեր

Հայ-ասորական լեզվական համակեցության համատեքստում «Բաբելոնի» տիտղոսագլուխներն ու տիտղոսաթերթերը թերևս պարբերականի ամենահատկանշական մասերից են: Ի տարբերություն պարբերականի հիմնական զանգվածի, որն ամբողջությամբ ձեռագիր է (թեև խմբագրությունը մի քանի անգամ հայտնում է գրամեքենա գնելու իր մտադրության մասին), տիտղոսագլուխներն ու տիտղոսաթերթերը տպվում էին տպարանում, ամենայն հավանականությամբ՝ Assyrian Star Press-ում:

Տիտղոսագլուխ տեսնում ենք արդեն ամենաառաջին համարում, որը լույս տեսավ 1919 թ. օքտոտոսի 7-ին (պատկեր 17): Նրա առաջին տողը պարունակում է ասորական գրով տպված *ԲԱԲԵԼ* («Բաբելոն») բառը. ինչպես նշել էինք, Խարբերդի ասորիների մեծ մասը ծանոթ էր ասորական գրին, ուստի այս բառը պետք է հեշտ ընթեռնելի ու ընկալելի լիներ ընթերցողների ճնշող մեծամասնության համար: Հաջորդ տողը պարունակում է շեղագիր օրնամենտալ տառատեսակով տպված և շրջանակի մեջ վերցված հայերեն *ԲԱԲԵԼՈՆ* բառը: Հաջորդ երեք տողերի վրա ավելի պարզ շեղագրով հայերեն տպված է *Կիսամսեայ Հանդէս/Ազգային/Պաշտոնաթերթ Ասորոց Հնգեակ Ընկերութեան*: Վերջին տողի վրա գլխագիր տառերով տպված է՝ ԹԻԻ 1/ՀԻՆԳՇԱԲ-ԹԻ/ՕԳՈՍՏՈՍ 7, 1919:

Ա-2 համարի տիտղոսագլուխն ունի նույն կառուցվածքը, սակայն նրանում ավելանում է *ՊՈՍՏՈՆ* բառը՝ վերջին տողում՝ ամսաթվից հետո:

Ա-5 համարի տիտղոսագլխում վերջին տողից առաջ ավելանում է անգլերեն BABYLON բառը: Պարբերականի անվան եռալեզու այս գրությունը պահպանվում է հետագա բոլոր տիտղոսագլուխներում և տիտղոսաթերթերում:

Նույն համարից սկսած՝ առանձին էջի վրա գտնում ենք համարի բովանդակությունը՝ շրջանակի մեջ զետեղված: Էջի վերևում տեսնում ենք «Բաբելոն» բառը՝ ասորե-



*Արմենիայի Կուսակցության*

*Վարչակազմի*

*Երևան, Կոմիտասի փողոցի 17 համարի տիտղոսագլուխը*

ԹԻԻ 1

ՀԻՆԳՇԱԲԹԻ

ՅԳՈՍՏՈՍ

7

1919

Պատկեր 17. «Արմենիա» առաջին համարի տիտղոսագլուխը

րեն և հայերեն: Բովանդակություն պարունակող նման էջեր գտնում ենք հետագա բոլոր համարներում՝ մինչև Ա-13-ը ներառյալ:

Ա-6 համարում ՊՈՍՏՈՆ բառը տեղադրվում է ՀԻՆԳՇԱԲԹԻ բառի և ամսաթվի միջև:

Ա-9 համարի վերջին տողում առաջին անգամ զետեղվում է ամսվա ասորերեն անունը՝ *Թեշրին ի Ըհրոյ* (նոյեմբեր): Ի տարբերություն նույն տողի վրա գլխագիր տառերով տպված մյուս բոլոր բառերի՝ այն տպված է փոքրատառերով՝ հավանաբար ուշադրություն գրավելու համար: Ասորերեն բառին փակագծերում հետևում է հայերեն ՆՈՅ. հապավումը: Ճիշտ նույն տեսքն ունի հաջորդ՝ Ա-10 համարի տիտղոսագլուխը: Ա-11 համարում *Թեշրին ի Ըհրոյ* բառը փոխարինվում է *Քէնունը Ըգտիմ* (դեկտեմբեր) բառով, որին փակագծերում հետևում է ԴԵԿ. հապավումը:

Ա-12 համարում ավելանում է ասորերեն *համշոշիպա* բառը, որին փակագծերում հետևում է հայերեն «հինգշաբթի» թարգմանությունը: Բացառությամբ «ԹԻԻ 12» և «(ԴԵԿ.) 25, 1919» հատվածների՝ այս տողի բոլոր բառերը՝ նեռարյալ *Պոստոն*-ը, տպված են փոքրատառ շեղագրով:

Ա-13 համարում ասորերեն «հինգշաբթի» բառը գրված է գլխագրով՝ ՀԱՄՇՕՇԻՊԱ, և արդեն չի ուղեկցվում հայերեն թարգմանությամբ: «Հունվար» ամիսը նշված է ասորերեն՝ *Քէնունը Ըհրոյ*, ապա փակագծերում հետևում է հայերեն թարգմանությունը՝ (ՅՆՎ.):

Ա-14 համարում «Բաբելոն» առաջին անգամ լույս է տեսնում առանձին տիտղոսաթերթով, որն ամբողջությամբ տպարանի արտադրանք է: Տիտղոսաթերթի վերին հատվածն ամբողջությամբ կրկնում է նախորդ մի քանի համարների տիտղոսագլուխները, այսինքն՝ պարունակում է եռալեզու «Բաբելոն» անվանումը, երեք տողերի վրա բաժանված *Կիսամսեայ Հանդէս /Ազգային/ Պաշտոնաթերթ Ասորոց Հնգեակ Ընկերութեան* բառերը և երկու հորիզոնական գծերի միջև տեղադրված *ԹԻԻ 14 ՀԱՄՇՕՇԻՊՕ ՊՈՍՏՈՆ ՔԵՆՈՒՆԸ ԸՀՐՕՅ 22 1920* բառերը: Ինչպես տեսնում ենք, ասորերեն բառերն այլևս չեն ուղեկցվում հայերեն թարգմանությամբ:

Ավանդական այս տիտղոսագլխի տակ առաջին տիտղոսաթերթի վրա գտնում ենք ասորերեն *ՏՈՒՊՕՔՕ* բառը, որին փակագծերում հետևում է հայերեն թարգմանությունը՝ *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ*: Սա միակ տիտղոսաթերթն է, որը պարունակում է *տուպօքօ* բառի հայերեն թարգմանությունը, մյուսների վրա այն արդեն բացակայում է:

Պարզ պատկերազարդի տակ զետեղված է համարի բուն բովանդակությունը, որը գրեթե ամբողջությամբ շարված է գլխագիր տառերով: Հոդվածների վերնագրերը տեղադրված էն ձախից, հեղինակները՝ աջից:

*ՍԻՍԱԼ ՉԻ ՀԱՍԿՆԱՆՔ  
 ԼԱԻ Է ՄԵՌՆԻԼ՝ ՔԱՆ ԳԵՐԻ ԱՊՐԻԼ  
 ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ  
 ՔԱՆԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ  
 ՆԱՄԱԿԱՆԻ ՏԻԹՐՈՒԹԷՆ<sup>146</sup>  
 ՄԴ.<sup>147</sup> ԱՖՐԷՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ  
 ԶՂՋԱՆ ԱՂՕԹՔ  
 ԱՍՈՐԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՀԱՆՋՆ  
 ՀԱՇԻՊՕ (ԿԻՐԱԿԻ) ՄԸ W Hoboken  
 ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ  
 ՄԱՎՏՈՆՈՒԹՕ ՏԱՍՈՒՐՕՅՕ<sup>149</sup>  
 ԱՍՈՐԻՆԵՐԸ ՏԻԹՐՈՒԹԻ ՄԷՋ  
 ՊՈՒՐԱՏԱՆ ՇՈՒՐԱՏԱՆ*

*«ԲԱԲԵԼՈՆ»  
 ԼՈՒԴՖԻ ՔԷՇԻՇ  
 ՖՐԷՆՉ  
 Ա. Հ. ԸՆԿ.  
 ՀԱՃԻ Ա. ՉԷՎՈՒՐ  
 «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»  
 ՊԱՏ.<sup>148</sup> Ա. Կ. ՊԵՏԻԿ  
 ԹՐԳՄ Հ. Կ. ԷԼՊԻ  
 ԹՂԹԱԿԻՑ  
 ԱՇՈՒՐ Ս. ԵՈՒՍՈՒՖ  
  
 ՏԱՈՒՏ ԷԼ ՊԻ  
 Թօփլապը<sup>150</sup> Ն. Պ. Գօ-  
 յուն*

<sup>146</sup> Խոսքն ամերիկյան Դիտրոյթ քաղաքի մասին է:

<sup>147</sup> *Մդ(րան)*՝ «եպիսկոպոս»:

<sup>148</sup> Պատվելի. «Խարբերդի հայախոս ասորիները» գլխում հիշատակված Առաքել Պետիկյանն է:

<sup>149</sup> «Ասորիների նորությունները». մանրամասն այս բաժնի մասին ստորև՝ առանձին գլխում:

Հարկ է նշել, որ հոդվածների հերթականությունը պարբերականի մեջ ոչ միշտ է համընկնում տիտղոսաթերթի վրա նշվածին: Բացի դրանից՝ հազվադեպ չեն նաև տարբերություններ տիտղոսաթերթի վրա նշված հոդվածների և հոդվածագրերի անունների և «Բաբելոնի» ներսում նույն հոդվածի և հոդվածագրի անունների միջև: Այսպես, դիտարկվող տիտղոսաթերթի վրա կարդում ենք «Լուդֆի Քէշիշ», մինչ ներսում կարդում ենք «Լուդֆի Փերչ»: Հաճախ տիտղոսաթերթի վրա գետեղվում է կրճատված անունը, իսկ հոդվածի տակ՝ ամբողջական: Այսպես, սույն տիտղոսաթերթի վրա կարդում ենք «Հաճի Ա. Չէվուր», իսկ հոդվածի տակ գտնում ամբողջական անունը՝ «Հաճի Աղապապ Չէվուր»:

Բովանդակության տակ՝ երկու հորիզոնական գծերով առանձնացված, նշված է խմբագրության հասցեն՝

“BABYLON PUBLISHERS”  
475 Shawmut Ave.  
Boston Mass.

Ա-17 համարից տիտղոսաթերթի վրա հայտնվում է նոր հասցե՝ 99 W Concord St., Boston:

Տիտղոսագլխի ողջ պարունակությունը գետեղված է օրնամենտալ շրջանակի մէջ:

Տիտղոսագլխի այս կառուցվածքը՝ բովանդակությամբ պայմանավորված տարբերություններով, պահպանվում է հետագա բոլոր համարներում: Հարկ է ավելացնել, որ տիտղոսաթերթի ի հայտ գալուց հետո էլ տիտղոսագլուխները նախկինի պես շարունակում էին ավելացվել առաջին էջի վերևում՝ կրկնելով տիտղոսաթերթի վերին հատվածը:

### **2.2.2. Խմբագրականներ**

«Խմբագրական» բառը որպես այդպիսին «Բաբելոնում» չի գործածվում, բայց գրեթե յուրաքանչյուր համարի առաջին հոդվածը համապատասխանում է խմբագրականի ժա-

---

<sup>150</sup> Հայատառ թուրքերեն՝ «կազմեց»: Այս բաժնի մասին ստորև՝ առանձին գլխում:



մանակակից ընկալմանը: Դրանց մեծ մասը կրում է «Ա.Հ.Ընկ.» (Ասորվոց Հնգյակ Ընկերություն), կամ, ավելի հազվադեպ՝ «Բաբելոն» ստորագրությունը: Բ-1 համարի խմբագրականն ստորագրված է «Ասորվոց Հնգ. Ընկերություն (Նաում Բիշարով) Մանէթ», Բ-2-ի՝ «Խմբագիր «Բաբելոնի»/Ա.Հ.Ընկ.», Բ-3-ի՝ «Ասորվոց Հնգ. Ընկերություն, Նաում Բիշարով (Մանէթ)»: Ապա Բ-4-ից սկսած բոլոր համարների խմբագրականները կրում են Ասորվոց Հնգյակ Ընկերության ստորագրությունը, թեև լեզվից և ընդհանուր ոճից ակնհայտ է, որ դրանց մեծ մասի հեղինակը նույն ինքը Նաում Բեշարովն է:

Առաջին մի քանի համարների խմբագրականներն իրենց բովանդակությամբ ունեն առավելապես ծրագրային բնույթ: Այսպես, Ա-1 համարի խմբագրականը, որն ուղղակիորեն կոչվում է «Բաբելոն», բացատրում է պարբերականի ի հայտ գալու դրդապատճառներն ու նախադրյալները: Ա-2 համարի խմբագրականը կոչվում է «Մեր միսիան» և պարունակում է որոշ պարզաբանումներ Ասորվոց Հնգյակ Ընկերության գաղափարախոսության և գործունեության մասին:

Խմբագրականների մի զգալի թիվ չունի որևէ կոնկրետ թեմա և կրում է ընդհանուր հայրենասիրական կամ խրատախոսական բնույթ: Այս տիպի հոդվածները, որոնք այսօրվա բարձունքից կարելի է, թերևս, դատարկաբանություններ համարել, բնորոշ էին նաև դարասկզբի հայկական մամուլին և բավականին հաճախ հանդիպում են խարբերոցի ասորիների մյուս պարբերականում՝ Assyrian Progress-ում: Այս հոդվածների բովանդակության մասին որոշ պատկերացում կարելի է կազմել նրանց վերնագրերից՝ «Չթերանանք», «Ապագա վերաշինության պատրաստվինք», «Համագործակցություն», «Շատ կան թունավորվածներ, բայց չկա՞ն քաջեր», «Կը ժպտի ասորվոյն ապագան», «Համերաշխության պետքը», «Ուժերնիս միացնենք», «Նպատակին գործածել սովրինք», «Մարդ և դրամ», «Անհոգության արդյունքը», «Տրամաբանել գիտնանք», «Կույր կղերամուլները և չարիքը», «Նորեն անհոգություն», «Փորձառությամբ գործենք», «Ինչ պետք է մեզ անել», «Լավ է ուշ, քան երբեք» և այլն: Մի քանի խմբագրականներ վերաբերում են կրոնաբանական-եկեղեցական հարցերին. դրանք բոլորը պատկանում են Նաում Բեշարովի գրչին («Ի՞նչ է աստված և ի՞նչ է բնությունը», «Ի՞նչ են մարդկային տպավորությունները դեպ աստված», «Ինչպես կարելի է շինել Ասորի եագուպի եկեղեցին», «Քրիստոս հարյավ ի մեռելոց»):

Խմբագրականներից բացի՝ խրատախոսական, բարոյագիտական և հայրենասիրական բնույթ են կրում նաև «Բաբելոնի» այլ հոդվածներից շատերը: Դրանց մեջ կարելի է առանձնացնել կանանց հասցեագրված հոդվածները, որոնց հեղինակները հենց կանայք էին:

### **2.2.3. Պաշտոնական հաղորդագրություններ**

Այս խմբին դասում ենք հաշվետվություններն ու հաղորդագրություններն ասորական կազմակերպությունների ժողովների, ազգային հավաքների, համայնքային կառույցների ղեկավար ատյանների ընտրությունների մասին: Առաջին հերթին սա վերաբերում է Ասորվոց Հնգյակ Ընկերությանը: Այսպես, Ա-8 համարի «Ազգային կյանք Ամերիկայի մեջ» հոդվածից տեղեկանում ենք, որ Ընկերության հերթական անդամական ժողովն ընտրել է իր ղեկավար մարմինը հետևյալ կազմով. «Ատենապետ՝ Էտվըրտ Քենտեր, փոխատենապետ՝ Եուիէնէ Չաթալպաշ, ատենադպիր՝ Նշան Պ. Գոյուն, գանձապահ՝ Ալպրթ Սէֆէր, խորհրդականներ՝ Փիթր Ա. Սէֆէր, Չալի Չէվիր, Տիգրան Ա. Սէֆէր»:

Ասորական մեկ այլ կազմակերպություն, որի գործունեությունն արժանացել է ուշադրության «Բաբելոնի» էջերում, Assyrian National Assosiation-ն է (ANA), որի հետ Ասորվոց Հնգյակ Ընկերությունն, ամենայն հավանականությամբ, ուներ սերտ կապեր: Հաղորդագրություններն Ամերիկայի տարբեր քաղաքներում կայացած ANA-ի հավաքների մասին նույնպես բավականին հաճախ լույս էին տեսնում «Բաբելոնի» էջերում: Կան նաև հաղորդագրություններ «Ասորական կարմիր խաչի» և կանանց այլ կազմակերպությունների գործունեության մասին:

Պաշտոնական հաղորդագրությունների շարքին կարելի է դասել նաև տվյալները Թուրքիայում և Մերձավոր Արևելքում բնակվող ասորիներին, ինչպես նաև Ադանայի ասորական որբանոցին ուղարկվող մարդասիրական օգնության մասին:

#### **2.2.4. Մավորոնութօ Տասուրոյօ**

Ա-10 համարում գտնում ենք «Մանր հավաստի լուրեր» բաժինը, որը հաջորդ՝ Ա-11 համարում կոչվում է պարզապես «Մանր լուրեր»: Ա-12 համարում այս բաժինը կրում է ասորերեն *Մափանութօ Ջըուրէ* վերնագիրը, որին հաջորդում է հայերեն «Մանր լուրեր» թարգմանությունը: Ասորական նույն վերնագիրը՝ առանց հայերեն թարգմանության, բաժինը կրում է նաև հաջորդ՝ Ա-13 համարում:

«Մանր լուրերը» պարունակում են ասորական համայնքների առօրյային և քաղաքական անցուդարձին վերաբերող կարճ լուրեր և ծանուցումներ, ինչպես օրինակ. «Ամսոյս 4-ին կիրակի օրը տեղի ունեցաւ Պրն Եագուպ Թաշճիի ընդ Օրդ Էննա Գազանճիի պսակադրութեան արարողութիւնը ի Ուէսթ Հօպօքըն: Տէր և Տիկին Թաշճիի բարեբաստիկ և երկար տարիներ կը մաղթէ հրատարակչութիւնս»: Կամ. «Հոկտեմբեր 25 թուակիր նամակաւ Ատանայէն Պրն Ճոճիս Թ. Քէշիշ կը յաղորդէ յետագայ լուրը: Միսիւ Պրէյման (ֆրանսացի կուսակալը Ատանայի) ընդունեց տասը ասորիներ փոխի պաշտոն տալու անոնց և խոստացավ նաև օգնիլ ասորաց ամէն տեսակէտով, բարոյական և նիւթական»:

Ա-14 համարում բաժինը վերնագրված է *Մավորոնութօ Սուրեօեօ*, որը կարելի է թարգմանել որպես «ասորական լուրեր»: Համարի տիտղոսաթերթի վրա տպագրված բովանդակության մեջ նույն բաժինը կոչված է *ՄԱՎՏՕՆՈՒԹՕ ՏԱՍՈՒՐՈՅՕ*, որը բառացիորեն նշանակում է «Ասորիների լուրեր» (ըստ դասական ասորերենի կանոնների պետք է լինէր *մավորոնութօ տասուրոյե* կամ, արևելահայերեն տառադարձությամբ՝ *մավորոնութօն դասուրոյե*): Ինչպես արդեն նշել էինք, տարբեր բնույթի տարբերություններ տիտղոսաթերթի և բուն բովանդակության միջև «Բաբելոնում» պատահում էին բավականին հաճախ:

Ա-15 համարից բաժինը սկսում է կոչվել *Մավորոնութօ Տասուրոյօ* ինչպես տիտղոսաթերթի վրա, այնպես էլ պարբերականի ներսում, թեև հետագա համարներում պատահում են այդ վերնագրի անվան երկու բաղադրիչների աղավաղումներ և այլ գրություններ, օրինակ՝ *մափանութօն, ասուրոյօ, տլասուրոյօ*, որը ևս մեկ անգամ հաս-

տատում է, որ հրատարակիչները չունենին ասորերենի բավարար իմացություն և ասորերենից հայերեն տառադարձության կայուն սկզբունք:

Այս բաժնի կառուցվածքի համար միասնական ֆորմատ այդպես էլ չմշակվեց, որը զարմանալի չէ՝ նկատի ունենալով, որ ստանդարտացումն ու միասնականացումն ընդհանրապես «Բաբելոնի» թույլ կողմերից մեկն էր: Այսպես, բաժնում տեղադրվող լուրերը կարող էին լինել ինչպես անանուն, այնպես էլ ստորագրված: Շատ հաճախ բաժնում զետեղվում էին քաղվածքներ անձնական նամակներից, ինչպես, օրինակ, վերևում մեջբերված լուրն Ադանայից: Լուրերը կարող էին լինել ինչպես շատ կարճ, այնպես էլ բավականին ծավալուն: Այս բաժինը լավագույնս ապացուցում է մեր կողմից արդեն հայտնված այն միտքը, թե «Բաբելոնի» խմբագիրները որևէ կերպ չէին մշակում և խմբագրում ստացվող նյութերը՝ պահպանելով յուրաքանչյուր թղթակցի լեզվական և ոճական առանձնահատկությունները և ասորերենից հայերեն տառադարձության սկզբունքները: Սրանով է, թերևս, պայմանավորված այն, որ հենց այս բաժնում ենք գտնում ամենաէական շեղումները գրական արևմտահայերենի շարահյուսական և ոճական կանոններից (մանրամասն՝ հաջորդ գլուխներում):

### **2.2.5. Այլ հաղորդագրություններ և նամակներ**

*Մավրոնութո Տասուրոյո* բաժնի հետ սերտորեն առնչվում են առանձին հոդվածային միավորներ հանդիսացող և ծավալով սովորաբար ավելի ընդարձակ հաղորդագրություններն ու նամակները կոնկրետ քաղաքներից: Դրանց մեծ մասը սովորաբար հանդես է գալիս «Լուրեր [քաղաքից]», ավելի հազվադեպ՝ «Հաղորդագրություն [քաղաքից]», «[Քաղաքի] ասորիները», «Ասորիները [քաղաքի] մեջ» և նման այլ վերտառություններով: Առավել հաճախ գտնում ենք «Լուրեր Խարբերդէն», «Լուրեր Պոլիսէն» և «Լուրեր Ջահլէէն» (քաղաք Լիբանանում) հաղորդագրությունները, որոնք կարելի է դասել մշտական բաժինների շարքին: Սրանք հիմնականում պարունակում են լուրեր ասորական համայնքի կամ քաղաքական անցուդարձի մասին: «Հաղորդագրություն Ջահլէէն» և «Լուրեր Խարբերդէն» տեսնում ենք արդեն «Բաբելոնի» ամենաառաջին համարում: Այս լուրերն ու հաղորդագրությունները կարող էին լինել ինչպես անանուն, այն-

պես էլ ստորագրված: Որոշ դեպքերում կարող ենք նույնիսկ ասել, որ այս կամ այն անձը «Բաբելոնի» թղթակիցն էր, ինչպես, օրինակ, Նուրի Խորին, որը «Լուրեր Զահլեֆն» բաժնի մշտական հեղինակն էր:

Ինչպես նշեցինք, շատ հաճախ որպես հաղորդագրություն գործածվում էր «Բաբելոնի» շուրջ համախմբված անձանցից որևէ մեկին հասցեագրված անձնական նամակը, որը կարող էր նախորդվել «Լուրեր...» վերնագրով կամ պարզապես կոչվեր, օրինակ, «Նամակ Պոլիսէն»: Այսպես, «Խարբերդէն նամակ»-ներից մեկը գրված է ոմն Սահակ Տոնապետի կողմից և հասցեագրված բոստոնաբնակ Մելքոն Տոնապետին: Այս տիպի նամակները երբեմն ներկայացված են որպես «բաց նամակներ», հատկապես, եթե ունեն ոչ այնքան տեղեկատվական, որքան հրապարակախոսական բնույթ:

Այս շարքում հետաքրքրական են «Նամակ Փարիզէն» հաղորդագրությունները, որոնք վերաբերում են Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած Փարիզի խաղաղության վեհաժողովին: Ասորիները վեհաժողովի հետ մեծ հույսեր էին կապում և Փարիզ էին գործուղել մի քանի պատվիրակների, որոնցից մեկը խարբերդցի Աբրահամ Յուսուֆն էր: «Բաբելոնը» պարունակում է նրա մի քանի «նամակները Փարիզէն»:

«Բաբելոնում» գտնում ենք նաև նման տիպի հաղորդագրություններ ամերիկյան քաղաքներում բնակվող ասորական համայնքների կյանքի մասին, ինչպես, օրինակ, «Լուրեր Ֆիչպուրքէն», «Կիրակի մը West Hoboken-ի մեջ»,<sup>151</sup> «Ասորիները Դետրոյթի մեջ» և այլն:

Ոչ տեղեկատվական բնույթի նամակները կարելի է հիմնականում բաժանել երկու խմբի՝ «Բաբելոնին» և Ասորվոց Հնգյակ Ընկերությանը հասցեագրված նամակներ և բաց նամակներ: Առաջինները հիմնականում պարունակում են պարբերականի և Ընկերության գովեստը: Քննադատական նամակները, որոնք, ըստ ամենայնի, նույնպես քիչ չէին, «Բաբելոնը» չէր հրատարակում, սակայն ժամանակ առ ժամանակ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հիշատակում է դրանք և որոշ դեպքերում՝ արձագանքում: Կան նաև մի քանի խմբագրական պարզաբանումներ ընթերցողների կողմից հնչեցրած հարցադրումներին: Այսպես, ի պատասխան ոմն Դավուդ Էլբիի նամակին, «Բաբելոնի» մի քանի հաջորդական համարներում տպվում էր «Մեր պատասխանը» արձագանքը,

<sup>151</sup> Հետաքրքրական է, որ նույն քաղաքի անունը մի դեպքում կարող է մեջբերվել բուն լատինատառ տարբերակով (West Hoboken), մյուս դեպքում՝ հայերեն տառադարձությամբ (Ուէսթ Հօպօքըն):

որում կան բազմաթիվ տեղեկություններ Ասորվոց Հնգյակ Ըկերության ստեղծման և նպատակների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է բաց նամակներին, ապա դրանք անդրադառնում են ասորիների քաղաքական և հասարակական կյանքի ամենատարբեր հարցերին: Այսպես, Ա-10 համարում կարդում ենք «Ալ բավ է համբերենք» բաց նամակը, որն ուղղված է Ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարքին և աչքի է ընկնում հակակղերական ոգով: Բաց նամակներ հաճախ հրատարակում էր ինքը՝ «Բաբելոնը»՝ արձագանքելով այս կամ այն հրատապ հարցերին:

### **2.2.6. Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ / Պուրապան-Շուրապան**

Ա-14 համարը պարունակում է հայատառ թուրքերեն *Պուրապան-Շուրապան* («Այստեղից-այնտեղից», արևելահայ տառադարձությամբ՝ *բուրապան-շուրապան*) վերնագիրը: Բաժինը պարունակում է 11 համարակալված ասացվածքներ հայատառ թուրքերենով: Դրանց տակ, նույնպես հայատառ թուրքերենով գրված է *Թօփլապի*<sup>152</sup> Ն.Պ. Գօյուն: Մեծատառերով տպված *ՊՈՒՐԱՏԱՆ ՇՈՒՐԱՏԱՆ* վերնագիրն առկա է նաև տիտղոսաթերթի վրայի բովանդակության մեջ: Դրա կողքին՝ հեղինակների սյունակում կարդում ենք *Թօփլապը Ն.Պ. Գօյուն*՝ ի տարբերություն համարի ներսում գործածված *Թօփլապի* տարբերակի: Ի տարբերություն մեծատառերով տպված մյուս բոլոր վերնագրերի և հեղինակների անունների՝ *Թօփլապը Ն.Պ. Գօյուն* միակ բառակապակցությունն է, որը տպված է փոքրատառերով:

Հաջորդ՝ Ա-15 համարը նույնպես պարունակում է 11 հայատառ թուրքերեն ասացվածքներից բաղկագած *Պուրապան-Շուրապան* բաժինը, որն այս անգամ կրում է *Թօփլապի Նշան Պ. Գօյուն* ստորագրությունը: Տիտղոսաթերթի վրա մեծատառերով տպված *ՊՈՒՐԱՏԱՆ* թուրքերեն բառին հետևում է փոքրատառերով տպված ասորերեն *Մէն Ըլլէլ* բառակապակցությունը, որը բառացիորեն նշանակում է «վերևից»: Ապա հետևում է *ՇՈՒՐԱՏԱՆ* բառը, որից հետո՝ նույնպես փոքրատառերով, ասորերեն *Մէն Ըլքօ* («այստեղից») կապակցությունը: Այսինքն, *Մէն Ըլլէլ – Մէն Ըլքօ* արտահայտությունը

---

<sup>152</sup> «հավաքեց»:

գործածված է որպես թուրքերեն *պուրասրան-շուրասրան* արտահայտության հոմանիշ: Տիտղոսաթերթը պարունակում է նաև *Թօփլափը Ն.Պ. Գոյուն* արտահայտությունը:

Ա-16 համարի տիտղոսաթերթի վրա առկա է միայն մեծատառերով տպված *ՄէՆ ԸԼԼԷԼ ՄէՆ ԸԼՔՕ* արտահայտությունը, որին հետևում է *Թօփլափը Ն.Պ. Գոյուն*: Նույն ձևով բաժինը, որն այս անգամ պարունակում է 12 ասացվածք, վերնագրված է համարի ներսում, սակայն ստորագրության տողում կարդում ենք *Քանիշ (թօփլափը) Ն.Պ. Գոյուն*, ուր *քանիշ*-ը «հավաքեց» բառի ասորերեն համարժեքն է (ավելի մանրամասն՝ «Բայեր» գլխում):

*Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* վերնագիրը տիտղոսաթերթի վրա և համարի ներսում գտնում ենք նաև Ա-17 համարում: Տիտղոսաթերթի վրա գործածված *թօփլափը* բայի փոխարեն (սա *թօփլափը* բայի վերջին գործածությունն է «Բաբելոնում») համարի ներսում՝ 15 ասացվածքների տակ կարդում ենք՝ *էթքանաշ Ն.Պ. Գոյուն*, ուր *էթքանաշ* բայն ասորերեն *քանիշ* բայի ածանցյալ ձևն է:

Ա-18 համարում *էթքանաշ* բայը փոխարինում է *թօփլափը*-ն նաև տիտղոսաթերթի վրա, սակայն համարի ներսում՝ 5 ասացվածքների տակ կարդում ենք՝ *Քանիշ Ն.Պ. Գոյուն*: Սա *քանիշ* բայի երկրորդ և վերջին գործածությունն է «Բաբելոնում»:

Ա-19 համարում այս մշտական բաժինն էական փոփոխություններ է կրում: Նախ Նշան Գոյունի փոխարեն այս համարում տեսնում ենք *էթքանաշ Նաում Բեշարոֆ* (տիտղոսաթերթի վրա՝ *Բեշարով*) ստորագրությունը: Ապա հայատառ թուրքերեն ասացվածքների փոխարեն՝ արևելահայերեն 10 աֆորիզմներ: *Մեն Ըլլէլ Մէն Ըլքօ* վերնագիրն այս համարի ներսում ուղեկցված է «Իմաստավոր նախադասություններ, կենսական գիտելիքներ» ենթավերնագրով: Մեջբերենք երկու նմուշ. «Նա թշնամի է հասարակության, ով որ օգնում է միայն ինքն իրան» և «Երջանիկ է նա, որի շիրիմի վրա սերունդները կգրեն՝ նա միշտ կատարում էր յուր պարտականությունները դեպի մեզ»:

Ա-20 համարում *Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* բաժինը ստանձնում է մեկ այլ անձ՝ ասորի հայտնի լրագրող Սենհարիբ Բալին (*էթքանաշ Սէնհարիպ Պալի*), որը խարբերոցի չէր և գրում էր թուրքերեն: Բաժինը պարունակում է հայատառ թուրքերենով գրված 15 աֆորիզմներ:

Ա-21 համարը *Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* բաժին չի պարունակում:

Ա-22 համարում բաժինը կրկին ստանձնում է Նշան Գոյունը՝ առաջարկելով ընթերցողին 16 ասացվածքներ և ասույթներ հայատառ թուրքերենով: Սա վերջին *Մէն Ըլէլ մէն Ըլքօ* բաժինն է, որը պարունակում է թուրքերեն տեքստ: Հետագայում այս բաժնում գետեղվում են բացառապես հայերեն գրված նյութեր:

Ա-23, Ա-25 և Ա-26-րդ համարներում Նաում Բեշարովը ներկայացնում է աֆորիզմներ արևելահայերենով: Ա-24 և Ա-27-րդ համարներում այս բաժինը կրկին բացակայում է:

Հրատարակման երկրորդ տարում, երբ խմբագրի պարտականություններն ստանձնել էր Նաում Բեշարովը, *Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* բաժինը լույս էր տեսնում անկանոն կերպով: Առաջին անգամ այն տեսնում ենք Բ-8 համարում: Բաժինը կրում է «Օգտակար գիտելիք» ենթավերնագիրն ու պարունակում է արևմտահայերեն 7 աֆորիզմներ, որոնց տակ գտնում ենք *էթքանաշ Ճ.Տ. Սէֆէր* ստորագրությունը: Տիտղոսաթերթի վրա *էթքանաշ* բայը բացակայում է: Նույնը կրկնվում է նաև Բ-9 համարում, որում գտնում ենք 9 աֆորիզմներ:

Բ-10 համարի 8 աֆորիզմների տակ, որոնք այս անգամ էլ կրում են «Օգտակար գիտելիք» ենթավերնագիրը, կարդում ենք՝ *Հավաքեց և թարգմանեց Ճօնճ Տ. Սէֆէր*, այսինքն բացակայում է ավանդական դարձած *էթքանաշ* ասորերեն բայը: Սա միակ դեպքն է, երբ *Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* բաժնի տակ տեսնում ենք հայերեն բառեր: Տիտղոսաթերթի վրա անունը ներկայացված է որպես «Ճ.Տ.Սէֆէր»:

Մեկ համար ընդմիջումից հետո *Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* բաժինը լույս է տեսնում Բ-12 համարում՝ Ն.Պ. Գոյունի հեղինակությամբ, և ներկայացնում է 14 աֆորիզմներ արևմտահայերենով: Բաժնի տակ նորից հայտնվում է *էթքանաշ* բայը: Նույն կառուցվածքը գտնում ենք Բ-14 համարում, որը պարունակում է 23 իմաստախոսություն:

Երկար ընդմիջումից հետո բաժինը վերսկսվում է Բ-18 համարում, որում Ն.Պ.Գոյունը ներկայացնում է 25 հայերեն իմաստախոսություն: Ապա նոր ընդմիջումից հետո նույն ինքը Բ-21 համարում ընթերցողներին առաջարկում է 16 իմաստախոսություն:

«Բարելոնում» *Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* վերջին երեք բաժինները գտնում ենք Բ-24, Բ-25 և Բ-27 համարներում, որոնք պարունակում են համապատասխանաբար 25, 50 և 21



իմաստախոսություններ: Բոլոր երեքի տակ գտնում ենք *էթթանաշ Ն. Պ. Գոյուն* ստորագրությունը:

Այսպիսով, «Բաբելոնի» գոյության ողջ ընթացքում *Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* բաժնի համար պատասխանատու է եղել 4 անձ՝ Նշան Գոյունը, Ճոռճ Աէֆէրը, Նաում Բեշարովնու Սենահարիբ Բալին (մեկ անգամ):

Ինչպես երևում է այս համառոտ ակնարկից, Նաում Բեշարովի խմբագրապետ լինելու օրոք թուրքերենն իսպառ վերանում է *Մէն Ըլլէլ Մէն Ըլքօ* բաժնից և ամբողջությամբ փոխարինվում հայերենով, թեև «Բաբելոնը» պարունակում է Բեշարովի հեղինակած բանաստեղծությունը հայատառ թուրքերեն: Սա թույլ է տալիս ենթադրելու, որ հայերենին փայլուն տիրապետող Նաում Բեշարովը լեզվի հարցերում ցուցաբերում էր մաքրամոլության միտումներ, և նրա օրոք է, որ ասորական լեզվական նյութի ծավալը «Բաբելոնում» կտրուկ նվազում է:

### **2.2.7. Հայտարարություններ և գովազդ**

«Բաբելոնը» պարունակում է մեծ թվով տարաբնույթ հայտարարություններ, ծանուցումներ, ծանոթություններ և այլն: Որպես մշտական բաժին կարելի է դրանցից առանձնացնել «Բաբելոնին» դրամական նվիրատվություններ արած անձանց և բաժանորդների ցանկերը: Որոշ հետաքրքրություն են ներկայացնում այն հայտարարությունները, որոնք լույս են սփռում լրացուցիչ դրամ հայթայթելուն ուղղված Ասորվոց Հնգյակ Ընկերության գործունեության վրա: Այսպես, ծանուցումներից տեղեկանում ենք, որ «Բաբելոնի» խմբագրակազմը պարբերաբար հրատարակում էր «Գրպանի երգարաններ», որոնք ձեռք բերել ցանկացողներից խնդրվում էր համապատասխան գումարն ուղարկել «Բաբելոնի» հասցեով: Նույնպես հայտարարություններից տեղեկանում ենք, որ Ասորվոց Հնգյակ Ընկերությունն արտադրում էր ասորական խորհրդանիշներով կրծքանշաններ և բացիկներ, ինչպես նաև քարտեզներ և ազգային հերոսների դիմանկարներ, որոնք սպառվում էին ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Մերձավոր Արևելքում:

Ա-4 համարում լույս տեսած «Կարևոր ազդ»-ում կարդում ենք. ««Ասորվոց անգուգական ռահվիրան» գիրքը, զոր ընկերությանս կողմեն հորինված ու ձոնված էր վաղա-

մեռիկ Աշուր Էֆ. Ս. Յուսուֆի անմահ հիշատակին, այժմ կփափագինք, որ տարբեր քաղաքներու մեր գործակալները, որ ցարդ իրենց հաշիվները մաքրած չեն, հաճին շուտափույթ թղթակցիլ Պրն. Հեննե Ա. Յուսուֆի հետ, որն իրավասությունը ստանձնած է [ընթեռնելի չէ]»: Ինչպես նշել էինք, «Ասորվոց անզուգական ռահվիրան» հավաքածուն մեծ արժեք է ներկայացնում, քանի որ նրանում պահպանվել են Աշուր Յուսուֆի գրական ստեղծագործության մի քանի նմուշներ, ինչպես նաև իրեն վերաբերող կենսագրական տվյալներ:

Կարճ հայտարարություններից տեղեկանում ենք, որ Ընկերությունը կամ, առնվազն, նրա որոշ անդամներ զբաղվում էին Ամերիկայից Խարբերդ դրամի փոխանցումներով:

Ծանուցումների մեկ այլ տեսակն առաջիկա համարներում լույս տեսնելիք նյութերի անոնսներն են: Այսպես, օրինակ, Ա-1 համարում կարդում ենք ծանուցում հաջորդ մի քանի համարներում Աշուր Յուսուֆի «Ասորական եկեղեցին անցյալին ու ներկային մեջ» հոդվածի լույս տեսնելու մասին:

Ա-6 համարում գտնում ենք հետևյալ «Ծանոթություն»-ը, որը որոշ տեղեկություն է տալիս այն մասին, թե ինչպես էին ստեղծվում «Բաբելոնի» համարները. «Եվ բոլոր անոնք, որ հոդվածներ, լուրեր և նամակներ կամ նվերներ ունին ղրկվելիք «Բաբելոնին», կրնան հետևյալ հասցեին ուղարկել: ... Notice – Գրվածները պետք է մեղանով և մաքուր գրված ըլլան թուղթին մեկ կողմին վրա»: Այդ նույն կարգին է պատկանում նաև Ա-9 համարում լույս տեսած հետևյալ հետաքրքրական «Կարևոր ազդ»-ը. «Նկատի ունենալով, որ թղթի մեղանի գները օրը օրին ալ ավելի կբարձրանան և տպագրատան փոփոխման պատահառաւ ալ ավելի ծաղքի դոներ բացվեցան, և քանի որ մտադրած ենք «Բաբելոնը» ավելի դյուրին կարդացվելու համար «թայփրայթըրով» [գրամեքենա] հանելու միջոցները գտնել, ուստի կստիպվինք հետ այս թվեն ի սպառ դադրեցունել ղրկել «Բաբելոնը» բոլոր այն ազնիվ ազգայնոց, որոնք մինչև հիմա պարտազանց գտնվեցան գեթ սթեմփի [դրոշմանիշ] դրամը ղրկել մեզ, քաջ գիտնալով, որ ընկերությունս կրնա ավելի օգտակարորեն գործածել սույն «փեննիները» [մեկ ցենտանոց]»:

«Բաբելոնի» շրջանառության մասին որոշ պատկերացում է տալիս Ա-14 համարում «Ուշադրություն» վերնագրված հետևյալ հայտարարությունը. ««Բաբելոնի» բոլոր

թվերեն մասնավորապես 12-13-են բոլոր անոնք, որ հավաքածոյի համար չեն պահեր, կխնդրենք, որ դրկեն մեզի, Ադանա և այլ տեղեր դրկելու մեծ պետք կա: Կանխավ շնորհակալությունք»:

Այս շարքին պետք է դասել նաև «Բաբելոնի» անունից այս կամ այն առիթով արվող կարճ շնորհավորանքները:

«Բաբելոն» իր էջերը տրամադրում էր նաև մասնավոր հայտարարությունների համար, ինչպես, օրինակ, իրենց հարազատներին փնտրողներին:

Պարբերականում գտնում ենք նաև գովազդի նմուշներ: Այսպես, Բ-18 համարում գտնում ենք «Նվագասերներուն» վերնագրված հետևյալ տեքստը. «Գարնան անուշ օրերուն մեջն է, որ կապրինք: Սոխակներու դայլայլումն, գլգլացող վճիտ առվակներու մեղեդին, արշալույսի զեփյուռին մելամաղձոտությունը: Փիքնիքներու և հարսանիքներու, ինչպես նաև հավաքույթներու և ուրախություններու ատեն փնտրեցեք հանրածանոթ ջութակահար Ճան Չաթալպաշը, լսելու և վայլելու բնության այս պարգևները»: Գովազդի մեկ այլ նմուշ նույն համարից, որը վերնագրված է «Ուրախացիր տանդ մեջ».

««Մեկ ժամու զվարթությունը կարժե 20 դեղահատ», կսե կենսաբանը և այդ մեկ ժամու ուրախությունդ խիստ չնչին և աժան գնով կրնաս ունենալ եթե մեզի դիմես քու տանդ ֆոնոգրաֆի *րեքորդները* դրկելու: ... Դյուրամատչելի գներով: Կրնաս դիմել հետևյալ հասցեի ցուցակներու համար...»:

Բ-24 համարում կարդում ենք «ներկայացուցիչ», ըստ ամենայնի՝ ապահովագրական գործակալ Յագուբ Դաշոյի հետևյալ գովազդը. «Իմ միակ վարձատրությունս ուրիշներու ծառայելու հաճույքն է: Շահս ալ ուրիշները շահեցնելուս մեջ կփնտրեմ: Ինձ դիմողները գոհ մնացած են: Դուն ալ ապահովագրության անհրաժեշտ պետք ունիս: Առիթեն օգտվիլ չե՞ս փափագեր: Գուցե վաղը շատ ուշ ըլլա»:

### ԳԼՈՒԽ 3. «ԲԱՔԵԼՈՆԻ» ԼԵԶԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 3.1. «Բաբելոնի» հայերենը

Խարբերդի ասորիների հայախոս լինելը նշանակում էր, որ նրանց համար հրատարակվելիք պարբերականը պետք է լիներ հայերեն: Պարբերականի անդրանիկ համարի խմբագրականում կարդում ենք. «Նկատի ունենալով, որ ներկա վճռական օրերուն խարբերդցի ասորիներու փոքրամասնություն մը հույժ պետք ունին հայատառ պարբերականի մը արտասահմանի անցուդարձերուն տեղեկանալու համար, ... Ասորվոց Հնգյակ Ընկերությունը կուգա այդ զգալի պակասը լեցունել «Բաբելոնով»»<sup>153</sup>: Այս մեջբերումից հետևում է, որ խարբերդցի ասորիների միջավայրում կար մի շերտ, որի համար հասկանալի կարող էր լինել միայն հայերեն հրատարակվող պարբերականը: Թուրքերենը, հավանաբար, այլևս չէր դիտվում որպես խարբերդցիների համար հրատարակվելիք պարբերականի լեզվի տարբերակ:

Լինելով Խարբերդի ասորիների միջավայրում ծնունդ առած պարբերական՝ «Բաբելոն» առավելապես գործածում է գրական արևմտահայերենը: Հոդվածների ճնշող մեծամասնության լեզվի հարստությունը և ոճական բազմազանությունը կասկած չեն թողնում, որ հոդվածագիրներից մեծ մասը ստացել էր հայկական լավ կրթություն: Դրա հետ մեկտեղ, որոշ հոդվածներում, հատկապես նրանցում, որոնք լուսաբանում են ազգային կամ համայնքային կյանքն ու անցուդարձը, նկատվում են որոշ շեղումներ գրական արևմտահայերենի ոճական և շարահյուսական կանոններից, որը, թերևս, բացատրվում է խոսակցական լեզվի ազդեցությամբ: Խարբերդում բնակվող ասորիների մեջ, անկասկած, տարածված էր հայերենի Խարբերդի բարբառը, որը բավականին լավ ուսումնասիրված է: Այդուհանդերձ, պարբերականի էջերում այդ բարբառի որևէ նմուշ չկա:

Հոդվածների տեքստային վերլուծությունը հաստատում է մեր ենթադրությունը, որ «Բաբելոնի» խմբագիրները չէին վերամշակում և խմբագրում ստացվող նյութերը. խմբագրի պարտականությունը հիմնականում կայանում էր ստացված նյութն ընդունե-

<sup>153</sup> «Բաբելոն», Բաբելոն, թիվ 1, օգոստոս 7, 1919:

լու կամ մերժելու, արտագրելու և շարունակական շարադրանք ապահովելու մեջ: Ինչպես երևում է հոդվածներից մեկից, լեզվական թերություններն առաջացնում էին որոշ ընթերցողների դժգոհությունը, որին «Բաբելոն» արձագանքել է հետևյալ կերպ. ««Բաբելոն» չէ գրական թերթ մը, որ չգտնվին տառասխալներ և շարադրական վրիպումներ, այլ այս թերթը եղած է ու պիտի ըլլա միայն լրատու և գաղափարներ արտահայտելու պարզուկ միջոց մը: ... Մենք չունինք համամտությունը տարածել հայ գրականությունը ասորվոց մեջ, այլ ըսած ենք ասկէ առաջ, որ «Բաբելոն» պիտի ըլլա ազգային գրականության մղիչ ազդակը»<sup>154</sup>:

Ինչպես նշել էինք, «Բաբելոն» մի օր ասորերեն շարունակելու գաղափարը և հույսը հաճախ կրկնվում է նրա էջերում, ինչպես խմբագրականներում, այնպես էլ մյուսների կողմից հեղինակած հոդվածներում և նամակներում: Այդուհանդերձ, այս գաղափարը միմիայն բարի մտադրություն էր և չունէր իրականություն դառնալու որևէ հեռանկար, քանի որ խարբերոցի և Օսմանյան կայսրության այլ քաղաքներից սերող ասորիների միջավայրում դասական ասորերենով կամ Տուր Աբդինի արդի արամեերենով հրատարակվող պարբերականը չէր ունենա ընթերցողների՝ իր գոյությունն արդարացնող անհրաժեշտ քանակ: Ուրմիայի բարբառի հիման վրա զարգացած արդի գրական արևելասսորերենը, որը նեստորականների և քաղղեականների լեզուն էր և գործածում էր նեստորյան տառատեսակը, անհասկանալի և դժվար ընթեռնելի էր հակոբիկների և ասորի կաթոլիկների համար: Դեռ ավելին, ինչպես կտեսնենք ստորև, իր գոյության երկրորդ տարում «Բաբելոն» իր լեզվով դարձավ ավելի «հայկական»:

Արևմտահայերենի կողքին «Բաբելոնում» գտնում ենք հոդվածներ, որոնց լեզուն պետք է համարել արևելահայերեն: Սրանք առավելապես երկրորդ տարվանից խմբագրի պարտականություններն ստանձնած Նաում Բեշարովի հոդվածներն են: Այս անձի մասին մինչև վերջերս գրեթե ոչինչ հայտնի չի եղել՝ չհաշված այն կցկտուր տվյալները, որոնք հնարավոր է քաղել «Բաբելոնից»: Մեզ հաջողվեց հայթայթել 1930 թ. ԱՄՆ-ի մարդահամարի տվյալները, որոնցից հնարավոր եղավ ավելի լավ պատկերացում կազմել այս անձի մասին: Ըստ մարդահամարի հարցաթերթիկի՝ 1930 թ. Նաում Բեշարովը եղել է 60 տարեկան, այսինքն ծնվել է 1870-ին: Իր կինը՝ Կատին (Katie), որը, հավանա-

<sup>154</sup> «Մեր քննադատներուն», Բաբելոն, թիվ 11, դեկտեմբեր 11, 1919:

բար, հայ էր, եղել է 55 տարեկան, այսինքն՝ ծնվել է 1875 թ.: Երկուսն էլ որպես իրենց և իրենց ծնողների ծնվելու երկիր նշել են Թուրքիան (ըստ մարդահամարի անցկացման կանոնների, որպես ծնվելու երկիր պետք է նշվեր այն երկիրը, որի փաստացի տարածքում 1930 թ. գտնվել է տվյալ անձի ծննդավայրը): Ծննդավայր քաղաքը մարդահամարում չէր նշվում, սակայն Բեշարովի հողվածներից մեկից ակնհայտ է, որ դա Խարբերդն էր:



Պատկեր 18. Նաում Բեշարով (լուսանկար «Բաբելոնից»)

«Բաբելոնում» իր լուսանկարի տակ (պատկեր 18) անգլերեն տպված է՝ Naum S.G. Beshrov, editor of “Babylon”: Beshrov գրությունը հավանաբար վրիպակ է, քանի որ հայերեն ամենուր այստեղ պակասող «ա» ձայնավորն առկա է: Մարդահամարի հարցաթերթիկը նույնպես հաստատում է, որ ազգանունի լատինատառ գրությունը եղել է Besharov: Արխիվային այլ տվյալներ մեզ թույլ տվեցին վերծանել նաև S.G. հապավումը՝ Shamas Georgis, որը նշանակում է «Գեորգիս սարկավազ»: Սրանից կարելի է եզրակացնել, որ երիտասարդ տարիներին Բեշարովը հարազատ քաղաքում ընդգրկված է եղել եկեղեցական կյանքի մեջ, կրել է «Գեորգիս» եկեղեցական անունը և հետագայում, ըստ ավանդույթի, պահպանել է սարկավազի կոչումը որպես պատվավոր տիտղոս: Բեշարովի հողվածների հղկված ոճն ու հարուստ հայերենը թույլ են տալիս ենթադրելու, որ նա բարձրագույն կրթություն է ստացել կամ ակտիվորեն զբաղվել ինքնակրթությամբ:

Մարդահամարի տվյալներից տեղեկանում ենք, որ Նաումն ու Կատին ամուսնացել էին, երբ առաջինը 20, իսկ երկրորդը՝ 15 տարեկան էր, այսինքն՝ 1890-ին: Նման վաղ տարիքը թույլ է տալիս ենթադրելու, որ նրանք ամուսնացել էին Խարբերդում, քանի որ վաղ ամուսնությունները տարածված էին արևմտահայ քաղաքներում և գյուղերում: Ըստ մարդահամարի՝ նրանք ունեին որդի՝ Անդրանիկը, որը ծնվել էր 1906 թ.: «Բաբելոնից» տեղեկանում ենք, որ Նաում և Կատի Բեշարովներն ունեցել են նաև

առնվազն մեկ դուստր, որի անունն ու ծննդյան տարեթիվը հայտնի չեն, քանի որ մարդահամարի պահին նա բնակվելիս չի եղել ծնողների հետ:

Լինելով Խարբերդի ծնունդ՝ Նաում Բեշարովն ի ծնե արևմտահայերենի կրող պետք է լիներ: Մինչև մարդահամարի տվյալների հայթայթումն արած մեր եզրակացությունը, թե շրջադարձ դեպի արևելահայերեն կարող էր տեղի ունենալ այն դեպքում, եթե Բեշարովը երկար ժամանակ անցկացրած լիներ Կովկասում (որը երբեմն պատահում էր Խարբերդի ասորիների հետ), հաստատվեց մարդահամարի տվյալներով, ըստ որոնց՝ Անդրանիկը ծնվել է Ռուսաստանում: Բեշարովի ընտանիքում արևելահայերենի գերակայումն ապացուցում է նաև այն, որ մարդահամարի հարցաթերթիկում նրա որդու անունը տառադարձված է Andranik, այսինքն՝ ըստ արևելահայ արտասանության, այլ ոչ արևմտահայ Antranig տարբերակով: Որպես մայրենի և ընտանիքում գործածվող լեզու՝ մարդահամարում գրանցված բոլոր երեք Բեշարովները նշել են հայերենը:

Ռուսաստանում երկար բնակվելու օգտին է վկայում նաև Նաում Բեշարովի ազգանվան «-ով» վերջավորությունը, որից կարելի եզրակացնել, որ նա ընդունել էր ռուսական հպատակություն: Ցարական Ռուսաստանում ասորիներին գրեթե բացառապես գրանցում էին ռուսականացված ազգանուններով, որոնք Հայաստանի ասորիների մեջ պահպանվում են մինչև օրս (Յակուբով, Թամրազով, Խոսրոն, Ալավերդով և այլն): Հետաքրքրական է նաև Բեշարովի «Մանէթ» մականունը կամ գրչանունը, որը «Բաբելոնում» երբեմն փակագծերում նշված է նրա անունից ու ազգանունից հետո: Մականվան պատմության մասին ոչինչ հայտնի չէ, սակայն այն կարող է ունենալ ռուսական ծագում:

Մարդահամարի տվյալներից ապա տեղեկանում ենք, որ Բեշարովները ԱՄՆ-ում հաստատվել են 1906 թ., այսինքն՝ իրենց որդու ծնվելու տարին: Թե ինչով է Նաում Բեշարովը զբաղվել ԱՄՆ-ում մինչև 1919 թ. «Բաբելոնի» խմբագրապետի պաշտոնի ստանձնումը, հայտնի չէ, սակայն անուղղակի վկայություններից երևում է, որ նա զբաղվել է հրապարակախոսությամբ և ունեցել է գրչին հմտորեն տիրապետող անձի համբավ: «Բաբելոնում», ի թիվս բազմաթիվ հոդվածների, լույս է տեսել նաև նրա մեկ բանաստեղծությունը հայատառ թուրքերենով:

Մարդահամարի հարցաթերթիկից տեղեկանում ենք, որ Նաում Բեշարովը զբաղվել է անշարժ գույքով, սակայն 1930 թ. արդեն թոշակառու է եղել և բնակվել Նյու Ջերսի նահանգի Հադսոն փողոցի քաղաքում (ի դեպ, Նյու Յորք քաղաքին հարող Նյու Ջերսի նահանգի այս շրջանում այսօր էլ մեծ թվով հակոբիկ ասորիներ են բնակվում, և այստեղ է գտնվում Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցու Արևելյան ԱՄՆ-ի թեմի կենտրոնը): Որպես Անդրանիկ Բեշարովի զբաղմունք՝ նշված է «մեքենավար» (machinist), իսկ Կատին գրանցված է որպես տանտիրուհի:

Ինչպես նշեցինք, Նաում Բեշարովի լեզուն արևելահայերեն է «առավելապես», քանի որ հրապարակախոսային տաղանդի բացահայտ դրոշմ կրող իր հոդվածներում հաճախ հաղիպում են արևմտահայերենի տարրեր: Հիմնականում դա «մը» անորոշ հոդն է կամ արևմտահայերենին բնորոշ բայական ձևերը: Սրանք կամ իր սկզբնական հայերենի մնացորդային դրսևորումներն են, կամ գիտակցված փորձ՝ ըստ հնարավորին մոտեցնելու լեզուն պարբերականում գերիշխող արևմտահայերենին:

Արևելահայերենին բնորոշ ձևեր կարելի է հանդիպել նաև մի քանի այլ հեղինակների հոդվածներում: Այսպես, հաճախ հանդիպում է «լինել» բայը՝ «ըլլալ»-ի փոխարեն, ընդ որում այն պատահում է տեքստերում, որոնք ամբողջությամբ արևմտահայերեն են:

### **3.2. Ասորական լեզվական նյութը «Բաբելոնում»: Ասորական բառացանկեր**

Իր լեզվով և ոճով «Բաբելոնը» շատ հեռու չէ դարասկզբի հայկական սիրողական պարբերականներից: Սակայն նրա ասորական էությունը, բացի, իհարկե, նրա տիտղոսաթերթերից, տիտղոսագլուխներից և հոդվածների բովանդակությունից, «մատնում» են նրա հայերենի մեջ ներհյուսված 160-ից ավելի հայատառ (հատուկենտ դեպքերում՝ ասորատառ) ասորական լեզվական միավորներ (բառեր, քերականական մասնիկներ և այլն), ավելի հազվադեպ՝ նաև բառակապակցությունները կամ կարճ նախադասությունները:

Այսօր կարելի է միայն գուշակել «Բաբելոնի» հայերենին այս ասորական բառերի ավելացման իրական պատճառը: Ինչպես արդեն նշել էինք, ասորի հետազոտողները, մասնավորապես՝ Էդեն Նաբին, այն կարծիքին էին, թե Խարբերդի ասորիները կարող



էին ասորախոս լինել: Թեև հենց «Բաբելոնում» զետեղված նյութը հերքում է նման եզրակացությունը, այդուհանդերձ, շատ գայթակղիչ էր մնում այն ենթադրությունը, թե Խարբերդի ասորիների հայերեն խոսքում պահպանվել էին ինչ-ինչ ասորական բառեր կամ արտահայտություններ<sup>155</sup>: Պետք է խոստովանենք, որ ձեռնամուխ լինելով «Բաբելոնի» ուսումնասիրմանը՝ մենք նույնպես ակնկալում էինք նրա լեզվի վերլուծության միջոցով ապացուցել Խարբերդի ասորիներին բնորոշ հայ-ասորական «ժարգոնի» (ինչպես վերևում ձևակերպել էին՝ «հայկական իդիշի») գոյությունը: Ըստ մեր սկզբնական վարկածի՝ չունենալով գրական հայերենն օգտագործելուց բացի որևէ այլ ընդունելի տարբերակ, նվազագույնը, ինչ «Բաբելոնի» հրատարակիչները կարող էին անել լեզվական առումով նրա ասորական էությունն ընդգծելու համար, պարբերականի լեզվի մեջ ասորիների կենդանի խոսքին բնորոշ և բոլորին հասկանալի «ասորիզմների» ներհյուսումն էր:

Այդուհանդերձ, «Բաբելոնի» մանրակրկիտ ուսումնասիրումը կասկած գրեթե չի թողնում, որ հայ-ասորական «ժարգոն» Խարբերդում գոյություն չի ունեցել: Ասորիներն, ամենայն հավանականությամբ, գործածել են հայերին ոչ հասկանալի որոշ բառեր և արտահայտություններ, որոնք պայմանավորված են եղել հայկականից տարբեր եկեղեցական ավանդույթով (օրինակ՝ հայերեն «սարկավազ» բառի փոխարեն գործածել են ասորերեն/արաբերեն *շմմաս-ը*), սակայն այս կարգի լեզվական միավորների քանակը բավարար չէր կարող լինել, որպեսզի առիթ ունենայինք խոսելու ասորական յուրահատուկ «ենթալեզվի» մասին: Ակնհայտ է, որ իրենց առօրյայի լեզվով ասորիները հայերից որևէ կերպ զանազանելի չեն եղել: Այս առումով շատ հետաքրքրական է «Եփրատ» քուլեջի վերջին նախագահ Հենրի Ռիգսի արդեն մեջբերված վկայությունն այն մասին, թե Խարբերդի հայերին և ասորիներին իրարից զանազանելն «այդքան հեշտ չէր, ինչպես կարող էր թվալ»<sup>156</sup>:

Այսպիսով, «Բաբելոնի» ասորական տարրերը մուտք են գործել նրա մեջ ոչ թե ասորիների խոսակցական լեզվի բնական ազդեցության հետևանքով, այլ հիմնականում ինչ-ինչ պատճառներով ներմուծվել են արհեստականորեն: Պարբերականի ասո-

<sup>155</sup> Խոսքը տվյալ պարագայում հայերեն վաղ միջնադարից ներթափանցած ասորական փոխառությունների մասին չէ:

<sup>156</sup> Riggs, H., նշվ. աշխ., էջ 119:

րական էությունը լեզվի միջոցով ընդգծելու խնդիրն այս պարագայում ևս մնում է էական գործոն: Ոչ պակաս կարևոր գործոն պետք է դիտել կրթական նկատառումները: Ինչպես նշել էինք, ազգային լեզվի կորստով պայմանավորված բարդույթը շատ հաճախ է դրսևորվում «Բաբելոնի» էջերում, և ակնհայտ է, որ ասորիների ազգային կյանքում թե՛ Խարբերդում, և թե՛ հատկապես ԱՄՆ-ում, այդ բարդույթն ազգային զարգացումը կաշկանդող հանգամանք էր:

Հակառակ բազմիցս արտահայտված բարի մտադրությունների՝ «Բաբելոնը» չէր կարող վերածվել ասորալեզու պարբերականի. միակ այլընտրանքը հայերենին կարող էր լինել անգլերենը, որն իրականացավ Assyrian Progress-ի պարագայում<sup>157</sup>: Այն չէր կարող նաև վերածվել իր շրջանակում ասորերենի վերածննդին նպաստող գործոնի՝ նախ նման գերխնդրի պահանջի բացակայության, ապա նման առաքելությունն իրականացնելու անկարողության պատճառով: Սակայն «Բաբելոնն» իր համեստ կարողությունների սահմաններում կարող էր ստանձնել իր ընթերցողներին ասորերենի տարրական իմացություն մատուցողի պարտականությունը, որը և ակնհայտորեն փորձել է անել:

«Բաբելոնն» ասորերենի տարածման գործիքի վերածելու գաղափար ի սկզբանե, ամենայն հավանականությամբ, գոյություն չի ունեցել, քանի որ առաջին մի քանի համարներում ասորական որևէ լեզվանյութ չկա: Ա-5 համարում առաջին անգամ հանդիպում ենք հայատառ ասորական բառակապակցության՝ *ապունտ պաշմայն*. Սա Տերունական աղոթքի ասորերեն աղավաղված անվանումն է (բառացիորեն՝ «Հայր մեր, որ երկինս ես»), որը դասական ասորերենում ունի *ավուն դ-վա-շմայն* տեսքը: Ինչպես արդեն նշել էինք, Խարբերդի ասորիների ծանոթությունը դասական ասորերենին հիմնականում սահմանափակվում էր մի քանի աղոթքներով և կրոնական բնույթի արտահայտություններով, ինչպես նաև ասորական գրին ծանոթ լինելով: *Ապունտ պաշմայն* բառակապակցությունը պատկանում է հենց այդ շարքին: Նույն համարում առաջին անգամ (չհաշված տիտղոսագլուխներն ու տիտղոսաթերթերը) հանդիպում է ասորական տառերով գրված առաջին բառը՝ ܐܒܘܘܘܢ – «Բաբելոն», որը, վերը նշված հանգամանքնե-

<sup>157</sup> Ինչպես նշել էինք, 1932-38 թթ. Կալիֆոռնիայում Խարբերդից սերող ասորիները անգլերեն հրատարակում էին Assyrian Progress պարբերականը: Սրա խմբագիրներն էին Ֆրանկ Չավուրը և Եզկիել Մալճանը, որոնց անունները երբեմն հանդիպում ենք նաև «Բաբելոնում»:

րի բերումով, պետք է ընթեռնելի լինել ասորական դպրոց հաճախած յուրաքանչյուր անձի համար:

Հաջորդ՝ Ա-6 համարն առաջինն է, որում «Բաբելոնն» արդեն հստակ հանդես է գալիս որպես ասորերենի ուսուցման գործիք: Այս համարը պարունակում է հայկական տառերով գրված մի շարք ասորական որակական և դասական թվականներ, որոնք միահյուսված են հայկական տեքստի մեջ՝ փոխարինելով հայերենի համապատասխան թվականները: Սրանք պարտադիր կերպով ուղեկցվում են հայերեն թարգմանությամբ կամ համապատասխան թվանիշերով, որը նշանակում է, որ ծանոթությունն ասորական թվականների հետ չէր կրում համատարած բնույթ (ըստ ամենայնի, դրանք չէին ուսուցանվում Խարբերդի ասորական դպրոցներում) և թարգմանության կարիք ամեն պարագայում զգացվում էր: Այսպես, օրինակ, Ասորվոց Հնգյակ Ընկերության ստորագրությամբ հրատարակված «Մեր պատասխանը» հոդվածում կարդում ենք. «Անդամներ ցարդ ունինք 15 հատ, սակայն ... վստահ ենք թե ի մոտո *հադ* (1) *ըթրէն* (2) ամիսեն ... շատ դյուրավ բարձրացունել թիվը *ըթլօթին*-ի (30)»: Բացի այս թվականներից՝ նույն հոդվածում հանդիպում են նաև հետևյալ թվականները (վերարտադրում ենք ճիշտ այնպես, ինչպես «Բաբելոնում» է)՝ *ըթրայօնօ* (-Բ.), *խապմօյօ* (առաջին), *ըթրայօնօ* (երկրորդ), *ըթլիթօյօ* (երրորդ), *րապիօյօ* (չորրորդ), *համիշօյօ* (հինգերորդ), *ըթլիթօյօ* (3րդ), *մաթէն* (200), *էսրօ* (10), *համշօ* (5):


«Մեր պատասխանը» հոդվածը շարունակաբար հրապարակվում էր 5 համարներում և «Բաբելոնի» ամենահետաքրքիր և կարևոր հոդվածներից է: Այն գրվել է ի պատասխան ընթերցողներից մեկի հարցադրումների և պարունակում է պարզաբանումներ Ասորվոց Հնգյակ Ընկերության պատմության և ծրագրային նպատակների մասին: Կարելի է ենթադրել, որ «Բաբելոնի» մեջ ասորական լեզվանյութ ներառելու գաղափարը ծնունդ է առել Ընկերության շրջանակում այս հոդվածի քննարկման և շարադրման ընթացքում, քանի որ, ինչպես նշեցինք, պարբերականի առաջին համարներից չի հետևում, որ այն ի սկզբանե իսկ դիտվել է որպես ասորերենի պրոպագանդման միջոց:

Ինչպես նշել էինք, Ա-9 համարի տիտղոսագլխի վրա առաջին անգամ գործածվում է ամսվա ասորական անունը՝ *թէշրին* ի *ըիրոյ*, որին փակագծերում հետևում է հայերեն թարգմանությունը՝ (ՆՈՅ.). մինչ այդ գործածվում էին միայն ամիսների հայ-

կական անունները: Հետագա մյուս համարների տիտղոսագլուխների և տիտղոսաէջերի վրա գործածվում են միայն ասորական տարբերակները, թեև հայերեն թարգմանությունը պահպանվում է ևս 4 համարներում:

Այսպիսով, ասորական լեզվական նյութի մատուցումը «Բաբելոնում» սկզբնապես կրում էր որոշակի տարերային բնույթ, ոչ մի կերպ չէր հայտարարվում և չէր առանձնացվում առանձին միավորների տեսքով: Հետագա մի քանի համարներում ասորական լեզվանյութը (առավելապես թվականներ) հիմնականում մատուցվում են նկարագրված եղանակով, առանց որևէ սիստեմավորման: Դժվար է գուշակել, թե այս նորամուծությունն ինչպիսի արձագանքի արժանացավ ընթերցողների մոտ, քանի որ ասորական լեզվանյութի ներմուծումը սկզբնապես ոչ մի կերպ չէր քննարկվում: Հատուկենտ անդրադարձներից մեջբերենք մշտական նամակագիրներից մեկի խոսքերը. «Ադանայեն, Մոսուլեն, Դիարբեքիրեն, Ուրֆայեն, Շամեն [Դամասկոս] և բոլոր տեղերեն նամակները «ասորեն թերթ, թերթ» կըսեն կը մեռնին ու շատերը երբ հոս կուգան և «Բաբելոնի» մեջ ասորեն բառ մը կը հանդիպին կամ 𐤁𐤅 [Բաբելոն] բառը կը տեսնին կարծես երկրպագություն է կընեն»<sup>158</sup>:

Ասորական լեզվանյութի մատուցումն ինչ-որ ձևով կանոնակարգելու առաջին փորձն արվում է Ա-13 համարում: Այն պարունակում է «Բաբելոնի» էջերում հայտնված 5 բառացանկերից առաջինը (պատկեր 19), որում ներկայացվում են 1-ից 10-ը քանակա-



Պատկեր 19. Ասորերեն բառացանկ 1

<sup>158</sup> Նուրի Խորի, «Ձահլենն լուրեր», Բաբելոն, թիվ 11, դեկտեմբեր 11, 1919:

կան թվականները: Բառացանկն ուղեկցված է հետևյալ հայտարարությամբ. «Ուշադրություն. «Բաբելոնի» սույն թվով կսկսինք հրատարակել ասորեն բառեր, որոնց առջև այս անգամ թեև նշանակությունները կգրենք, բայց հետ այսու նույն բառերի նշանակությունը պիտի չգրվի քնավ գործածությանց մեջ: Ուստի մեր ազնիվ ընթերցողներեն կխնդրենք, որ բերանացի սովրին սույն ասորեն բառերը, եթե կուզեն ասկե վերջ ամեն հողվածի մեջ գործածված ասորեն բառերուն գիտակ ըլլալ և նախադասությունները հասկնալ»: Սրանով, փաստորեն, առաջին անգամ հայտարարվում էր հստակ խմբագրական քաղաքականության մասին՝ շարադրանքի մեջ հայերեն բառերն աստիճանաբար փոխարինել ասորականներով: Այդուհանդերձ, սույն հայտարարությունը իրականությանը չէր համապատասխանում թե՛ հետադարձաբար, քանի որ 1-ից 10-ը և այլ

Գործածուելի Ասորեն Բառեր

Իսաբ ըսար = 11	Ըջթս ըսար = 16	Աորվեցեթ և թիպիև պիթ թուր և Բաբելոն Ենի թիվ Գրուածվեթ ԹԵ պիթի հասթեալ:
Թթի ըսար = 12	Չսարս " = 17	
Թթի ըսար = 13	Ըթթս " = 18	
արսո ըսար = 14	Ըթթս " = 19	
Իսաթս " = 15	Թթիթ " = 20	

Պատկեր 20. Ասորեն բառացանկ 2

թվականներն իրենց թարգմանություններով արդեն մի քանի համար է, ինչ գործածվում էին «Բաբելոնում», թե՛ հաջորդաբար, քանի որ հայտարարված սկզբունքին հակառակ՝ ասորական բառերը հետագա համարներում հաճախակի շարունակում էին ուղեկցվել թարգմանությամբ:

Հաջորդ՝ Ա-14 համարում լույս է տեսնում երկրորդ բառացանկը (պատկեր 20), որը կրում է «Գործածվելի ասորեն բառեր» վերնագիրը և պարունակում է 11-ից 20-ը թվականները: Այս մեկը ևս ուղեկցված է հակիրճ խմբագրական ուղերձով, որն ասում է. «Սորվեցեթ և դյուրին պիտ թվի և Բաբելոնի մեջ գրվածքները պիտի հասկնաք»: Սրանով, փաստորեն, վերահաստատվում է «Բաբելոնի» մեջ հետևողականորեն ասորական լեզվանյութ ներմուծելու խմբագրական հստակ քաղաքականությունը:

- Ասորբէն դաս -

Հարբէն ու հասք 21	Արային	40	Շէթեր	60
» վարթիցի 22	» ու հասք	41	Վրասթեր	70
» Շիօթի 23	» վարթի	42	Շիօթի	80
» հայն	» սայն	---	Շիօթի	90
Շիօթի 30	հասնի	50	Շիօթի	100
» ու հասք 31	» ու հասք	51	Շիօթի Բո	200
» վարթիցի 32	» Վարթի	52	Շիօթի	300
» հասն	» հայն	---	հայն	---

Պատկեր 21. Ասորբէն բառացանկ 3

Ա-15 համարում լույս է տեսնում երրորդ բառացանկը (պատկեր 21), որը ներկայացնում է 20-ից բարձր թվականների՝ ներառյալ հարյուրավորների կազմության սկզբունքը: Բառացանկը պարունակում է մեկ սխալ՝ 30 թվականի համար տրված է ըթլօթօ բառը, որը նշանակում է 3 (Ա-6 համարի «Մեր պատասխանը» հոդվածում գործածված է ճիշտ՝ ըթլօթին ձևը): Հատկանշական է, որ այս բառացանկն արդեն հստակորեն վերնագրված է «Ասորեն դաս», այսինքն՝ «Բարբելոնի» ասորերենի դասավանդման առաքելությունը ստանում է հստակ դրսևորում և արտահայտություն:

Հաջորդ՝ Ա-16 համարում զետեղված բառացանկը (պատկեր 22) նույնպես կրում է «Ասորեն դաս» վերտառությունը: Այն պարունակում է շաբաթվա օրերի անունները, ինչպես նաև «կես», «օր», «գիշեր», «իրիկուն» և «առավոտ» բառերը: Հետաքրքրական է,

~ ~ ~ Ասորբէն դաս ~ ~ ~

Գեկօ	= կես	Եսպօ	= Օր
Խոր ըպ շապօ	= կիրակի	Պաշօ	= Գիշեր
Շիօթի	" = երկուշաբթի	Վիշօ	= Դրիկուն
Շիօթի	" = երեքշաբթի	Վաթօ	= Առավոտ
Վարթի	" = Չորեքշաբթի		
Վաթի	" = Կիրակի		
Վրասթի	" = Դրիկուն		
Վարթի	" = Չաբաթ		

~ ~ ~ ~ ~

Պատկեր 22. Ասորբէն բառացանկ 4

որ «գիշեր» բառի համար տրված է *րամշօ* բառը, որը նշանակում է «երեկո», մինչ «իրիկուն» բառի համար՝ *լիլեօ*, որը նշանակում է «գիշեր»: Այս կարգի թերացումները հուշում են, որ իրենց հայրենակիցներին դասական ասորերենին ծանոթացնելու պատասխանատու առաքելությունն ստանձած երախտավորներն ունեին այդ լեզվի բավականին մակերեսային իմացություն:

Վերջին՝ հինգերորդ բառացանկը (պատկեր 23) զետեղված է Ա-18 համարում և վերնագրված է «Ասորեն սովրե պիտի կարոտիս»: Այն պարունակում է 18 բառ («կշեռք», «արդարություն», «հավասարություն», «սիրելի», «հարգելի», «ընկեր», «ընկերդ», «գալլ», «հարուստ», «աղքատ», «ծեր», «երիտասարդ», «թագավոր», «թագուհի», «պարոն», «ծառա», «լավ», «գեշ») և մեկ՝ «Ո՛ւր կերթաք» արտահայտությունը, որը սխալ

<i>Սորբե</i>	<i>Ասրե պիտի կարոտիս</i>
<i>Անթօ օջիմաւ</i>	= <i>Պար կերթաք</i>
<i>Արեթփուլթօ</i>	= <i>կշեռք</i>
<i>Քիկուլթօ</i>	= <i>արդարութիւն</i>
<i>Չարտուլթօ</i>	= <i>հավասարութիւն</i>
<i>Իւսարթու</i>	= <i>սիրելի</i>
<i>Յեւարթու</i>	= <i>յարգելի</i>
<i>Իւսարթու</i>	= <i>ընկեր</i>
<i>Կարթու</i>	= <i>ընկերդ</i>
<i>Իւսարթու</i>	= <i>թագ</i>
<i>Իւսարթու</i>	= <i>հարուստ</i>
<i>Իւսարթու</i>	= <i>աղքատ</i>
<i>Ասրե</i>	= <i>ծեր</i>
<i>Ասրե</i>	= <i>երիտասարդ</i>
<i>Ասրե</i>	= <i>թագուհի</i>
<i>Ասրե</i>	= <i>թագ</i>
<i>Ասրե</i>	= <i>պարոն</i>
<i>Ասրե</i>	= <i>ծառա</i>
<i>Ասրե</i>	= <i>լավ</i>
<i>Ասրե</i>	= <i>գեշ</i>

Պատկեր 23. Ասորերեն բառացանկ 5

է թարգմանված:

Բառացանկերի հրապարակմանը զուգահեռ՝ ասորական լեզվանյութի ընդգրկումը շարունակվում էր նաև տարերային եղանակով՝ հողվածների մեջ, ընդ որում այդ եղանակով գործածված ասորական միավորներն իրենց քանակով գերազանցում են բառացանկերի մեջ մատուցված նյութը: Այսպես, օրինակ, Ա-16 համարում, որում զետեղված է 4-րդ բառացանկը, հողվածների մեջ գտնում ենք *այքանօ* («ինչպե՛ս») և *րիշօ* («նախագահ») բառերը:

Դրա հետ մեկտեղ՝ «Բաբելոնում» հանդիպում են առանձին բառեր, որոնց հայերեն թարգմանությունը բացակայում է: Դրանց շարքին է պատկանում հետաքրքրական *քուլլը* բառը, որը նշանակում է «բոլորը», «ամենը» կամ «ամբողջապես»: Այս բառն առկա է ինչպես դասական ասորերենում, այնպես էլ արաբերենում և, հավանաբար, բնորոշ է եղել խարբերոցիների բարբառին: Համենայն դեպս, այն «Բաբելոնում» գործածված է չորս անգամ, որից երեքը՝ տեղական իրադարձությունները լուսաբանող հաղորդագրություններում, որոնցում սովորաբար գտնում ենք ամենաէական շեղումները գրական հայերենից և Ասորվոց Հնգյակ Ընկերության անունից հրապարակված մեկ կարճ հայտարարության մեջ:

Որպես ասորերենի տարածման միջոց «Բաբելոնը» ծառայեց միայն իր գոյության առաջին տարվա ընթացքում, երբ նրա խմբագիրը ենթադրաբար Յուհաննա Չաթալբաշն էր: Ամերիկյան արխիվներում մեր կատարած որոնումների շնորհիվ հնարավոր դարձավ ճշտել նրա կայնքի տարիները՝ 1894-1977: Ինչպես նշել էինք, երկրորդ տարվանից խմբագրի պարտականությունները ստանձնեց Նաում Բեշարովը. այդ մասին պաշտոնական ծանուցում հրապարակվեց «Բաբելոնում»: Բեշարովի օրոք պարբերականը որոշ փոփոխությունների ենթարկվեց: Մեզ հետաքրքրող՝ լեզվի բնագավառում դա նախ և առաջ արտասահայտվեց նրանով, որ «Բաբելոնի» լեզվում կտրուկ նվազեց ասորական միավորների քանակը, ընդհատվեց բառացանկերի հրապարակումը և պարբերականը, փաստորեն, կորցրեց ասորերենի ջատագովի իր պատկերը, թեև որևէ հայտարարություն կամ մեկնաբանություն դրա վերաբերյալ չհետևեց:

Կարելի է միայն գուշակել, թե ինչու Նաում Բեշարովի օրոք տեղի ունեցան նման փոփոխություններ: Բեշարովը, որն աչքի է ընկնում իր հողվածների փայլուն արևելա-



հայերենով (ինչպես նշեցինք՝ արևմտահայերենի որոշ ներմուծումով), չէր թաքցնում, որ սերտորեն կապված է եղել հայերի հետ: Դեռևս մինչև խմբագրի պաշտոնը ստանձնելը նա իր հոդվածներից մեկում գրել է. «... Ես լոկ երախտագիտություն է մղված ինքնահոժար կամքով նվիրված եմ եղած հայ ազգին, ես մուտք եմ ունեցած գրեթե առանց բացառության հայ ամեն մի ընկերությանց մեջ, ատենապետել, ատենախոսել և ճառախոսել եմ, այս թուպեին էլ իմ աղջիկս Հայ Հեղ. Դաշնակցության Կարմիր Խաչի ատենադպիրն է, Տիկինս Հայ Տիկնանց Կրթասիրաց ընկերության անդամ է և ես Խրիմեան Գրադարանի անդամն եմ...»<sup>159</sup>: «Հեղափոխական հոգու» և «հեղափոխության» հաճախակի փառաբանումները Բեշարովի հոդվածներում, որն այդքան էլ բնորոշ չէր «Բաբելոնի» ընդհանուր ուղղվածությանը, առիթ են տալիս ենթադրելու, որ նա գտնվել է ՀՅԴ գաղափարախոսության ազդեցության տակ: Լեզվի հարցերում սա, ինչպես համոզվեցինք, դրսևորվել է մաքրամոլության տեսքով: Թեև ասորական լեզվանյութն ամբողջությամբ չվերացավ «Բաբելոնի» էջերից, և հենց Նաում Բեշարովի հոդվածներից մեկում հանդիպում ենք ասորերեն մեջբերումներ Ավետարանից, այն էլ՝ ասորական գրով, այդուհանդերձ կրկնենք, որ Բեշարովի օրոք լեզվական առումով պարբերականը դարձավ ավելի «հայկական»:

Լեզվի հարցերում խմբագրական քաղաքականության այս ակնհայտ փոփոխությունը կարող էր, անշուշտ, ունենալ և օբյեկտիվ նախադրյալներ, ինչպես, օրինակ, ընթերցողների կողմից հետաքրքրվածության և համապատասխան պահանջի բացակայությունը: Ակնհայտ է, որ եթե խմբագրությունը ստանար ասորերենի ներմուծման վերաբերյալ ընթերցողների խանդավառ նամակներ, դրանք կիրապարակվեին, սակայն «Բաբելոնի» էջերում նման նամակներ չենք գտնում: Ավելին, ինչպես արդեն նշել էինք, խմբագրական հոդվածներից մեկից կարելի է եզրակացնել, որ «Բաբելոնի» լեզուն դժգոհության առիթ է տվել, հատկապես լավ հայկական կրթություն ստացած անձանց կողմից, որոնք սովոր էին հայկական պարբերականների մաքուր լեզվին, և որոնց համար անսովոր պետք է լիներ ասորական բառերի ներհյուսումը գրական հայերենի մեջ, նույնիսկ եթե դա արվում էր հայրենասիրական ազնիվ նկատառումներով:

---

<sup>159</sup> Բեշարով, Ն., *Բաց նամակ Վեր. Գավմէ Ապլահապի, «Բաբելոն»,* թիվ 21, ապրիլ 29, 1920:

### **3.3. Ասորական լեզվական նյութն ըստ խոսքի մասերի.**

#### **3.3.1. Գոյականներ**

«Բաբելոնում» արձանագրված 160 ասորական լեզվական միավորներից 42-ը, այսինքն՝ մոտ 30%-ը, գոյականներ են (չհաշված շաբաթվա օրերի և ամիսների անվանումները): Դրանք բոլորը «ներմուծված» են դասական ասորերենից և չեն ցուցաբերում անմիջական առնչություն արդի արամեական բարբառների համապատասխան ձևերի հետ: Արտասանությունը, ինչքան որ թույլ է տալիս հայկական գիրը, վերարտադրում է արևմտյան ասորիների մոտ ընդունված դասական ասորերենի ընթերցման եղանակը, որում, մասնավորապես, դասական ասորերենի երկար [a] ձայնավորը փոխարինվում է [o] ձայնավորով՝ *alaha>ալօհօ, zumara>զումօրօ*, և այլն:

Գոյականների ընդհանուր թվից 15-ը ներկայացված են «Բաբելոնում» զետեղված 5 բառացանկերից երկուսում, և դրանց մեծ մասը չի հանդիպում այդ ցանկերից դուրս, այսինքն պարբերականում գործածվում է միայն մեկ անգամ: Մյուս 27 գոյականները գործածված են հոդվածների մեջ, և դրանց մեծ մասը ուղեկցվում է փակագծերի մեջ ներփակված հայերեն թարգմանությամբ:

Ձևաբանական առումով գոյականներից մի քանիսը դասական ասորերենում պատկանում են իգական սեռին, սակայն հայերենում սեռի քերականական կարգի բացակայությունը չեզոքացնում է բառերի սեռային տարբերությունները: Թվի կարգի՝ ասորերենին բնորոշ ցուցանիշները նույնպես որևէ կերպ չեն դրսևորված: Հետաքրքրական է, որ *մօրանուրօ* «լուր» բառը, որը դասական ասորերենում եզակի թվում է, «Բաբելոնում» սովորաբար հանդես է գալիս որպես հոգնակի թվի գոյական, հայերեն թարգմանվում է «լուրեր» բառով և երկու անգամ նույնիսկ ուղեկցվում է դասական ասորերենի ձևաբանությանը բնորոշ եղանակով հոգնակի թվում դրված ասորական ածականով (մանրամասն հաջորդ գլխում):

#### **3.3.2. Ածականներ**

«Բաբելոնում» արձանագրված է 14 ածական անուն, այսինքն՝ ասորական բառացանկի 10.7%-ը: Ինչպես և գոյականները, դրանք ներմուծված են դասական ասորերենից և

հիմնականում պահպանում են դասական արտասանությունը: Սուրբ Ծնունդի առիթով արտասանվող «Օրհնյալ է մեր Տիրոջ ծնունդը և օրհնյալ Նոր տարի» արտահայտությունում, որը հայատառ ասորերեն ամենաերկար արտահայտությունն է պարբերականում, «օրհնյալ» բառը հանդես է գալիս ինչպես արական սեռով՝ *ըպրիիս*, այնպես էլ իգական՝ *այրիիթո*. առաջին դեպքում այն սեռով համաձայնեցված է *մավլուրէ* («նրա ծնունդը»), իսկ երկրորդ՝ *շիթո* («տարի») բառի հետ:

Նույն արտահայտությունում տեսնում ենք իգական սեռի *խաթթո* («նոր») բառը, որը համաձայնեցված է նույն *շիթո* («տարի») բառի հետ:

Քանի որ այս պարագայում գործ ունենք դասական ասորերենից ժառանգված և հարյուրամյակներ գործածվող ավանդական կրոնա-ծիսական արտահայտության հետ, ապա ածականների՝ ըստ սեռի զանազանումը միանգամայն բացատրելի է և այս պարագայում առանձնահատուկ ուշադրության արժանի չէ:

Ավելի հետաքրքրական է թվում հայատառ ածականի՝ հոգնակի թվում գործածված լինելու միակ նմուշը, որին նախնական անդրադարձ եղավ նախորդ գլխում: Ինչպես նշեցինք, *մօրանուրօ* «լուր» բառը, որը դասական ասորերենում եզակի թվում է, «Բաբելոնում» սովորաբար հանդես է գալիս որպես հոգնակի թվի գոյական, հայերեն թարգմանվում է «լուրեր» բառով: Դրան կապված «փոքր» ածականը հանդես է գալիս հոգնակի թվով, որը կազմված է ըստ դասական ասորերենի ձևաբանության նորմերի՝ *զըուրէ* (եզակիում՝ *զըուրօ*): Հետևաբար՝ *մօրանուրօ զըուրէ*՝ «կարճ լուրեր»: Ակնհայտ է, որ այս արտահայտություն կազմողն ուներ դասական ասորերենի քերականության ավելի խոր իմացություն, քան կարելի էր ակնկալել Խարբերդի հայախոս ասորիների հիմնական զանգվածից:

### 3.3.3. Թվականներ

Թվականները «Բաբելոնում» ասորերենի առավել հաճախ գործածվող խոսքի մասն են: Ակնհայտ է, որ պարբերականի հրատարակիչներն ասորերենի հետ ընթերցողներին ծանոթացնելու գործում առանձնակի հույսեր էին կապում հենց թվականների հետ: Դա է վկայում այն, որ «Բաբելոնում» հրատարակված առաջին երեք բառացանկերը հենց թվականներ են պարունակում (մանրամասն ստորև):

Ասորական թվականներն առաջին անգամ գործածվում են Ա-6-16 հոդվածում, որը պարունակում է «Բաբելոնի» պատասխանները Ասորվոց Հնգյակ Ընկերության մասին ոմն Մ. Խոյունի հարցերին: «Բաբելոնում» գործածվում են ինչպես քանակական, այնպես էլ դասական թվականները: Այն հանգամանքը, որ ասորական թվականներն առաջին մի քանի համարներում միշտ ուղեկցվում են կամ հայերեն թարգմանությամբ (ըթիթթթթ (երրորդ), ըթրայթթթ (Բ.)), կամ թվային համարժեքներով (ըթիթթթթ (Յրդ), ըթթթթթ (30)), ինչպես նաև առանձին բառացանկերով դրանց ներկայացվելը նշանակում է, որ թվականները գործածելի չեն եղել Խարբրեդի ասորիների խոսակցական հայերենում և ներմուծվել են արհեստականորեն՝ դրանց հետ ընթերցողներին ծանոթացնելու և «Բաբելոնի» ասորական էությունը ընդգծելու նպատակով: Մինևույն թվականի գրության տարբեր ձևերը հաստատում են այս ենթադրությունը և հուշում, որ յուրաքանչյուր հոդվածագիր յուրովի էր փորձում արտահայտել հայկական գրով դասական ասորերենի թվականները: Թվականների գրության կամ դրանց թարգմանության մեջ հանդիպող կոպիտ սխալները նշանակում են, որ շատ հոդվածագիրների համար այդ թվականներն ամբողջապես խորթ էին, իսկ հոդվածը «Բաբելոնի» համար արտագրող անձը կամ խմբագիրը նույնպես չուներ այդ թվականների գործածության կայուն սովորություն՝ այդ սխալներն ինքնաբերաբար ուղղելու համար: Հետաքրքրական է, որ առնվազն մեկ դեպքում ասորական թվականը ներմուծվել է հայկական թերթից վերարտադրված հոդվածի մեջ, ուր այն, հասկանալի է, չէր կարող գործածված լինել, և սա մեկ անգամ ևս վկայում է համապատասխան հստակ խմբագրական քաղաքականության մասին:

Ա-13 համարից փորձ է արվում կանոնակարգել և միասնականացնել ասորական թվականների և խոսքի այլ մասերի գործածությունը, և ներկայացվում է 1-ից 10-ը թվականների ցանկը: Ա-14 համարում՝ «Գործածվելի ասորեն բառեր» վերնագրի տակ բառացանկով ներկայացված են 11-ից 20 թվականները, իսկ Ա-15 համարում՝ «Ասորեն դաս» վերնագրի տակ՝ տասնյակներն ու հարյուրները: Չնայած Ա-13 համարի մեջ արված նախազգուշացման՝ հաջորդ համարներում ասորական թվականների կողքին փակագծերում շարունակում են ընդգրկվել դրանց հայերեն թարգմանությունները կամ թվային արժեքները, սակայն ավելի հազվադեպ, քան մինչև Ա-13 համարը: Պահպան-

վում է նաև ուղղագրական խառնաշփոթը՝ միևնույն թվականի գրության զուգահեռ ձևերով (*հատ-խատ, ըթրէն-ըթրէյն, ըսրին-էսրին* և այլն) կամ էլ գործածվում են թվականների այնպիսի ձևեր, որոնք միանգամայն տարբերվում են ցուցակների մեջ հանձնարարված ձևերից, ինչպես, օրինակ, *ըմմա* (100)՝ Ա-15 համարի ցանկի մեջ ներկայացված *մոո* ձևի դիմաց:

Դասական ասորերենում թվականները բաժանվում են երկու սեռի՝ արական և իգական, ընդ որում 3 թվականից սկսած՝ արական սեռի գոյականների հետ գործածվում են իգական սեռի թվականները և հակառակը: Քանի որ հայերենում թվականի սեռի զանազանման սկզբունքը պահպանել հնարավոր չէ, ապա գործածվում են միայն արական սեռի գոյականները: Դասական ասորերենի պարագայում թվականի ու գոյականի սեռերի ճիշտ գործածումը պահանջում է լեզվի լավ իմացություն, ուստի վստահորեն կարելի է ենթադրել, որ «Բաբելոնի» հեղինակներն ու ընթերցողները կարող է նույնիսկ պատկերացում չունենային ասորական թվականների՝ ըստ սեռի զանազանման սկզբունքի մասին:

Ասորական թվականներն ազատորեն ներհյուսված են հայկական տեքստի մեջ և հաճախ կապակցված են հայկական թվականների կամ չափ ու քանակ նշող այլ բառերի հետ, օրինակ՝ «հարիրէն թէշօ», «ըթլօթօ ու կես» (Ա-12-9), «ըթլօթօ հազար», «եօթանասուն թէշօ» (Ա-13-2) և այլն:

«Բաբելոնում» գործածված ասորական թվականները  
(նշված են նախ թվականների ցուցակներում առկա ձևերը, ապա դրանցից տարբերվող ձևերը)

	<b>Քանակական</b>	<b>Դասական</b>
1	<i>հատ (խատ)</i>	<i>խատմօյօ</i> <sup>160</sup>
2	<i>ըթրէն (ըթրէյն<sup>161</sup>)</i>	<i>ըթրայօնօ</i>
3	<i>ըթլօթօ</i>	<i>ըթլիթօյօ</i>
4	<i>արըպօ</i>	<i>րապիօյօ</i>
5	<i>համշօ</i>	<i>համ(ի)շօյօ</i>

<sup>160</sup> Գործածվում է նաև *-եօ* վերջավորությունը: Վերջավորության ընտրությունը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր հեղինակի անձնական նախասիրությամբ:

<sup>161</sup> Ա-12-1:

	<b>Քանակական</b>	<b>Դասական</b>
6	<i>ըշթօ</i>	<i>ըշթիթօյօ</i>
7	<i>շապօ</i>	<i>շապիթօյօ</i>
8	<i>ըթմօնեօ</i>	<i>ըթմինիթօյօ</i>
9	<i>թէշօ</i>	
10	<i>էսրօ, ըսրօ</i>	<i>էսիրթօյօ</i>
11	<i>հապ ըսար</i>	
12	<i>թրի ըսար</i>	
13	<i>թըլթասար</i>	
14	<i>արպօ ըսար</i>	
15	<i>համշօ ըսար</i> <sup>162</sup>	
16	<i>ըշթօ ըսար</i>	
17	<i>շապօ ըսար</i>	
18	<i>ըթմօ ըսար, ըթմօնա- սար</i> <sup>163</sup>	
19	<i>ըթշօ ըսար</i>	
20	<i>ըսրին, էսրին</i> <sup>164</sup>	
21	<i>էսրին ու հապ</i> <sup>165</sup>	
22	<i>-, - վաթրէյն</i>	
23	<i>-, - ըթլօթօ, ըսլի (?) ըթ- լաթ</i>	
26	<i>էսրէն ըշթօ</i> <sup>166</sup>	
28	<i>էսրին ըթմօնեօ</i> <sup>167</sup>	
30	<i>ըթլօթին</i>	
31	<i>-, - ու հապ</i>	
32	<i>-, - վաթրէյն</i>	
40	<i>արպին, արըպին</i> <sup>168</sup> , <i>արպընըն</i>	
41	<i>-, - ու հապ</i>	
42	<i>-, - վաթրէյն</i>	
50	<i>համշին, համշի</i> <sup>169</sup>	

<sup>162</sup> Ա-12-1-ում հետևում է «հազար» թարգմանությունը [մեր օրինակի վրա առկա է «սխալ» նշումը]; Ա-15-8:

<sup>163</sup> Ա-15-8:

<sup>164</sup> Ա-16-2:

<sup>165</sup> Ա-14-10-ի ցուցակում 20-ը ներկայացված է որպես *ըսրին*, իսկ Ա-15-11-ի «Ասորեն Դաս»-ում՝ որպես *էսրին*:

<sup>166</sup> Ա-16-14:

<sup>167</sup> Ա-15-8:

<sup>168</sup> Ա-16-6:

	<b>Քանակական</b>	<b>Դասական</b>
51	-,,- ու հատ	
52	-,,- վաթրէյն	
60	ըշթին	
70	շապին	
80	ըթմօնին, ըթմանի <sup>170</sup>	
90	թէշին	
100	մո, ըմմա	
200	ըթրէյն մո, մաթէն	
300	ըթլօթ [մո]	
330	ըթլօթ մո ըթլօթին <sup>171</sup>	
500	համշ մո <sup>172</sup>	
600	ըշթօ ըմմա, ըշթօ մո <sup>173</sup>	
1000	էլփէ	
1500	էլփէ համշօ ըմմա <sup>174</sup>	
20000	էսրէն էլփէ <sup>175</sup>	

### 3.3.4. Բայեր

Ասորական բայերը «Բաբելոնում» հանդիպում են շատ հազվադեպ: Սա միանգամայն հասկանալի է. ձևաբանության առումով լինելով խոսքի ամենաբարդ և փոփոխական մասը՝ բայը զգալի դժվարություններ է ներկայացնում օտար խոսքի մեջ ներհյուսվելու և քիչ թե շատ բնական ձևով գործածվելու համար՝ ի տարբերություն գոյականների, ածականների և թվականների, որոնք, ինչպես երևում է «Բաբելոնում», հեշտությամբ փոխարինում են իրենց հայերեն համարժեքները: Արձանագրված են հետևյալ բայերը.

1. *էթբանաշ* – կոճ բայարմատից կազմված ‘*etpa<sup>ccal</sup>* բայակառույցի ձև է: Դասական ասորերենում ունի ‘*etkannaš* տեսքը՝ կրկնակ երկրորդ արմատականով<sup>176</sup>: Հիմ-

<sup>169</sup> Ա-14-2:

<sup>170</sup> Ա-14-14:

<sup>171</sup> Ա-15-8:

<sup>172</sup> Ա-16-14:

<sup>173</sup> Ա-15-8:

<sup>174</sup> Ա-14-14:

<sup>175</sup> Ա-16-14:

նական իմաստներն են՝ «հավաքվել», «ժողովվել»<sup>177</sup>: «Բաբելոնում» գործածվում է *Մեն ըլլէլ – Մեն Ըլքօ* բաժնից հետո՝ բաժինը կազմած անձի անվան հետ միասին՝ «կազմեց այսինչը» իմաստով, այսինքն՝ տվյալ բայակառույցի իմաստային երանգավորման որոշ խախտումով: Առաջին անգամ գործածվել է Ա-17 համարի տիտղոսաթերթի վրա՝ *էթքանաշ Ն.Պ.Գօյուն* ձևով, ապա պարբերաբար երևացել է տիտղոսաթերթի վրա և պարբերականի ներսում: Մինչև այդ «Բաբելոնում» նույն բաժնի տակ գործածվում էր հայատառ թուրքերեն *թօփլափը* բառը: Դժվար է հասկանալ, թե ինչու են հեղինակները հենց այս արտահայտության մեջ խուսափել համապատասխան հայկական բառից՝ այն նախ փոխարինելով թուրքականով, ապա՝ ասորական (երկրորդ դեպքում, հավանական է, այն պատճառով, որ արտահայտությունը երևում էր տիտղոսաթերթի վրա և հատուկ ուշադրություն էր գրավում):

«Բաբելոնում» արձանագրված է նույն բայաձևի գործածման մեկ այլ դեպք, որը չափազանց ուշագրավ է այն առումով, որ հայկական տեքստի մեջ ասորական բայի ներհյուսման ամենաբարդ և միևնույն ժամանակ ամենաճիշտ օրինակն է: Ա-18 համարի Եուհէննէ Պօյաճի «Ճամփու Հուշերէս» հոդվածում կարդում ենք. «Որոշված *եավմօն*, նույն ժամուն *քուլլը* ժողովուրդը *էթքանաշ*», այսինքն՝ «Որոշված օրը, նույն ժամին ամբողջ ժողովուրդը *հավաքվեց*»: Տվյալ նախադասությունում *էթքանաշ* բայը ոչ միայն գործածված է իր ճիշտ իմաստային ձևով, այլև ճիշտ ժամանակով, դեմքով և թվով: Քանի որ սա պարբերականում ասորական բայի նման հաջող գործածության միակ դեպքն է, ապա կարելի է ենթադրել, որ Եուհէննէ Պօյաճը, որի ստորագրությամբ «Բաբելոնում» միայն այս մեկ հոդվածն ենք տեսնում, ուներ դասական ասորերենի բավականին լավ իմացություն:

<sup>176</sup> Պետք է նկատի ունենալ, որ արևմտյան ասորիների մոտ դասական ասորերենի բաղաձայնների կրկնությունը չէր պահպանվում, ուստի հայատառ *էթքանաշ* ձևի մեկ «ն»-ով հանդես գալը կարող ենք դասական ասորերենի ձևի ճիշտ վերարտադրություն համարել:

<sup>177</sup> J. Payne Smith-ի A Compendious Syrac Dictionary-ում (Oxford, 1903) ‘eṭkannaš բայաձևի դիմաց տեսնում ենք անգլերեն հետևյալ հիմնական համարժեքները՝ “to be gathered”, “to come together”, “to be collected, compiled” (էջ 219): M. Sokoloff-ի A Syriac Lexicon-ում՝ “to be assembled”, “to be collected” (էջ 637):



2. *քանեշ* – նույն կոճ բայարմատից կազմված *p<sup>cc</sup>al* բայակառույցի ձևն է: Գործածված է մեկ անգամ՝ Ա-18 համարի *Մեն Ըլլէլ – Մեն Ըլքօ* բաժնի տակ՝ «*Քանեշ Ն.Պ. Գօյուն*» կապակցությունում: Դասական ասորերենի համապատասխան ձևն է *k<sup>a</sup>naš*, որն ունի «հավաքել» իմաստը<sup>178</sup>, այսինքն՝ այս պարագայում ընդամենը մեկ անգամ գործածված է կոճ բայարմատից կազմված, իմաստային ճիշտ երանգավորում արտահայտող բայակառույցը: Ինչով է բացատրվում այս բայածևի եզակի գործածությունը՝ դժվար է կռահել: Ամեն պարագայում, հաջորդ համարներում վերստին գործածվում է ավանդական *էթքանաշ* ձևը:
3. *թէվէ* – հանդիպում է միայն *թէվէ ալօհօ ուլրոնօ*՝ «Աստված օգնություն (օգնական) լինի» արտահայտության մեջ, որը, հավանաբար, Խարբերդի ասորիների սերնդեսերունդ փոխանցված և կենդանի խոսքում պահպանված ասորական մի քանի կրոնական արտահայտություններից մեկն էր: Սույն բայածևի հիմքը դասական ասորերենի *h<sup>a</sup>wa*՝ «լինել» բայն է, որը գործածված է անկատար կերպի համեմատաբար ճիշտ ձևով, սակայն արականի փոխարեն՝ իգական սեռով, այսինքն պետք է լիներ *նէվէ* (դասական ասորերենի ճիշտ ձևը՝ *nehwe*):
4. *խում* – հանդիպում է միայն *ըմշիհօ խում մէն բէթմիթէ*՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» արտահայտության մեջ, որը, ինչպես հավանաբար և նախորդը, Խարբերդի ասորիների խոսքում գործածվող ավանդական մի քանի ասորական կրոնական արտահայտություններից մեկն էր, որի պահպանումը պայմանավորված էր եկեղեցական պրակտիկայում նրա շարունակական գործածությամբ: Դասական ասորերենի համապատասխան բայածևն ունի զօմ տեսքը, այսինքն այս պարագայում ասորերենի «կոֆ» տառը արտահայտված է հայերենի «խ» տառով (սրամասին մանրամասն տես 3.6.4. գլուխը), իսկ սկզբնական [o] ձայնավորը փոխարինվել է [ու]-ով՝ կամ այս երկու ձայնավորների նմանության պատճառով կամ զօմ բայի հրամայական եղանակի զօմ ձևի ազդեցությամբ: Կարևոր է նշել, որ զօմ հրամայական ձևն առկա է Ավետարանում՝ ի թիվս Քրիստոսի արտասանած

<sup>178</sup> J. Payne Smith-ի A Compendious Syrac Dictionary-ում *knaš* բայածևը թարգմանված է “to gather together”, “to collect” (էջ 219): M. Sokoloff-ի A Syriac Lexicon-ում “to gather, assemble”, “to collect” (էջ 637):

և հենց արամեերեն մեջբերված մի քանի արտահայտությունների: Խոսքը *տալիթա կում*՝ «Աղջիկ, վեր կաց» արտահայտության մասին է, որը կարող էր ազդած լինել դիտարկվող արտահայտության արտասանության վրա:

5. *օզինան* - «Բաբելոնի» հինգերորդ բառացանկում հանդիպում է *այբօ օզինան* արտահայտությունը, որը թարգմանված է «ո՞ւր կերթաք»: *Օզինան* բառը հանդես է գալիս աղավաղված տեսքով, քանի որ [ջ] բաղաձայնի փոխարեն, որն ընդհանրապես բացակայում է դասական ասորերենում, պետք է լինի [զ]: Չի բացառվում, որ հոգվածն արտագրած անձը վրիպակ է թույլ տվել՝ հայերեն [զ] և [ջ] տառերի ձեռագիր տարբերակների նմանության պատճառով: Ապա *-նան* վերջավորությունը, որն առաջանում է հփոan «մենք» անձնական դերանունի կրճատումից, կազմում է հոգնակի թվի երկրորդ դեմքի բայաձևեր, այսինքն՝ *օզինան* ձևը նշանակում է «կերթանք»: «Կերթաք» բայաձևի ճիշտ թարգմանությունը պետք է լինի *օզիթօն*: Այսպիսով, այս պարագայում գործ ունենք թե՛ աղավաղված գրության և թե՛ սխալ թարգմանության հետ:

### 3.3.5. Դերանուններ

Անձնական և ցուցական դերանուններ «Բաբելոնում» առկա չեն: Ստացական դերանունները ներկայացված են *տիլ* «իմ» անջատ դերանունով՝ *աիօ տիլ* «իմ եղբայրը» կապակցությունում (Ա-15-8), որն ամբողջությամբ համապատասխանում է դասական ասորերենի համապատասխան՝ aḥo dil(i) բառակապակցությանը:

Բացի սրանից՝ «Բաբելոնում» արձանագրված են մի քանի կցական ստացական դերանուններ (դերանվանական վերջածանցներ) հետևյալ բառերում.

- *խապրօխ* «ընկերդ» - ամբողջությամբ համընկնում է դասական ասորերենի ḫabroḫ ձևին:
- *մավլօտէ* «ծնունդը (նրա՝ Փրկչի)» – մասամբ համընկնում է դասական ասորերենի mawl<sup>o</sup>deh ձևին, սակայն բացակայում է հենց դերանուն հանդիսացող -h տառը:

- ըլտմոռան «մեր Տիրոջ» - դերանվան մասով ամբողջությամբ համընկնում է դասական ասորերենի d<sup>o</sup> Moran ձևին:

Կցական ստացական դերանուն առկա է նաև *հադ հորքո իթավ* (այլ տարբերակներ՝ *հադ հորքոյթավ* և *հադ հորքոյիթավ*) չափազանց հետաքրքիր բառակապակցության կազմում, որը դասական ասորերենից բառացիորեն թարգմանվում է՝ «մեկը այստեղ է»: Այս բառակապակցությունը փոխարինում է հայերենի «ներկա մը» բառը, որով ստորագրված են մի քանի հանրային իրադարձությունների հաղորդագրություններ: Այստեղ *իթավ* բառը համապատասխանում է դասակա ասորերենի itaw բառին, որը կազմված է it բառ-մասնիկից («կա», «առկա է»), որին կցված է 3-րդ դեմքի հոգնակի թվի առական սեռի -aw դերանվանական վերջածանցը<sup>179</sup>: Այս տեսքով այս բառը դասական ասորերենում կատարում է դերանվանական վերջահարույթի դեր, որն իր շարահյուսական գործառույթով մոտ է հայերենի օժանդակ բային: Քանի որ դասական ասորերենում *հադ հորքո իթավ* կապակցություն գոյություն չունի, ապա պետք է եզրակացնել, որ այն ստեղծվել է հոդվածագրի կողմից, որն ասորերենի իր իմացության սահմաններում ջանացել էր ստեղծել «ներկա մը» բառի համարժեքը:

### 3.4. Ասորական լեզվական նյութի հիմնական թեմատիկ խմբերը

#### 3.4.1. Ասորական տառերի անվանումները

Ասորական տառերի հայատառ անվանումները «Բաբելոնում» գործածված են երկու անգամ՝ պարբերությունները նշելու համար (Ա-7-5 և Ա-11-7): Ստորև աղյուսակում ներկայացված են պարբերականում արձանագրված տառերի անվանումները:

Ⲁ	Օլաֆ
ⲁ	Պէթ
Ⲃ	Կօմալ
ⲃ	Տօլաթ
Ⲅ	Հէ
ⲅ	Վավ

<sup>179</sup> Հակոբյան Ա., «Դասական ասորերեն», Երևան, 2005, էջ 121:

Առաջին հոդվածում տառի անվանմանը փակագծերում հետևում է հայկական տառ՝ ըստ հայկական այբուբենի հերթականության՝ *Օլաֆ* (Ա), *Պեթ* (Բ), *Կոմալ* (Գ), *Տոլաթ* (Դ), *Հէ* (Ե): Հնչյունաբանական առումով համապատասխան հայկական տառի հետ համընկնում են միայն *Պեթ*, *Կոմալ* և *Տոլաթ* տառերը (ըստ արևմտահայ արտաբերման): Երկրորդ հոդվածում հայկական տառերը բացակայում են:

Ա-8-2 հոդվածում, որը վերարտադրում է Աբրահամ Յուսուֆի՝ Փարիզից ուղարկած նամակը, գործածված է «սորվեցունել *Օլաֆը* և *Պետը*» արտահայտությունը, որը նշանակում է «ասորական գիր սովորեցնել», «ասորերենով գրածանաչ դարձնել»: Այբուբենի առաջին երկու տառերի անվանումների միացումով (ինչպես և հայերենում) կազմված է «այբուբեն» բառը՝ *օլաֆայեթ*: Այս բառը «Բաբելոնում» գործածված է երկու անգամ (Բ-4-3, Բ-22-4):

Որպես պարբերությունների նշաններ՝ «Բաբելոնի» երեք հոդվածներում գործածված են նաև բուն ասորական տառերը (մանրամասն 3.8.6. գլխում):

### **3.4.2. Ամիսների ասորական անվանումները**

Ամսվա ասորական անվանում առաջին անգամ գործածվում է Ա-9 համարի տիտղոսագլխի վրա՝ *թեշրին ի ըհրոյ* (նոյեմբեր). մինչ այդ գործածվում էին ամիսների հայերեն անվանումները: Հետագա մյուս համարների տիտղոսագլուխների և տիտղոսաէջերի վրա գործածվում են միայն ասորական տարբերակները, թեև հայերեն թարգմանությունը պահպանվում է ևս 4 համարներում: «Նոյեմբեր» ամսվա դասական ասորերենի ձևն է՝ *թեշրի հրոյ*: *Թեշրին ի* (կամ *թեշրինի*) ձևը, ամենայն հավանականությամբ, օսմանական թուրքերենի ազդեցություն է (տե՛ս ստորև աղյուսակը), ուր այս սեմական բառը ներթափանցել է արաբերենից, մինչ երկրորդ բաղադրիչը՝ *ըհրոյ* ասորական է: Նույնը վերաբերում է նաև *թեշրինի ըգտիմ*, *քենունը ըգտիմ* և *քենունը ըհրոյ* ամիսներին:

«Բաբելոնում» գործածված ամիսների անվանումները հիմնականում ճիշտ են վերարտադրում դասական ասորերենի համապատասխան ձևերը: Միակ բացառությունն է «օգոստոս» ամիսը, որի՝ հայկական գրով դյուրին արտահայտվող դասական ասորերենի *ավ* կամ *աբ* տարբերակի փոխարեն պարբերականում գտնում ենք *դըպ-*

պատի բառը, որը փոխառություն է քրդերենից և տարածված է նաև արդի արևելյան արամեական բարբառներում<sup>180</sup>:

«Հունիս» ամսվա համար հրատարակման Ա տարվա համարների տիտղոսաթերթերի վրա գտնում ենք *հազիրան* բառը, որին դասական ասորերենում արևմտաստրական արտասանությամբ համապատասխանում է *հըզիրոն* ձևը: Այստեղ –ան վերջավորությունը, ամենայն հավանականությամբ, արաբա-օսմանական *հազիրան* ձևի ազդեցություն է, կամ էլ բառն ամբողջությամբ փոխառնված է օսմաներենից: Հրատարակման Բ տարում այս վերջավորությունը փոխարինվում է ասորական արտասանությանը բնորոշ –ոն վերջավորությամբ, սակայն դրա հետ մեկտեղ «զ»-ն փոխարինվում է «խ»-ով (*հախիրոն*), որը տրամաբանական այլ բացատրությունների բացակայության պատճառով ստիպված ենք վրիպակ համարել:

Ամիսների անունների ճիշտ կեսը՝ *նիսոն, եար, հազիրան, թամուզ, դըպպախ* և *թեշրինի ըգտիմ* հանդիպում են միայն «Բաբելոնի» տիտղոսաթերթի վրա:

«Բաբելոնում» գործածված ամիսների ասորական անվանումները  
(տողատակերում նշված է առաջին գործածությունը)

«Բաբելոն»	Դասական ասորերեն	Օսմաներեն	Հայերեն
<i>Քէնունը Ըհրոյ</i> <sup>181</sup> (Ըհրո)	konūn ḥ <sup>3</sup> roy	Kanunusani	հունվար
<i>Շըպոթ</i> <sup>182</sup> , <i>Շպոթ</i> <sup>183</sup> , <i>ըշպոթ</i> <sup>184</sup>	š <sup>3</sup> boṭ	Shubat	փետրվար
<i>Օտոր</i> <sup>185</sup>	oḍar	Mart	մարտ
<i>Նիսոն</i> <sup>186</sup>	nīson	Nissan	ապրիլ
<i>Եար</i> <sup>187</sup>	‘iyor	Mayis	մայիս

<sup>180</sup> Maclean, A., *Dictionary of the Dialects of Vernacular Syriac*, Oxford Press, 1901, էջ 109; Шуманов, В., *Русско-ассирийский словарь*, С.-Петербург, «Прас-Атра», 1993, էջ 21:

<sup>181</sup> Ա-13-1:

<sup>182</sup> Ա-15-1:

<sup>183</sup> Ա-17-12:

<sup>184</sup> Ա-17-12:

<sup>185</sup> Ա-17-1:

<sup>186</sup> Ա-19-1:

<sup>187</sup> Ա-22-1:

«Բաբելոն»	Դասական ասորերեն	Օսմաներեն	Հայերեն
Հազիրան <sup>188</sup>	h <sup>3</sup> ziron	Haziran	հունիս
Թամուզ <sup>189</sup>	tomūz	Temmuz	հուլիս
Դրպպախ <sup>190</sup>	ab	Agustos	օգոստոս
Իլուլ <sup>191</sup>	‘ilul	Eilul	սեպտեմբեր
Թեշրինի Ըգպիմ <sup>192</sup>	tešrīn q <sup>3</sup> dem	Teshrinievel	հոկտեմբեր
Թեշրին ի Ըհրոյ <sup>193</sup>	tešrīn h <sup>3</sup> roy	Teshrinisani	նոյեմբեր
Քէնուն ը Ըգպիմ <sup>194</sup>	konūn q <sup>3</sup> dem	Kanunuevel	դեկտեմբեր

### 3.4.3. Շաբաթվա օրերի ասորական անվանումները

Շաբաթվա օրերի ասորական անվանումն առաջին անգամ գործածվել է Ա-12 համարի կիսաշապիկի վրա՝ ուղեկցվելով փակագծերի մեջ հայերեն թարգմանությամբ՝ *համշոշիպա* (հինգշաբթի): Ա-13 համարի տիտղոսագլխի վրա նույն բառը տպված է ամբողջությամբ մեծատառերով (ՀԱՄՇՕՇԻՊԱ) և առանց հայերեն թարգմանության: Բառավերջի «ա»-ն՝ ըստ հակոբիկների ավանդական արտասանության, սխալ է, և Ա-14 համարից սկսած տեսնում ենք արդեն ուղղված՝ *համշոշիպո* տարբերակը, թեև նույն համարում գործածված է *համշո շիպա* տարբերակը: Քանի որ «Բաբելոնը» միշտ լույս էր տեսնում հինգշաբթի օրերը, ապա ՀԱՄՇՕՇԻՊՕ բառն առկա է նրա բոլոր տիտղոսաթերթերի վրա: Հարկ է նաև նշել, որ Ա-14 համարի տիտղոսաթերթից սկսած՝ բոլոր տիտղոսաթերթերի վրա առկա *համշոշիպո* ձևը տարբերվում է Ա-16 համարի շաբաթվա օրերի բառացանկում զետեղված՝ *համշո ըպշապո* տարբերակից:

Գործածության անկայունություն է նկատվում նաև «կիրակի» բառի պարագայում: Բառացանկում այն ներկայացված է որպես *հայր ըպշապո*, որը համապատասխանում է դասական ասորերենի *ḫaḏ b<sup>3</sup>šabo* ձևին, սակայն գործածված են նաև դրանից

<sup>188</sup> Ա-24-1:

<sup>189</sup> Ա-26-1:

<sup>190</sup> Բ-1-1:

<sup>191</sup> Բ-3-1:

<sup>192</sup> Բ-6-1:

<sup>193</sup> Ա-9-0:

<sup>194</sup> Ա-11-0:

տարբերվող *խաշիպօ/հաշիպա/հաշիպօ* ձևերը: Նկատի ունենալով կիրակի օրվա հատուկ նշանակությունը քրիստոնյաների կրոնական կյանքում, կարելի է ենթադրել, որ դասական ասորերենի համապատասխան բառից տարբերվող *խաշիպօ/հաշիպա/հաշիպօ* ձևերը, ի թիվս կրոնական բնույթի ասորական մի քանի այլ բառերի և արտահայտությունների, պահպանվել էին Խարբերդի ասորիների խոսքում:

Ստորև ներկայացված աղյուսակում նախ նշված են Ա-16 համարի բառացանկի տարբերակները, ապա դրանցից տարբերվող ձևերը.

կիրակի	<i>հապ ըպշապօ<sup>195</sup>, խաշիպօ, հաշի- պա, հաշիպօ<sup>196</sup></i>
երկուշաբթի	<i>ըթրէյն [ըպշապօ]</i>
երեքշաբթի	<i>ըթլօթ [ըպշապօ]</i>
չորեքշաբթի	<i>արպօ [ըպշապօ]</i>
հինգշաբթի	<i>համշօ [ըպշապօ], համշօշիպօ, (համ- շօշիպա<sup>197</sup>, համշօ շիպա<sup>198</sup>)</i>
ուրբաթ	<i>ըրուպթօ, րուպթա</i>
շաբաթ	<i>շաբթօ, շաբթա</i>

#### 3.4.4. Հոգևորականների տիտղոսներ

«Բաբելոնում» պարբերաբար գործածվում են տարբեր աստիճանների հոգևորականների տիտղոսները՝ սարկավագից մինչև պատրիարք: Հետաքրքրական է, որ այս բառերը առավելապես արաբական կամ արաբացած են և ակնհայտորեն արտահայտում են Խարբերդի ասորիների կենդանի խոսքում գործածելի եղած բառերը:

<sup>195</sup> Ա-15-8:

<sup>196</sup> Ա-14-0:

<sup>197</sup> Ա-12, Ա-13:

<sup>198</sup> Ա-14-4:

- *շմմաս*՝ «սարկավագ» – համապատասխանում է արաբերենի شَمَّاس *շամմաս* բառին: Դասական ասորերենի նույնարմատ համապատասխան ձևն է՝ *շամմաշա*:
- *րահիպ*՝ «վանական» – համապատասխանում է արաբերենի رَاهِب *ռահիբ* բառին: Դասական ասորերենում նույնարմատ համապատասխան ձև չկա:
- *գաս*՝ «քահանա» – համապատասխանում է արաբերենի قَنَّ *կասս* բառին: Դասական ասորերենի նույնարմատ համապատասխան ձևն է՝ *կաշա*:
- *քեշիշ*՝ «քահանա», «վանական» – համապատասխանում է թուրքերենի keşiş բառին, որն իր հերթին ծագում է արաբերենի قسيس *կիսսիս* բառից (հավանական է նաև ծագումն ասորական *կաշա* բառից):
- *ըսիսօֆ*՝ «եպիսկոպոս» – համապատասխանում է արաբերենի أُسْف *ուսկուֆ* բառին, որը ծագել է դասական ասորերենի էֆիսկոֆա բառից, որն իր հերթին հունական επισκοπος բառի տառադարձությունն է:
- *մթրան*՝ «արքեպիսկոպոս», «միտրոպոլիտ» – համապատասխանում է արաբերենի مُطْرَن *մուպրան* բառին: Դասական ասորերենում նույնարմատ համապատասխան ձև չկա:
- *բաթրիք*՝ «պատրիարք» – համապատասխանում է հունական πατριάρχης բառից փոխառված արաբերենի بَطْرِيْر *բապրրյարք* բառի կրճատ՝ بَطْرِيْك *բապրիք* ձևին:
- *ապունա*<sup>199</sup>՝ «մեր Հայր», հոգևորականների պատվավոր տիտղոս – համապատասխանում է արաբերենի أَبُونَا *աբունա* բառին:

### 3.4.5. Կրոնին վերաբերող այլ հասկացություններ

Այս կատեգորիայում առանձնացրել ենք «Բաբելոնում» գործածված հետևյալ լեզվական միավորները.

- *Ապունյր պաշմայն* կամ *պաշմաեոյ*<sup>200</sup> – «Տերունական» («Հայր մեր») աղոթքի ասորական անվանումն է (բառացիորեն՝ «Հայր մեր, որ երկնքում ես»), որը դասական ասորերենում ունի 'abūn d<sup>o</sup>-ḫa-šmayo ձևը: «Բաբելոնի» հոդվածներից

<sup>199</sup> Բ-11-1:

<sup>200</sup> Ա-14-15:



միանշանակ հետևում է, որ ասորական բոլոր կարևոր հավաքներն սկսվում էին այս աղոթքի խմբակային ընթերցումով: Կասկած չի հարուցում, որ Տերունական աղոթքն ասորերենի այն մի քանի նմուշներից էր, որոնք հայտնի էին խարբերոցի բոլոր ասորիներին:

- *Շուպիո ըլ թօպօ*<sup>201</sup> կամ *Շուպիօլ դօպօ*<sup>202</sup> «Բարեպաշտի փառաբանում»: Սա եկեղեցական շարական է, որը խարբերոցի ասորիները վերագրում էին Եփրեմ Ասորուն: Ըստ «Բաբելոնի»՝ այս շարականը կատարվում էր հանդիսավոր ժողովների սկզբում. այսպես՝ Բ-15 համարի «Ֆրեզնոյի ասորիները» հոդվածում կարդում ենք՝ «Ժողովը սկսավ «Շուպիօլ դօպօ»ով»: Ա-25 համարում հրատարակված հայատառ թուրքերենով *Կէօզ եաշիյէ Ասուր Սարկոն* երգին կից նշված է, որ այն պետք է կատարվի *Շուպիօլ Դօպօ*-ի եղանակով: Բ-19 համարի «Միջինկի խնճուքը» հոդվածում նույն երգը հիշատակվում է, որպես կատարված *Շուպիօլ Դօպօ*-ի եղանակով: Սա նշանակում է, որ շարականը, կամ առնվազն նրա մեղեդին, լայն ճանաչում և գործածություն ուներ:
- *Թշպօհթօ* - փառաբանական ժամերգություն է: Ա-13 համարի «*Ըթլիթթօյօ* [երրորդ] տարեդարձի մը առթիվ» հոդվածում, որում նկարագրված է «Ասորվոց Հնգյակ Ընկերության» նախագահի որդու տարեդարձի տոնակատարությունը, կարդում ենք. «Ճաշասեղանեն վերջն էր, որ *ըթլօթօ* [երեք] *շմմասներու* [սարկավազների] մասնակցությամբ «*Թշպօհթօ*» փառաբանական ժամերգով մը սկեսացավ արարողությունը»:
- *Սէհրանա* – հավանաբար աղոթք կամ շարական է: Հիշատակված է Ա-10 համարի խմբագրականում՝ «*Սէհրանա* կարդալ» բառակապակցության մեջ: Բառացիորեն նշանակում է «լուսնային»:

### 3.5. Ասորական արտահայտություններ և ամբողջական նախադասություններ

«Բաբելոնում» արձանագրված ասորական լեզվական նյութն առավելապես ներկայացված է հայերեն տեքստի մեջ ներհյուսված առանձին բառերով: Դրա հետ մեկտեղ պար-

<sup>201</sup> Ա-14-2:

<sup>202</sup> Ա-25-7:

բերականում գտնում ենք նաև հայատառ առնվազն երեք ամբողջական նախադասություն՝

- *Ըպրհիս մավլօտէ ըտմօրան ու ըիշօթ շիթօ խօթթօ արրհիթօ՝* «Օրհնյալ է մեր Տիրոջ ծնունդը և օրհնյալ նոր տարի»: Այս պարագայում գործ ունենք դասական ասորերենի հայատառ քիչ թե շատ ճշգրիտ տառադարձության հետ, քանի որ սա կրոնական գործառույթ ունեցող ավանդական նախադասություն է, որն ասորիները սերնդեսերունդ լսում և կրկնում էին իրենց առօրյայում:
- *Ըմշհիօ խում մէն պեթմիթէ՝* «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Այս նախադասությունը հանդես է գալիս որպես երեք մասից բաղկացած և երեք համարներում (Բ-19, Բ-20, Բ-21) հրատարակված հողվածի վերնագիր, ընդ որում այն հայատառ է տիտղոսաէջի բովանդակության մեջ, մինչ անմիջապես հողվածի վերևում ասորատառ է՝ ܘܠܘܠܘܢܐ ܡܥ ܡܥܘ ܠܡܥܘ: Սա «Բաբելոնի» հայերեն միակ հողվածն է, որի վերնագիրն ասորատառ է:
- *Թէվէ Ալօհօ ուտրօնօ՝* «Աստված օգնություն լինի»: Այս նախադասությունը մանրամասն ներկայացվել է 3.3.4. պարբերությունում:

Այս խմբին կարելի է դասել նաև *Սումօխօ սլիպօ շուտաֆութօ՝* «Կարմիր Խաչ ընկերություն» արտահայտությունը (Ա-9-4, Ա-11-12), որում դասական ասորերենին բնորոշ որոշյալ-որոշիչ հերթականությունը փոխարինված է հայերենին բնորոշ որոշիչ-որոշյալ հերթականությամբ (պետք է լինէր՝ *սլիպօ սումօխօ*):

Բացի այս երկու նմուշներից՝ «Բաբելոնի» առնվազն երկու հողվածներ, երկուսն էլ գրված Նաում Բեշարովի կողմից, պարունակում են ասորատառ մեջբերումներ Ավետարանից: Այդ մեջբերումները մանրամասն դիտարկված են 3.8.5. պարբերությունում:

### 3.6. Ասորական բառերի հայերեն տառադարձության հիմնական սկզբունքները

#### 3.6.1. Bagad-Kapat խմբի միջատամնային շփականներ

Ասորական այբուբենի վեց տառեր՝ «բեթ», «գոմալ», «դոլաթ», «քաֆ», «պե» և «թավ», որոնք կազմում են, այսպես կոչված, bagad-kapat խումբը, դասական ասորերենում աչքի են ընկնում արտաբերման երկու տարբերակներով: Այսպես, բառակազմում և բառամիջում բաղաձայնից հետո նրանք ունեն պայթական որակ, համապատասխանաբար՝ [b], [g], [d], [k], [p], [t]: Բառամիջում և բառավերջում ձայնավորից հետո նրանք ունեն շփական որակ, այն է՝

[b], համապատասխանում է հայերենի [վ]-ին,

[g], համապատասխանում է հայերենի [ղ]-ին,

[d], միջատամնային, համապատասխանում է անգլերենի ձայնեղ [th]-ին՝ ‘this’ բառում,

[k], համապատասխանում է հայերենի [խ]-ին,

[p], համապատասխանում է հայերենի [ֆ]-ին,

[t], միջատամնային համապատասխանում է անգլերենի խուլ [th]-ին՝ ‘think’ բառում<sup>203</sup>:

Արտասանական երկու տարբերակները նշվում են դիակրիտիկ կետով, որը շփականի պարագայում դրվում է տառի տակ, իսկ պայթականի պարագայում՝ տառի վերևում: Ընդ որում, տարանջատիչ կետի գործածությունը չի կրում պարտադիր բնույթ, և արտասանական երկու տարբերակներն էլ կարող են նշվել որևէ կետ չպարունակող միևնույն տառով<sup>204</sup>:

Պայթական և շփական տարբերակների միջև միևնույն բառում հնարավոր է հերթագայություն: Այսպես, բառը չի կարող սկսվել շփական տարբերակով, սակայն

<sup>203</sup> Համեմատության համար նշենք, որ արաբերենում արտասանության պայթական/շփական տարբերակներ ունեցող զույգեր որպես քերականական կատեգորիա գոյություն չունեն: Թվարկված 12 հնչույթներից առնվազն ինը, ներառյալ միջատամնայինները, արաբերենում առկա են, սակայն հանդես են գալիս որպես ինքնուրույն, կայուն հնչույթներ և նշվում են առանձին տառերով:

<sup>204</sup> Հետաքրքրական է, որ արաբերենում [t]-[t̤] և [d]-[d̤] բաղաձայնները նշվում են նման գրություն ունեցող, բայց ինքնուրույն տառերով, որոնք իրարից տարբերվում են տառի վրա դրվող կետով: Այլ կերպ ասած՝ միջատամնայինը նշվում է պայթականը նշող տառի վրա կետի ավելացումով: Համապատասխանաբար՝ առաջին զույգը նշվում է ت ث տառերով, իսկ երկրորդը՝ د ذ:

Եթե նրան նախորդող բառն ավարտվում է ձայնավորով, ապա բառասկզբի պայթական բաղաձայնը փոխարինվում է իր շփական տարբերակով: Օրինակ՝ *talmida* «աշակերտ», բայց՝ *ha talmida* «ահա աշակերտը»<sup>205</sup>:

Այստեղ խոսքն առայժմ միջատամնայինների մասին է լինելու, քանի որ հայերենում նման հնչյուններ և համապատասխան տառեր գոյություն չունեն:

Արդի արամեական բարբառներից մի քանիսում, այդ թվում Խարբերդին ամենամոտ գտնվող տուրոյոյում, միջատամնայինները պահպանվել են, մինչ մյուսներում (ներառյալ Հայաստանի ասորիների խոսքում և արդի գրական ասորերենում) դրանք վերացել են և փոխարինվել իրենց պայթական զույգերով<sup>206</sup>: Այսպես, դասական ասորերենի *talmida*/*ṭalmida* դիտարկված տարբերակի դիմաց արդի գրական ասորերենում առկա է միայն *talmida* տարբերակը:

Ինչպես նշել էինք, Խարբերդի ասորիները չունեին իրենց սեփական բարբառը, ուստի «Բաբելոնում» գործածված բառերն ու արտահայտությունները գրեթե ամբողջությամբ ներմուծված են դասական ասորերենից (դա լավագույնս վկայում են պարբերականում գործածված դասական բայական ձևերը, որոնք չեն պահպանվել արդի արամեական որևէ բարբառում):

Լինելով արևմտյան ասորիներ՝ Խարբերդցիներն իրենց եկեղեցիներում և, հավանաբար, դպրոցներում առնչվում էին Ասորի ուղղափառ, Ասորի կաթոլիկ և Մարոնական եկեղեցիների կողմից ընդունված դասական ասորերենի ընթերցման ավանդական եղանակին<sup>207</sup>, որում միջատամնային շփականների արտաբերումը պահպանվում է: Մինչ հոգևորականներն ու ասորերենի ուսուցիչներն արտաբերում էին այս հնչյունները, դժվար է ասել, թե որքանով էին միջատամնայիններն արտաբերելի հասարակ ասորիների համար, որոնք առնվազն երկու հարյուրամյակ հայախոս էին (միջատամնային բաղաձայններ չկան նաև թուրքերենում): Համենայն դեպս, հայերենում միջատամնային բաղաձայնների և համապատասխան տառերի բացակայությունը հանգեցրեց նրան, որ «Բաբելոնի» ասորական բառերի տառադարձության մեջ հիմնականում տեղ գտավ արդի գրական ասորերենում ձևավորված եղանակը, այսինքն՝ միջատամնային հնչյունները փոխարինվել են իրենց պայթական տարբերակներով: Այսպես, դասական

<sup>205</sup> Արաբերենում նման երևույթ գոյություն չունի:

<sup>206</sup> Երևույթն առկա է նաև մի շարք արաբական բարբառներում:

<sup>207</sup> Սույն աշխատությունում կիրառված տառադարձությունը հետևում է հենց այս եղանակին:

ասորերենի *eṭkanaš* բայը հայկական տառադարձության մեջ դարձել է *էթքանաշ*, *tl̥iyo* և *had̥* թվականները՝ *թիթոյո* և *հայր* (հիշենք, որ արևմտահայերենի [տ]-ն համապատասխանում է արևելահայերենի [դ]-ին), *malk̥to* բառը՝ *մալքէթո*, լայն տարածում ունեցող –սօ վերջավորությունը՝ *-ութո* և այլն:

Առնվազն մեկ դեպքում միջատամնային [լ]-ն վերածել է ոչ թե [թ], այլ [ս] բաղաձայնի: Խոսքն *atur̥oyo* «ասորի», «ասորական» բառի մասին է, որը «Բաբելոնում» հանդես է գալիս *ասուրոյո* տեսքով (արդի գրական ասորերենում՝ *aturaya*): Սա պետք է բացատրել հայերենի «ասորի» բառի, ինչպես նաև թուրքերենի ազդեցությամբ, որում առկա է նման ձև (այստեղ հիշենք, որ Աշուր Յուսուֆի՝ Խարբերդում հրատարակած պարբերականը կոչվում էր *Մյուրշիդ-ի-ասուրիյուն*՝ «Ասորիների ուղեցույց»): Ազդեցություն կարող էր գործած լինել նաև ասորիների ավանդական *suryoyo* կամ *suroyo* ինքնանվանումը, որն առաջացել է «Սիրիա» բառից և գրվել է միջատամնային որակ չունեցող «սեմքաթ» տառով (𐎎), որով նշվում է հայերենի «ս» բաղաձայնի հետ համընկնող հնչյուն:

Միջատամնային [d]-ի վերածում [z]-ի «Բաբելոնում» արձանագրված չէ:

### 3.6.2. Կոկորդային բաղաձայններ և շվա

Կոկորդայինների պարագայում հիմնականում պետք է անդրադառնանք 𐎎՝ «է» տառով նշվող և «սեմական լեզուներին բնորոշ կոկորդային խոր հնչյունին, որն առաջանում է կոկորդի մկանների և ձայնալարերի ուժեղ լարմամբ և տառին հաջորդող ձայնավորի միաժամանակյա արտաբերմամբ»<sup>208</sup> (արաբերենում՝ *ع*, գիտական տրանսկրիպցիայի մեջ նշվում է շրջված ապաթարցով կամ <sup>o</sup> նշանով): Սեմական լեզուներում սա համարվում է լիարժեք բաղաձայն և, ինչպես նշվեց, արտահայտվում առանձին տառով: Անմիջապես նշենք, որ արդի արամեական բարբառներից շատերում, հատկապես նրանցում, որոնք զարգացել են առանց արաբերենի ազդեցության, ինչպես նաև արդի գրական ասորերենում, այս հնչյունն իսպառ վերացել է, թեև դասական եղանակին հետևող ուղղագրության մեջ «է» տառը պահպանվում է: Այդուհանդերձ, Ասորի ուղղափառ, Ասորի կաթոլիկ և Մարոնական եկեղեցիների կողմից ընդունված դասական ասորերենի

<sup>208</sup> Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 63:

ընթերցման ավանդական եղանակում այս կոկորդային բաղաձայնը պահպանվում է և որևէ դժվարություն չի ներկայացնում արաբերենին տիրապետող ասորիերի համար: Սակայն, ինչպես և միջատամնայինների պարագայում, քիչ հավանական է, որ «է» կոկորդայինը արտաբերելի էր Խարբերդի հայախոս ասորիների համար, նամանավանդ որ թուրքերենում այն նույնպես գոյություն չունի:

Ամեն պարագայում, հայերենում համապատասխան հնչյունի և տառի բացակայության պատճառով «Բաբելոնում» «է» տառը գրեթե ամբողջապես անտեսված է: Դասական ասորերենի «<sup>c</sup>+ձայնավոր» կապակցությունների դիմաց «Բաբելոնում» հանդես է գալիս միայն համապատասխան ձայնավորը, և դրանով բառերը, որոնք ասորերենում սկսվում են բաղաձայնով, հայերենում, փաստորեն, վերածվում են ձայնավորներով սկսվողների: Այսպես՝ դասական ասորերենի <sup>c</sup>abdo «ծառա» բառը պարբերականում հանդես է գալիս *ապրո* տեսքով, <sup>c</sup>esro «տասը»՝ *էրո*, <sup>c</sup>esrin «քսան»՝ *էրին*, <sup>c</sup>udrono «օգնություն»՝ *ուրոնո* և այլն: Կարելի է վստահությամբ ենթադրել, որ այսպիսի գրությունն արտահայտում է խարբերդցիների իրական արտասանությունն այն դպքերում, երբ նրանք պետք է արտասանեին կոկորդային պարունակող բառերն աղոթքներում կամ շարականներում:

«Բաբելոնում» արձանագրված է այս սկզբունքից շեղվելու հետաքրքրական դեպք: Այսպես, դասական ասորերենի <sup>c</sup>atiro «հարուստ» բառը հայկական տառադարձության մեջ ունի *հաթիրո* տեսքը, այսինքն, ամենայն հավանականությամբ, ենթադրելի *աթիրո* ձևի փոխարեն փորձ է արվել «h» տառով արտահայտել կոկորդային «է»-ն:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ դասական ասորերենում առանձնացվում է «ը» հնչյունը, որը քերականության մեջ կոչվում է «շվա»: Շվա-ն առաջանում է ձայնավորների սղման կամ նեղացման պատճառով և հստակ լսելի է բառասկզբի երկու բաղաձայնների միջև և բառամիջի երեք բաղաձայններից կազմված կապակցություններում՝ երրորդ և երրորդ բաղաձայնների միջև (նման երևույթ՝ «գաղտնավանկի «ը», գոյություն ունի նաև հայերենում, օրինակ՝ «մ(ը)կ(ը)րտիչ» բառում): Ի տարբերություն այլ ձայնավորների՝ շվա-ն ասորերենում միշտ «գաղտնավանկային» է, այն որևէ տառով կամ ձայնանիշով չի նշվում և այդ պատճառով հաճախ անտեսվում է նաև տառադարձության մեջ (սույն աշխատության մեջ շվա-ն նշում ենք <sup>a</sup> նշանով): Բառասկզբի երկու բաղաձայնների միջև շվա-ն առկա է նաև այն դեպքում, երբ առաջին բաղաձայնը կոկորդային «է»-ն է, օրինակ՝ <sup>c</sup>laymo «պատանի», <sup>c</sup>rūbto «ուրբաթ», <sup>c</sup>sar «տասն-» (11-ից 19-ը

թվականներում): Այս բառերը «Բաբելոնում» տառադարձված են *ըլայմո*, *ըրուպթո* և *ըսար*: «Տասներորդ» բառը դասական ասորերենում ունի <sup>օ</sup>sīroyo ձևը, սակայն *էսրո* և *էսրին* ձևերի ակնհայտ ազդեցությամբ «Բաբելոնում» այն հանդես է գալիս ոչ թե *ըսիրոյո*, այլ *էսիրոյո* ձևով:

Քանի որ կասկածելի է, որ «Բաբելոնի» հեղինակները ծանոթ էին շվա-ի գաղափարին և նրա առանձնահատկություններին, ապա կարելի է ենթադրել, որ հայերենի «ը»-ով նրանք փորձում էին վերարտադրել ոչ թե շվա-ն, այլ բառասկզբի չձայնավորված «է» կոկորդայինը: «Բաբելոնում» արձանագրված է նաև բառասկզբի «<sup>օ</sup>-շվա» կապակցության ամբողջական անտեսման մեկ դեպք՝ <sup>օ</sup>rūbto «ուրբաթ» բառի *ռուպթա* տարբերակի տեսքով:

«Բաբելոնում» «է» կոկորդայինն անտեսվում և հայկական տառադարձության մեջ որևէ կերպ չի նշվում նաև բառամիջում: Որպես օրինակ դիտարկենք 4, 7 և 9 թվականները, որոնց դասական ասորերենի arb<sup>օ</sup>, šab<sup>օ</sup> և teš<sup>օ</sup> ձևերի դիմաց «Բաբելոնում» ունենք *արըպօ*, *շապօ* և *թէշօ*, ինչպես նաև *րապիոյո* (r<sup>օ</sup>bi<sup>օ</sup>yo) «4-րդ», *շապին* (šab<sup>օ</sup>in) «70», *թէշին* (teš<sup>օ</sup>in) «90» ածանցյալ ձևերը: 40 թվականը, որը դասական ասորերենում ունի arb<sup>օ</sup>in ձևը, «Բաբելոնում» տառադարձված է որպես *արպին* կամ *արըպին*: Շատ հետաքրքրական է այս թվականի ընդամենը մեկ անգամ հանդիպած ձևը՝ *արպըերն*, որը հայկական տառերով բառամիջի «է» կոկորդայինը վերարտադրելու միակ փորձն է: Բառամիջի «է»-ի անտեսում տեսնում ենք նաև մի շարք այլ բառերում, ինչպես՝ *ըթմոնասար* (t<sup>օ</sup>mona<sup>օ</sup>sar), *զըուրէ* (z<sup>օ</sup>ure), *ըլլէլ* (l<sup>օ</sup>el), *մավղոնութօ* (ma<sup>օ</sup>donu<sup>օ</sup>) բառերում:

Դասական ասորերենի արևմտյան արտասանությանը բնորոշ մեկ այլ կոկորդային հնչյուն է խոր կոկորդային [h]-ն (𐎶, արաբերենում՝ ح), որին արևելյան ասորիների մոտ համապատասխանում է դասական ասորերենին բնորոշ և արդի գրական ասորերենին փոխանցված [խ] տարբերակը ([խ] հնչյունն առկա է նաև արևմտասեմական այլ լեզուներում, մասնավորապես՝ եբրայերենում): Դասական ասորերենում առկա է նաև իր որակով հայերենի [h]-ի հետ համընկնող հնչյուն (𐎶): Լինելով արևմտյան ասորիներ՝ խարբերդցիները «Բաբելոնում» այս հնչյունը վերարտադրում են ոչ թե հայերենի «խ», այլ «հ» տառով (այսինքն՝ հայերենի «հ» տառով վերարտադրվում է ասորերենի ինչպես 𐎶, այնպես էլ 𐎶 տառը), օրինակ՝ *աիօ* «եղբայր» (եբրայերենում՝ *աի*), *հազիրան* «հունիս», *համշօ* «հինգ» (և ածանցյալ ձևեր, ներառյալ՝ *համշօշիպօ* «հինգշաբթի»). եբ-

րայերենում՝ *խամեշ*), *հապիպո* «սիրելի», *հապրո* «ընկեր» (եբրայերենում՝ *խավեռ*), *հադ* «մեկ» (եբրայերենում՝ *էխադ*), *շուպի* «փառք» և այլն:

### 3.6.3. Էմֆատիկ բաղաձայններ

Կոկորդային հնչյուններից բացի՝ սեմական լեզուների հնչյունական համակարգին բնորոշ են, այսպես կոչված, «էմֆատիկ» բաղաձայնները, որոնց արտասանությունն աչքի է ընկնում որոշ լարվածությամբ: Դասական ասորերենն ունի երկու էմֆատիկ բաղաձայն՝ «կոշտ» [t] (նշվում է ܛ «տեթ» տառով, արաբերենում՝ ط ) և [s] (նշվում է ܣ «սադե» տառով, արաբերենում՝ ص): «Բաբելոնում» գործածված է սկզբնապես էմֆատիկ [t] պարունակող երկու բառ. դրանցից մեկում՝ *š'boṭ* «փետրվար», այդ հնչյունը տառադարձված է «թ» տառով՝ *շրպոթ* «փետրվար», իսկ մյուսում՝ *ṭobo* «լավ», «բարեպաշտ» մեկ անգամ «թ»-ով՝ *թուօ*, և չորս անգամ «դ»-ով՝ *դուօ*: Երկուսն են նաև սկզբնապես էմֆատիկ [s] պարունակող բառերը՝ *šafro* «առավոտ» և *š'libo* «խաչ», որոնցում այդ հնչյունը տառադարձված է «ս» տառով՝ *սաֆրո* և *սիլպո* կամ *ըսիլպո* «խաչ»: Այսինքն՝ հայերենի «ս» տառով տառադարձվում է ինչպես «սադե» տառով նշվող էմֆատիկ [s]-ն, այնպես էլ «սեմքաթ» տառով (ܥ) նշվող բաղաձայնը, որը համընկնում է հայերենի «ս» բաղաձայնի հետ:

### 3.6.4. Այլ բաղաձայններ

Էմֆատիկ բաղաձայններին որոշ նմանություն ունի «կոֆ» տառով (ܦ, արաբերենում՝ ڤ) նշվող բաղաձայնը, որը մոտ է հայերենի [կ]-ին, այն տարբերությամբ, որ արտաբերելիս լեզուն մոտավորապես գտնվում է այն դիրքում, որը զբաղեցնում է [ղ] կամ [խ] բաղաձայնների դեպքում: «Բաբելոնում» գրանցել ենք այս հնչյունը պարունակող վեց բառ: Դրանցից երեքում այն տառադարձված է հայերենի «խ» տառով՝ *սումօխո* «կարմիր» (*sumoqo*. հետաքրքրական է, որ հայերենում ասորական այս բառը նույնպես հանդես է գալիս «խ»-ով՝ «սումախ»), *խապմոյո* «առաջին» (*qadmojo*), *խում* «բարձրանալ» «կանգնել» (*qom*, գործածված է *մըշիհո խում մէն բէթմիթէ*՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» արդեն դիտարկված արտահայտության մեջ), երկու անգամ «գ»-ով՝ *ըմեագրո* «հարգելի» (*m'yaqro*) և *ըգտիմ* «առաջին» (*q'dem*, *թէշրինի ըգտիմ* «հոկտեմբեր» և *քէնունը ըգտիմ*



«դեկտեմբեր» բառերում) և մեկ անգամ՝ «ք»-ով *տուպոքո* «բովանդակություն» (*dubogo*) բառում, որը պարբերաբար երևում է տիտղոսաթերթերի վրա: Նշենք, որ արևմտահայերենում «գ» և «ք» տառերը համապատասխանում են արևելահայերենի «ք»-ին: «Կ» տառը, որի արևելահայ արտասանությունն ամենամոտն է ասորական «կոֆ»-ին, արևմտահայերենում հնչում է որպես «գ» և, ինչպես տեսնում ենք, չի գործածվում այս հնչյունի տառադարձության համար:

Հայերենում բացակայող ասորական մեկ այլ հնչյուն՝ [w], միշտ տառադարձվում է «վ» տառով՝ *եավմո* «օր» (*yawmo*), *եավմոնո* «այսօր» (*yawmono*), *թէվէ* «եղիցի» (*tehwe*), *իթավ* «է», «հանդիսանում է» (*iṭaw*), *մավլոդէ* «ծնունդ» (*mawloḏeh*), *շավեութո* «հավասարություն» (*šawuyto*), *վա* «և» (*wa*):

### 3.6.5. Շվա-ի մետաթեզ (դրափոխություն)

Վերադառնալով բառասկզբի երկու բաղաձայնների միջև առկա շվա-ին՝ հարկ է նշել, որ «Բաբելոնում» կան դրա՝ կոկորդային հնչյուններ չպարունակող բազմաթիվ նմուշներ: Սրանք արտահայտում են պարբերականում ասորական բառերի հայերեն տառադարձության թերևս ամենահետաքրքրական առանձնահատկությունը, որն այստեղ անվանում ենք «շվա-ի մետաթեզ»: Այն դրսևորվում է նրանով, որ դասական ասորերենի բառասկզբի երկու բաղաձայնների միջև առկա շվա-ն հայերեն տառադարձության մեջ տեղափոխվում է բառի սկիզբը՝ նշվելով հայերենի «ը» տառով (հիշենք, որ դասական ասորերենում [r] հնչյունը չի նշվում որևէ տառով կամ ձայնանիշով): Այսպես, դասական ասորերենի *t<sup>o</sup>reyn* («երկու»), *t<sup>o</sup>loṭo* («երեք»), *š<sup>o</sup>t<sup>o</sup>* («վեց»), *t<sup>o</sup>mona<sup>c</sup>sar* («տասնութ»), *t<sup>o</sup>monin* («ութուն»), *m<sup>o</sup>ših<sup>o</sup>* («Քրիստոս»), *b<sup>o</sup>rīk<sup>ṣ</sup>* («օրհնյալ») բառերը «Բաբելոնում» տառադարձված են որպես *ըթրէյն*, *ըթլթթ*, *ըշթ*, *ըթմոնասար*, *ըթմոնին*, *ըմշիհո*, *ըպրիի*: Վերջին բառը մեկ անգամ գործածված է *ասյրիի* տարբերակով, այսինքն՝ «ը»-ի փոխարեն գործածված է «ա»-ն: Ինչով է բացատրվում շվա-ի մետաթեզը՝ դժվար է գուշակել, նկատի ունենալով, որ հայերենի արտասանական տեսանկյունից շվա-ի՝ իր տեղում արտաբերումը որևէ դժվարություններ չպետք է հարուցեր<sup>209</sup>: Ավելին, «Բաբելոնում» ունենք

<sup>209</sup> Կարելի է ենթադրել, որ ինչ-ինչ ազդեցություն է գործել հայերենում՝ երկու կամ ավելի բաղաձայններով սկսվող որոշ բառերի սկզբում լսելի [r]-ն, ինչպես՝ (ը)սկսել, (ը)սկզբնապես և այլն: Արևմտահայերենում այս երևույթն ավելի ընդգծված է:

դեպքեր, երբ շվա-ն երևում կամ ենթադրվում է իր սկզբնական դիրքում: Այսպես, դասական ասորերենի ʕ<sup>o</sup>boṭ («փետրվար») բառը պարբերականում հինգ անգամ տառադարձված է որպես շրայօթ և մեկ անգամ որպես շայօթ: Մետաթեզով ձևը՝ ըրայօթ, գործածված է ընդամենը մեկ անգամ: ʕ<sup>o</sup>libo «խաչ» բառը երկու անգամ տառադարձված է սլիայօ և մեկ անգամ՝ ըսլիայօ: Դասական ասորերենի ʕ<sup>o</sup>mayo «երկինք» բառը հանդես է գալիս շմատօ կամ շմայն ձևերով, իսկ մետաթեզով ձև ընդհանրապես չկա:

Արձանագրված է առնվազն մեկ դեպք, երբ հայկական տառադարձության բառասկզբի «ը»-ն քերականական առումով անտեղին է, քանի որ չի համապատասխանում դասական ասորերենի բառասկզբի երկու բաղաձայնների միջև առկա շվա-ին: Խոսքը երեք անգամ գործածված ըմմա «հարյուր» բառի մասին է, որը դասական ասորերենում ունի mo տեսքը: Ըստ ամենայնի, այս բառի տառադարձությունը դժվարություններ էր առաջացնում, քանի որ ըմմա ձևի կողքին «Բաբելոնում» հինգ անգամ գործածված է մո տարբերակը: Վերջինս, իդեպ, տեսնում ենք «Բաբելոնում» հրապարակված ասորական բառացանկի մեջ, այսինքն պարբերականի խմբագրությունն առաջարկում էր այս համեմատաբար ճիշտ ձևը, թեև, ինչպես տեսնում ենք, չէր պնդում նրա պարտադիր գործածությունը:

Շվա-ի մետաթեզն արձանագրում ենք «Բաբելոնում» գործածված դասական ասորերենի b-, l- և d- կցական նախդիրներում, որոնց շվա-ն ավելանում է այն դեպքում, երբ նախդիրը կցվում է բառի՝ CV (բաղաձայն-ձայնավոր) կառուցվածք ունեցող առաջին վանկին (երկու բաղաձայնով սկսվող բառերին կցվելիս, նախդիրի շվա-ն վերածվում է [ա] ձայնավորի): Այսպես, դասական ասորերենի ḥaḍ b<sup>o</sup>šabo «կիրակի» բառը «Բաբելոնում» տառադարձված է որպես հայր ըպշապօ: Նույն սկզբունքով ḥameš b<sup>o</sup>šabo «հինգշաբթի» բառը երկու անգամ հանդես է գալիս համշօ ըպշապօ տառադարձությամբ, թեև պարբերականի բոլոր տիտղոսաթերթերի վրա անընդհատ վերարտադրվում է համշօշիպօ տարբերակը և սա այն պարագայում, երբ շաբաթվա օրերը պարունակող բառացանկը շաբաթվա բոլոր օրերի համար «հանձնարարում» է ըպշապօ բաղադրիչը:

Այս նույն նախդիրի [ա] ձայնավորով տարբերակը հինգ անգամ գործածված է ապունր պաշմայն (պաշմատօ) «Հայր մեր» աղոթքի անվան մեջ:

l- կցական նախդիրը տեսնում ենք մէն ըլլէլ մէն ըլքօ պարբերաբար գործածվող արտահայտության ըլլէլ «դեպի վերև» (դասական ասորերենում՝ l<sup>o</sup>el) և ըլքօ «դեպի այս-

տեղ» (դասական ասորերենում՝ I<sup>o</sup>ko) բառերում: *Ըլլէլ* բառը հետաքրքրական է նաև իր կրկնված «լ»-ով, որով, հավանաբար, «հատուցվում» է կոկորդային «է»-ի կորուստը: Նույն նախդիրը մետաթեզով գործածված է *Շուպիո ըլ թույօ* «Փառաբանություն բարեպաշտին» շարականի անվան մեջ, սակայն գրված է *թույօ* բառից առանձին: «Բաբելոնում» երկու անգամ հանդիպում է նաև նույն շարականի անվան *Շուպիօլ թույօ* տառադարձությունը, որում կցական նախդիրը, նույնպես խախտելով դասական ասորերենի քերականության նորմերը, կցվել է առաջին բառի վերջնամասին:

d- ստացական-հարաբերական մասնիկը ստացական իմաստով «Բաբելոնում» գործածված է միայն բազմիցս հանդիպող *մավորնութօ տաստրօտօ* «Նորություններ ասորիների մասին» կապակցության մեջ: *Տաստրօտօ* ձևը ճիշտ է վերարտադրում դասական ասորերենի այն կանոնը, ըստ որի, կցվելով «ալաֆ» տառով սկսվող բառին, մասնիկն իր վրա է վերցնում նրա ծայնանիշը: Սակայն «Բաբելոնում» առնվազն երեք անգամ այս նույն կապակցությունում տեսնում ենք *ըտԱստրօտօ* չարդարացված գրությունը, ընդ որում մեկ անգամ *ըտ* մասնիկը գրված է անջատ (*մավորնութօ ըտ Աստրօտօ*)՝ այնպես, ինչպես վերը նշված *Շուպիօ ըլ թույօ* բառակապակցության մեջ *ըլ*-մասնիկը: Առնվազն երկու անգամ այս բառակապակցությունը գործածված է ընդհանրապես առանց մասնիկի՝ *մավորնութօ տաստրօտօ* տեսքով:

Հարաբերական իմաստ ունեցող d- մասնիկը տեսնում ենք միայն «Հայր մեր» աղթքի անվան մեջ, որը դասական ասորերենում ունի 'abūn d<sup>o</sup>-ba-šmayo (բառացիորեն՝ «Հայր մեր, **որ** երկնքում ես») տեսքը, սակայն «Բաբելոնում», ինչպես տեսանք, միշտ հանդես է գալիս *ապունտ պաշմատօ* կամ *պաշմայն* տառադարձությամբ, այսինքն՝ հարաբերական մասնիկը սխալմամբ կցվել է *ապուն* բառին (նույն երևույթն արդեն տեսանք *շուպիօլ* բառում). «ճիշտ» ձևը պետք է լիներ *ապուն ըտպաշմատօ*: Քանի որ խոսքը քրիստոնեական գլխավոր և առավել հաճախ գործածվող աղթքի մասին է, որը խարբերոցի ասորիների ճնշող մեծամասնությունն անգիր գիտեր, ապա կարելի է ենթադրել, որ *ապունտ պաշմայն*-ը ավանդականորեն գործածվող կայուն ձև էր:

### 3.6.6. Ավանդական արտասանության պահպանումը

Ինչպես նշել էինք, արևմտյան ասորիների միջավայրում ընդունված դասական ասորերենի ընթերցման ավանդական եղանակում պահպանվում է *bagad-kapat* խմբին պատկանող «դոլաթ» և «թավ» տառերի միջատամնային արտաբերումը: Բացի այս երկուսից՝ երկակի արտասանությունը պահպանվում է նաև «գոմալ» և «քաֆ» տառերի պարագայում: Ինչ վերաբերում է մյուս երկու տառերին, ապա «բեթ» տառը միշտ ընթերցվում է [b], իսկ «պե» տառը՝ միշտ [p]:

«Բաբելոնում» ամենուր տեսնում ենք «բեթ» տառի ավանդական [b] արտասանության պահպանում: Այսպես՝ դասական ասորերենի 'abūn «Հայր մեր» բառը տառադարձված է որպես *ապուն*, sobo «ծեր» բառը՝ *սոպո*, dībo «գալլ»՝ *դիպո* և այլն: «Բեթ» տառի տառադարձում հայերենի «վ» տառով արձանագրված չէ:

«Պե» տառի որպես [p] արտաբերման սկզբունքը խախտված է 'alpe «հազար» բառում, որը տառադարձված է *էլփէ*: Մյուս բոլոր դեպքերում տեսնում ենք «ֆ» տառով տառադարձում («Ֆեդրոս»՝ «Պեդրոսի» փոխարեն, «Ֆավլոս»՝ «Պավլոսի» փոխարեն):

«Քաֆ» տառի պարագայում տեսնում ենք դասական ասորերենի շփական [k]-ի տաճադարձումը հայերենի «ք»-ով *քլքո* «դեպի այստեղ» բառում՝ դասական ասորերենի 𐎧𐎫𐎠 Թևի դիմաց: Մնացած դեպքերում դասական ասորերենի արտասանությունը ճիշտ է վերարտադրված:

«Գոմալ» տառը «Բաբելոնում» հանդիպում է միայն որպես հենց այս տառի անուն՝ *կոմալ* տառադարձությամբ:

Արևմտյան ասորիների կողմից ընդունված դասական ասորերենի ընթերցման եղանակին բնորոշ է նաև *պփախա* ձայնանիշով նշվող [a] ձայնավորը [o]-ի վերածելը (*zumara* < *zumoro*), որը պայմանավորված է արդի արևմտյան արամեական բարբառների ազդեցությամբ: Այս սկզբունքի շնորհիվ է, որ դասական ասորերենի գոյականների, ածականների և թվականների [a] ավանդական վերջավորության փոխարեն «Բաբելոնում» գրեթե միշտ հանդիպում է [o]: Արձանագրել ենք այս սկզբունքի խախտման հետևյալ օրինակները՝ *ռուպթա*, *համշօշիպա*, *հաշիպա*, *մըգրա*, *ըմնա*, *շաբթա*: Այս «սխալ» ձևերը գործածված են մեկական անգամ, և այս նույն բառերը պարբերականում հիմնականում հանդես են գալիս [o] վերջավորությամբ: *Մաեո* բառի պարագայում տեսնում

ենք «օ» վերջավորություն, մինչ դասական ասորերենում այս բառն ունի հոգնակի թվի «է» վերջավորություն:

Բառամիջում այս սկզբունքը խախտված է ամիսների *եսր*, *թամուգ*, *քէնունը*, *հազիրան* անվանումներում, որն, ամենայն հավանականությամբ պայմանավորված է թուրքերենում նույն բառերի գոյության ազդեցությամբ:

«Բաբելոնում» պահպանված է ավանդական արտասանությանը բնորոշ բաղաձայնների կրկնակության վերացումը: Այսպես՝ վերը դիտարկված *հաթիրո* բառում՝ բացի բառավերջի «օ»-ից, տեսնում ենք մեկ «թ», մինչ դասական ասորերենի ձևն է *attiro*: Այլ օրինակներն են՝ *այքանո* ('aykanno), *էթքանաշ* ('etkannaš), *ըթրայոնո* (t<sup>o</sup>rayyono), *հապիպո* (ḥabbībo), *շմաեո* (š<sup>o</sup>mayyo) և այլն:

Սույն գլխում թվարկված օրինակներից մեկ անգամ ևս երևում է, որ «Բաբելոնը» չուներ ասորական բառերի տառադարձության հստակ ստանդարտ: Նույնիսկ այն բառերը, որոնք ներկայացված են բառացանկերում և ուղեկցված են դրանք յուրացնելու հորդորով, այլուր կարող են գործածվել տարբեր գրությամբ, ինչպես համոզվեցինք «հարյուր» և «հինգշաբթի» բառերի պարագայում, որոնց «հանձնարարելի» *մո* և *համշո ըպշապո* ձևերի կողքին տեսնում ենք միանգամայն տարբեր *ըմմա* և *համշոշիպո* տարբերակները: Սա նշանակում է, որ հանձն առնելով ծանոթացնել ընթերցողին ասորական բազային բառապաշարին՝ պարբերականը բժախնդիր չէր տառադարձության հարցում և ամենևին չէր հետապնդում հայատառ ասորերենի ստանդարտ մշակելու նպատակ: Հետևաբար, յուրաքանչյուր հոդվածագիր ինքնուրույն էր լուծում տառադարձության հարցը, իսկ խմբագրությունն աչք էր փակում աննշան և ոչ էական համարվող տարբերությունների վրա:

### 3.7. Ասորական բառերի ինտեգրումը հայկական տեքստի մեջ

Ձևաբանական առումով «Բաբելոնի» մեջ արձանագրված ասորական բառերը չեն տարբերվում հայկական բառերից, այլ կերպ ասած՝ ասորական բառերը պարբերականում գրեթե ամբողջությամբ ենթարկված են հայերենի ձևաբանական նորմերին: Նախ հարկ է նշել, որ հայերենում սեռի քերականական կարգի բացակայությունն իսպառ վերացրել է սեռի ավանդական դրսևորումներն ասորական բառերի որոշ խմբերում, առա-

ջին հերթին՝ թվականներում, որոնց դասական ասորերենի երկու սեռերին պատկանող զույգերի դիմաց «Բաբելոնում» տեսնում ենք միասնականացված ձև, որում հայերենի թվականին համապատասխանում է ասորական թվականի մեկ ձև:

«Բաբելոնում» գտնում ենք գոյականին ածականի կցման երկու նմուշ: Դրանցից մեկում՝ *մավրոնութո ասուրոեո* «ասորական լուրեր», որը *մավրոնութո տրասուրոեո* «ասորիների նորություններ» արտահայտության տարբերակն է, իգական սեռի գոյականին կցված է արական սեռի ածական, որը դասական ասորերենի քերականության տեսանկյունից կոպիտ սխալ է: Սակայն Խարբերդի հայախոս ասորիների համար, որոնք դժվար թե ըմբռնելիս լինեին *մավրոնութո* բառի իգական սեռին պատկանելը (այստեղ հիշենք, որ սեռի կարգը բացակայում է նաև թուրքերենում) և, առավել ևս՝ ի վիճակի լինեին կազմել *ասուրոեո* ածականի իգական սեռի ձևը, այս կապակցությունը պետք է միանգամայն ընդունելի լիներ:

«Բաբելոնում» «ածական-գոյական» երկրորդ կապակցությունը «Կարմիր խաչ» ընկերության անվանումն է, որում դասական ասորերենին բնորոշ «որոշյալ-որոշիչ» հերթականության փոխարեն տեսնում ենք հայերենին բնորոշ «որոշիչ-որոշյալ» շարահասություն (*սումոխո սլիպո*, պետք է լիներ՝ *սլիպո սումոխո*): «Բաբելոնում» *սումոխո սլիպո* կապակցությունը գործածված է երեք անգամ, ընդ որում, երկու դեպքում հայատառ ասորերենին հետևում է կազմակերպության անվանումն ասորատառ:

Դրա հետ մեկտեղ՝ ասորերենում իգական սեռին պատկանող գոյականները հայկական տառադարձության մեջ պահպանում են համապատասխան վերջավորությունը, ինչպես՝ *քենութո*, *մավրոնութո*, *շուրթոֆութո* և այլ բառերում: Այս վերջավորություններն, անկասկած, ընկալվում էին որպես այս կամ այն բառի անքակտելի մաս՝ առանց գիտակցելու նրա քերականական գործառույթը: Քանի որ, մատուցելով ասորական բառապաշար, «Բաբելոնը» որևէ փորձ չէր անում անդրադառնալ ասորերենի քերականությանը, ապա տարբեր սեռերին պատկանող բառերի ձևաբանական տարբերություններին ծանոթանալու միակ հնարավորությունն ընթերցողն ուներ միայն վերջին բառացանկում իրար հաջորդող «թագավոր»-«թագուհի» բառերի՝ ասորական *մալթո* և *մալթեթո* ձևերի համեմատությամբ:

Ինչպես նշվեց, ընդգրկվելով հայկական տեքստի մեջ, ասորական բառերը հեշտությամբ փոխարինում են համապատասխան հայկականները, ինչպես՝ «ըթլթթ ու կես» (երեք ու կես), «հարյուրէն թէշօ (հարյուրից ինը), «ըթլթթ հարյուր» (երեք հարյուր), «յոթանասուն համշօ» (յոթանասուն հինգ), «ըթրէյն եավմօ առաջ» (երկու օր առաջ), «կաթիլ մը մատօ» (մի կաթիլ ջուր), «այքանօ որ այժմ կուզեն» (ինչպես որ այժմ ուզում են):

Հայերեն տեքստի մեջ ասորական բառերի ազատ ինտեգրումը լավագույնս երևում է ասորական բառերին հայկական հոլովական վերջավորությունների կցումից: Գործածվելով նախադասության մեջ համապատասխան հայկական բառի փոխարեն՝ ասորական բառերը հեշտությամբ ընդունում են համապատասխան հոլովական վերջավորությունը: Սա, իհարկե, պայմանավորված է ոչ թե ասորական բառերի առանձնահատկություններով, այլ նրանով, որ հայերենը (ի տարբերություն, օրինակ, ռուսերենի) հեշտությամբ ընդգրկում է օտար բառերն իր հոլովական համակարգի մեջ: Օրինակ՝ «ամսույս էսրօին» (սույն ամսվա տասին), «ըթլթթօյէ ավելի» (երեքից ավելի), «մատօյեն կախում ունի» (ջրից կախում ունի), «կես օրեն վերջ ժամը ըթլթթօին (երեքին) տեղի ունեցավ դատավարությունը և մինչև համշօ ըպշապօ (հինգշաբթի) օրը վերջացավ», «օտրօր (մարտ) 14-ին հատր ըպշապօ (կիրակի) օրը կեսօրե վերջ ժամը հատրին (մեկին)», «որոշված եավմօն, նույն ժամուն քուլլը ժողովուրդը էթքանաշ» (որոշված օրը, նույն ժամին ամբողջ ժողովուրդը հավաքվեց): Վերջին օրինակը հատկապես արժեքավոր է, քանի որ նրանում տեսնում ենք «Բաբելոնում» հազվադեպ հանդիպող բայ, ընդ որում, ինչպես նշել էինք, սա միակ դեպքն է, երբ դասական ասորերեի էթքանաշ բայը ճիշտ է գործածված: Այս նույն նախադասության մեջ ունենք նաև ասորական բառին հայերենի որոշիչ հոդի կցման նմուշ՝ եավմօն:

Ամբողջությամբ վերարտադրենք *Մավդօնույթօ տրասուրօյօ* բաժնից մի հաղորդագրություն, որը տալիս է ասորական լեզվանյութի ինտեգրման մի քանի օրինակներ.

«Ասորիները Տիթրոյթի մեջ: - *Ըմեագրո* [հարգելի] Տավուտ Էլպի կը հաղորդէ, որ *քէնունը ըհրօյ* [հունվար] *ըթմօնասար* [18] *հատր ըտր շապօի* [կիրակի] *եավմօ* [օր] ժամը *թէշօին* [իննին] Rev. Joel E. Werda Տիթրոյթ ժամանեց և H.P.Mich-ի Y.M.C.A.-ի ժողովասրահը բուռն բազմության մը ներկայության խոսեցավ վեհա-

ժողովի առջև ասորվոց իրավունքներուն նկատմամբ նախ ասորերեն, և ապա խնդրանքիս վրա խոսեցավ անգլերեն<sup>210</sup>: *Ըթրայոն* [երկրորդ] բանախոսն ըլլալուս Ասորեստանի մեր եղբայրներուն և քույրերուն խղճալի վիճակը ներկայացվելով սկսա *էսրին ըթմօնեօ* [28] դուլարով, *ափօրիլ* [եղբայրս] Հաճի Եավնան Էլպի նույն գումարը բարդեց և Հաճի Աղապապ Չէվիր *համշօ ըսար* [15] և այսպես քիչ ժամանակէն հավաքվեցավ *ըթլօթ մոօ ըթլօթին* [330] դուլար»:

### **3.8. Ասորական գիրը «Բաբելոնում»**

Թեև ասորական լեզվանյութը «Բաբելոնում» գերազանցապես հայատառ է, ասորական գիրը նրանում պարբերաբար գործածվել է: Նախ և առաջ դա վերաբերում է ասորատառ օսմաներենով գրված հողվածներին, որոնք, ինչպես և «Բաբելոնի» հայատառ թուրքերենի նմուշները, սույն ուսումնասիրության շրջանակից դուրս են: Կրկնենք միայն, որ ասորատառ օսմաներենը լայնորեն գործածվում էր Օսմանյան կայսրության ասորիների կողմից, հատկապես՝ թրքաքոս և քրդախոս, ինչպես նաև գործածվում էր Ասորի ուղղափառ եկեղեցու ներքին գրագրությունում: Ասորատառ օսմաներենով էր լույս տեսնում Աշուր Յուսուֆի կողմից Խարբերդում հրատարակվող *Մյորշիդ-ի-ասուրի-յուն* («Ասորիների ուղեցույց») պարբերականը:

#### **3.8.1. Ասորական պատմաաշխարհագրական տեղանուններ**

Դրանք երկուսն են: Նախ դա պարբերականի անունը հանդիսացող *ՍԵՅ – բաբել – «Բաբելոն»* բառն է, որն առկա է պարբերականի բոլոր տիտղոսագլուխների և տիտղոսաթերթերի վրա, ինչպես նաև այն էջերի վերևում, որոնք, մինչև տիտղոսաթերթերի ի հայտ գալը, պարունակում էին համարի բովանդակությունը: Հետաքրքրական է, որ այս բառի առաջին երեք տառերը պատկերված են էսթրանգելա տառատեսակով, որը հաճախ գործածվում է հենց վերնագրերի համար, մինչ վերջին տառը արևմտյան հակո-

<sup>210</sup> Խոսքն այս պարագայում արևելյան ասորիների մեջ տարածված արդի գրական արամեերենի մասին է, որը հասկանալի չէր Խարբերդի ասորիներին, ուստիև հողվածագիրը խնդրում է բանախոսին անգլերեն խոսել:



բիկների կողմից գործածվող սերտո տառատեսակով է (այստեղ վերարտադրում ենք այնպես, ինչպես պարբերականում է): Ամենայն հավանականությամբ, սա հրատարակիչների կողմից ասորական տառատեսակների նրբություններից անտեղյակ լինելու արդյունք է:

Նույն բառը նույն գրությամբ երկու անգամ գործածված է Ա-5 համարում, Ճ.Խ. տառերով ստորագրված «Ազգայինք» հոդվածում: Ինքնին հետաքրքրական է նախադասությունը, որում գործածված է այդ բառը. «Թիվ 1-2-3 𐤀𐤁𐤂 անունով լույս տեսած թերթը ինձ հասնելով, աննկարագրելի ուրախություն պատճառեց անոր առաջին էջի վրա արտատպված 𐤀𐤁𐤂 բառը»: Վերարտադրելով տիտղոսագլխի վրա տպված բառը, հոդվածի հեղինակը կամ այն արտագրած խմբագիրը, կրկնում են նրա մեջ առկա տառատեսակների խառնաշփոթը:

Ասորատառ *բաբել* բառը տեսնում ենք Ա-11 համարի Նուրի Խորիի «Ձահլեէն լուրեր» հոդվածում, ուր այն արդեն ամբողջությամբ գրված է սերտո տառատեսակով (𐤁𐤁): Այն գործածված է մեր կողմից արդեն մեկ անգամ մեջբերված հետևյալ նախադասությունում. «Ադանայեն, Մոսուլեն, Դիարբեքիրեն, Ուրֆայեն, Շամեն և բոլոր տեղերեն գալած նամակները «ասորեն թերթ, թերթ» կըսեն կը մեռնին ու շատերը երբ հոս կուզան և «Բաբելոն»ի մեջ ասորեն բառ մը կը հանդիպին կամ 𐤁𐤁 բառը կը տեսնին կարծես երկրպագություն է կ'նեն»: Այսինքն, ինչպես և նախորդ օրինակում, խոսքը հենց պարբերականի տիտղոսագլխի վրա տպված ասորատառ «Բաբելոն» բառի մասին է, որն ինքնին առաջացնում էր ասորի ընթերցողների խանդավառությունը:

Այս խմբին պատկանող երկրորդ բառը «Բաբելոնում» սովորաբար գործածվում է հայատառ տեսքով՝ *Պէթնահրէն, Պէթ Նահրէյն* և այլ տարբերակներ և նշանակում է «Միջագետք»: Այս բառը գործածվում է որպես ասորական ազգային բնօրրանի անվանում: Բառի ասորատառ տարբերակը՝ 𐤁𐤁𐤂 𐤁 գործածված է միայն Ա-18 համարի «Նամակ Ուրֆայեն» հոդվածում, որը թարգմանաբար վերարտադրված է ասորական թրքալեզու *Բեթնահրեն* թերթից: Բառին հետևում է 𐤁𐤁𐤂𐤁 բառը, որն ասորատառ թուրքերեն է և նշանակում է «թերթ» (*Բեթնահրեն ջարիդեսի*):

### 3.8.2. Ասորական վանքերի, եկեղեցիների և գյուղերի անվանումներ

Այս խմբին պատկանող բոլոր նմուշները գտնում ենք Ա-11 համարում լույս տեսած Նուրի Խորիի «Ձահլեէն լուրեր» հոդվածում:

ܩܘܪܝܢܐ - դեյրուզաֆրան - «Ձաֆրանի վանք», ասորական նշանավոր վանք Տուր Աբդինում, որը գործում է մինչև օրս: Ասորատառ այս բառը գործածված է երկու անգամ, ընդ որում, ուղեկցված չէ հայերեն տառադարձությամբ կամ թարգմանությամբ:

ܩܘܪܝܢܐ - արբըին (անընթեռնելի)- «Քառասուն?» - խոսքն, ամենայն հավանականությամբ, Մարդինի «Քառասուն մանկանց» ասորական նշանավոր եկեղեցու մասին է: Տեքստում այս բառին նախորդում է ասորա-թուրքական *Արպըերն Շահիպ* («Քառասուն նահատակ») հայատառ կապակցությունը և հաջորդում եկեղեցու հայկական անունը՝ «Քառասուն մանկանց եկեղեցի»):



ܩܘܪܝܢܐ - գյուղի անուն, որը հայերեն տառադարձված է որպես *Գըլլաթ*:

### 3.8.3. Կազմակերպությունների և հաստատությունների անուններ

ܩܘܪܝܢܐ - «Կարմիր խաչ» - հայերեն տառադարձված է *սոււմօխօ սլիպօ*: Գործածված է Ա-9 համարում լույս տեսած Ճօռճ Մ. Գօյունի «Կանաց բաժինը» հոդվածում, ընդ որում, ինչպես նշել էինք, թե՛ ասորերենում և թե՛ հայերենում խախտված է ասորերենի շարահյուսությամբ պահանջվող որոշյալ-որոշիչ հաջորդականությունը (պետք է լիներ *սլիպօ սոււմօխօ*): Սա վկայում է, որ հոդվածագիրը, իմանալով «խաչ» և «կարմիր» բառերը, չունեի ասորերենի քերականության բավարար իմացություն դրանք իրար ճիշտ կապելու համար և պարզապես հետևել է հայերենի շարահյուսությանը: Այստեղ նշենք, որ ասորերեն Տերունական աղոթքը, որը Խարբերդի ասորիներն անգիր գիտեին, չի պարունակում որոշյալ-որոշիչ ոչ մի կապակցություն և չէր կարող ասորիներին հուշել շարահյուսական ճիշտ կառուցվածքը:


Հոդվածում հայերեն տառադարձությունը գործածվում է ևս մեկ անգամ՝ *սոււմօխօ սլիպօ շուրթօֆուրթօ*՝ «Կարմիր խաչ ընկերություն» ընդլայնված տեսքով, առանց ասորատառ տարբերակի: *Սոււմօխօ սլիպօ* կապակցությունը գործածված է նաև նույն համարի Նուրի Խորիի վերոհիշյալ «Ձահլեէն լուրեր» հոդվածում, ապա *սոււմօխօ ըսլիպօ*


տարբերակով՝ նրա նույնանուն հոդվածում Ա-11 համարում: Թեև Նուրի Խորին ցուցաբերում է ասորական տառեր գործածելու հակում, նրա մոտ *սուժոխո (ը)սլիպո* կապակցությունը չի ուղեկցվում ասորատառ տարբերակով:

 – հայերեն տառադարձված է *Մար Ճոճիս*, որը նշանակում է «Սուրբ Գևորգ»: Սա դամասկոսաբնակ ասորիների միության անունն է, որը հիշատակում է նույն Նուրի Խորին «Չահլէեն լուրեր» հոդվածում (Ա-11): Այս պարագայում, ըստ էության, գործ ունենք գարշունիի հետ, քանի որ դասական ասորերենը չուներ «ջ» հնչյուն և այն արտահայտելու համար գարշունիում գործածվում էր կետով «գամալ» տառը ():

### 3.8.4. Անձնական անուններ

Քանի որ ասորական գրի հետ ծանոթությունը լայն տարածում ուներ Խարբերդի ասորիների մեջ, թվում է, թե նրանք պետք է հաճախ գործած լինեին այն իրենց անունները գրելու համար: Զարմանալիորեն, «Բաբելոնում» արձանագրում ենք անվան համար ասորական գրի գործածության միայն երկու դեպք (չհաշված ասորատառ թուրքերենով գրված մի քանի հոդվածները):

Դրանցից առաջինը Նաում Բեշարովի անունն է՝ , որն էսթրանգելա տառատեսակով տպված է նրա լուսանկարի տակ՝ Բ-1 համարում: Քանի որ ասորերենը չունի «վ» հնչյուն, ապա այն այստեղ փոխարինված է «ֆ» տառով, իսկ «ո» ձայնավորը նշված է «վավ» տառով, որն արևմտյան ասորիների մոտ սովորաբար նշում է «ու» ձայնավորը: Ելնելով սրանից՝ հայերենի հետ անձանոթ գիտնականները ենթադրել են, որ «Բաբելոնի» երկրորդ խմբագրի ազգանունը եղել է «Բեշարուֆ»<sup>211</sup>:

Երկրորդ նմուշը տեսնում ենք Բ-6 համարում, որի «Ամսական ժողով» հոդվածի տակ գտնում ենք հեղինակի անունը թե՛ հայերեն՝ Էլիա Տոնապետ, և թե՛ ասորերեն՝ :

<sup>211</sup> Ինչպես արդեն նշել էին, «Բեշարով» ճիշտ ձևը հաստատվում է ԱՄՆ մարդահամարի գրանցումներով, որտեղ տառադարձված է Besharov:

### 3.8.5. Կրոնական արտահայտություններ

حزب مهلاوې - «Օրինյալ է ծնունդը մեր Տիրոջ»: Գործածված է Բ-1 համարի «Նոր տարին» վերնագրված խմբագրականում, որը գրել է նորանշանակ գլխավոր խմբագիր Նաում Բեշարովը: Ընդ որում, արտահայտության երկրորդ և երրորդ բառերը սխալ են գրված, պետք է լինի՝ حزب مهلاوې քրրիխ մաուլըդեհ դը-մոռան, այսինքն մաուլը-դեհ դը- մասերը գրության մեջ միավորվել են գոյություն չունեցող مهلاوې ձևի մեջ:

Ասորական գրի ամենաառատ գործածություն գտնում ենք Ա-11 համարի «Ի՞նչ պետք է մեզ այսուհետև արշալույսից հետո» խմբագրականում: Թեև այն կրում է «Ա.Հ.Ընկ.» ստորագրությունը, այնուամենայնիվ հոդվածի արևելահայերենը կասկած չի թողնում, որ այն ևս դուրս է եկել Նաում Բեշարովի գրչի տակից: Հոդվածը պարունակում է ասորական տառերով գրված հետևյալ արտահայտությունները (հիմնականում Ավետարանից՝ աղավաղված)։

- حزب مهلاوې - «Օրինյալ է ծնունդը մեր Տիրոջ», գործածված է վերոնշյալ նույն սխալով: Արտահայտությանը հայերեն հետևում է «ձեզ ու մեզ մեծ ավետիք, Քրիստոս ծնավ ի սուրբ կույսեն»:
- مهلاوې للرحمة - արտահայտությանը հետևում է հայերեն տարբերակը՝ «Փառք ի բարձունս Աստծո»:
- مهلاوې و مهلاوې و مهلاوې - «Խաղաղություն և հաճություն և բարի հույս մարդկանց»: Նույն տողի վրա, հավանաբար, գրված է եղել մեկ այլ արտահայտություն, որը վնասվել է, և ընթեռնելի է միայն «ասաց», «խոսեց» բառը:
- مهلاوې و مهلاوې - «Եթե կամենում ես, հեռացրու ինձանից այս բաժակը»:
- مهلاوې و مهلاوې - «Հոգիս հոժար է, բայց մարմինս՝ տկար»:

Կրոնական բնույթի հաջորդ արտահայտությունը مهلاوې و مهلاوې «Քրիստոս հարյավ ի մեռելոց» (հայերեն այս տարբերակով էլ սկսվում է հոդվածը) գոր-

ծածված է որպես Բ-19 համարի աստվածաբանական բովանդակություն ունեցող խմբագրականի վերնագիր: Ինչպես նշել էինք, սա «Բաբելոնի» հայերեն միակ հոդվածն է, որի վերնագիրն ասորատառ է: Տիտղոսաթերթի վրա տպված բովանդակությունն այս արտահայտությունը պարունակում է հայերեն տառադարձությամբ՝ *Ըմշիհո խում մէն պեթմիթէ*, քանի որ տպարանը, ամենայն հավանականությամբ, ասորերեն տպագրել չէր կարող: Արտահայտությունը ևս երկու անգամ գործածված է հոդվածի մեջ: Թեև հոդվածը ստորագրված է «Ասորվոց Հնգ. Ընկերություն», այնուամենայնիվ նրա լեզուն մատնում է հեղինակին, որը նույն ինքը՝ Նաում Բեշարովն է: Այս ընդարձակ հոդվածի շարունակությունը տպված է հաջորդ երկու համարներում, ընդ որում Բ-20 համարում կրկին տեսնում ենք ասորատառ *ܐܘܪܘܟܝܢ ܡܥܘܣܪܝܢ* վերնագիրը: Բ-21 համարում հոդվածը նախորդված է «Շարունակություն նախորդ թվից» բառերով, թեև տիտղոսաթերթի բովանդակության մեջ երրորդ անգամ տեսնում ենք *Ըմշիհո խում մէն պեթմիթէ* տառադարձությունը:

Այն հանգամանքը, որ ասորատառ այս բոլոր արտահայտությունները զետեղված են Նաում Բեշարովի կրոնաաստվածաբանական բնույթի հոդվածներում ևս մեկ անգամ հաստատում է նրա՝ Ասորի ուղղափառ եկեղեցու սարկավագ լինելը: Եկեղեցական կյանքի հետ անմիջական առնչություն չունեցող խարբերոցի ասորուց դժվար թե կարելի էր ակնկալել ոչ այնքան լայն տարածում ունեցող ավետարանական մեջբերումների իմացություն, առավել ևս՝ ասորական գրով դրանք վերարտադրելու կարողություն և հակում:

Բ-18 համարի «Լավ է ուշ, քան երբեք» վերնագրված խմբագրականում, որը ստորագրված է «Ասորվոց Հ. Ընկերություն», բայց կրկին պատկանում է Նաում Բեշարովին, հիշատակված է ասորական մի շարական, որի ասորատառ անվան մեջ կարելի կարդալ *ܡܥܘܣܪܝܢ* «առաքյալ» բառը: Երկրորդ բառի ասորական գիրն այնքան աղավաղված է, որ ընթեռնելի չէ:

### **3.8.6. Ասորական տառերի գործածումը պարբերություններ նշելու համար**

Ինչպես նշվեց 3.4.1. պարբերությունում, «Բաբելոնի» երկու հոդվածներում որպես պարբերությունների նշաններ գործածված են ասորական տառերի հայատառ անունները:

